Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Փետրվար

թիվ 2 (198)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները մի շարք ՍՊԸ-ների գրավատների կազմակերպման և արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու և «ՎԻԱ-ԳՈԼԴ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «էկլօֆ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի «էջմիածին» ներկայացուցչությունը և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի «Կապան» մասնաճյուղը գրանցելու, ինչպես նաև 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 9 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 8Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 312-Ն որոշումը «Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման և թողարկման կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/27-ը հաստատելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 349-Ն որոշումը «Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից», «Փանոս Թերլեմեզյան-150» և «Անդրանիկ Օզանյան-150» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 350-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 351-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

29 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 352-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 353-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

46 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 354-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

54 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 355-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

58 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 356-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

61 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 357-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

64 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 358-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

67 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 359-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

70 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 361-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 4-ի թիվ 135-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

74 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 362-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 738-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

75 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 363-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

82 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 377-Ն որոշումը «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգը» հաստատելու մասին»

117 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 1-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

119 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 2-Ն որոշումը «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 73-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

134 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 3-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»

135 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 6-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

137 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 10-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

142 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 11-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 534-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

151 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 12-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

162 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 17-Ն որոշումը «Սրբալույս Մյուռոնի կաթսա» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

164 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Գառանտ Կրեդիտ», «Մ.Մ.ՆԻԿԱ», «Գրավ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատների կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 25Ա, 27Ա, 42Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Ֆրեշ», «ՎԵԼԼԻ ԲԵՅ» և «Ֆելիքս-Սարգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 26Ա, 28Ա, 41Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «ՎԻԱ-ԳՈԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 29Ա):
- ***Գրանցվել են*** «էկլօֆ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Էջմիածին» ներկայացուցչությունը և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Կապան» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/71Ա, 1/123Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 2000000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/106Ա) և 9 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/49Ա-1/53Ա, 1/86Ա, 1/91Ա, 1/92Ա, 1/107Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 8Ա որոշմամբ 2015 թ. փետրվարի 11-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 14.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 9.0%:***

«Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման և թողարկման կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/27-ը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով սահմանել կենսաթոշակային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման և նոր փայերի (բաժնետոմսերի) թողարկման կասեցման հիմքեր, որոնք կարող են նախատեսվել կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ),

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 10-րդ մասի 2-րդ կետը, 64-րդ հոդվածի 5-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել «Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման և թողարկման կասեցման հիմքերը» կանոնակարգ 10/27-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 նոյեմբերի 2014 թ., N 312-Ն

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 312-Ն որոշմամբ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ _____ Արթուր Ջավադյան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 955-Ն հրամանով
_____ Գագիկ Խաչատրյան
27 դեկտեմբերի 2014 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/27

«ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՅԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը կարգավորում է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից պարտադիր և կամավոր կենսաթոշակային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման, ինչպես նաև պարտադիր կենսաթոշակային ֆոնդի նոր փայերի թողարկման կասեցման այն հիմքերը, որոնք կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները կարող են նախատեսել ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ):

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով կիրառվող նշանակությունը:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. նոյեմբերի 18-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.02.2015 թ. (ՀՀՊՏ N5 (517)[1], 16.02.2015):

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱԴԻՐ ԵՎ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԵՐԻ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ) ՀԵՏԳՆՄԱՆ (ՄԱՐՄԱՆ) ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) կարող է նախատեսել ֆոնդի մասնակիցների շահերը վտանգող ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման միայն հետևյալ հիմքերը.

1) ***կարգավորվող շուկաների բնականոն գործունեության դադարում կամ շուկայի ձախողումներ (այդ թվում՝ գործարքների կնքման սահմանափակումների կիրառում):*** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման այս հիմքն առկա է այն ժամանակ, երբ շուկայի վրա ազդում են այնպիսի անկանխատեսելի իրադարձություններ, որոնք խափանում են կարգավորվող շուկայի գործունեության բնականոն ընթացքը և (կամ) առաջացնում են շուկայի ձախողումներ (անկայունություն), որն էլ անհնար է դարձնում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների արժեքի ճշգրիտ որոշումը կամ ֆոնդի ակտիվների վաճառքը՝ փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) գումարը փոխհատուցելու համար: Ընդ որում, եթե կարգավորվող շուկաների բնականոն գործունեության դադարեցումները, շուկայի ձախողումները չեն ազդում կենսաթոշակային ֆոնդի ակտիվների էական մասի վրա, այս դեպքում փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցումը կարող է հիմնավորված չլինել:
2) **Գործառնական խնդիրների կամ տեխնիկական ձախողումների առաջացում:** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման համար հիմք հանդիսացող իրավիճակներ կարող են համարվել գործառնական խնդիրները կամ տեխնիկական ձախողումները, որոնք կարող են ժամանակավորապես խոչընդոտել ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացումը, ուստի՝ ազդել կենսաթոշակային ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի վրա: Բացի այդ, երրորդ անձինք, որոնք գործում են կենսաթոշակային ֆոնդի անունից և հաշվին, նույնպես կարող են առաջացնել կենսաթոշակային ֆոնդի ակտիվների շուկայական արժեքի վրա ազդող գործառնական խնդիրներ:
3) ***Իրացվելիության խնդիրների առաջացում:*** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմք կարող են հանդիսանալ այն դեպքերը, երբ կենսաթոշակային ֆոնդում առկա դրամական միջոցները բավարար չեն փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) համար, և կենսաթոշակային ֆոնդի ակտիվները կարող են վաճառվել զգալի կորուստներով:
4) ***Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) արդյունքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքը էապես կնվազի և (կամ) կնվազի օրենքով որոշված կարգով նախատեսված ֆոնդի զուտ ակտիվների նվազագույն մեծությունից:***
5) ***Այլ գործոններ:*** Փայերի (բաժնետոմսերի) հետգնման (մարման) կասեցման հիմք կարող են հանդիսանալ նաև բնական աղետները, ինչպես նաև այն գործոնները, որոնք անհնար են դարձնում կենսաթոշակային ֆոնդի զուտ ակտիվների արժեքի որոշումը, ֆոնդի ակտիվների գնահատումը, տնօրինումը և (կամ) դրանց գծով եկամուտների ստացումը:

ԳԼՈՒԽ 3.ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը ֆոնդի կանոններով, որպես պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի թողարկման կասեցման հիմքեր, կարող է նախատեսել ֆոնդի մասնակիցների շահերը վտանգող՝ սույն կանոնակարգի 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված հիմքերը:

«Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից», «Փանոս Թերլեմեզյան-150» և «Անդրանիկ Օզանյան-150» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2015 թվականի փետրվարի 27-ից շրջանառության մեջ դնել «Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելից», «Փանոս Թերլեմեզյան-150» և «Անդրանիկ Օզանյան-150» հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունը, որոնք հուշադրամների էսքիզների հետ մեկտեղ ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2014 թ., N 349-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ 349-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 200-ԱՄՅԱԿ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Հովհաննես Լազարյանը, Լազարյան ճեմարանի շենքի աջ մասը և ճեմարանի շրջանավարտներին շնորհվող կրծքանշանը: Ներքևում՝ «2015» և «1000 դրամ», իսկ շրջագծով՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Հովակիմ Լազարյանը, Լազարյան ճեմարանի շենքի ձախ մասը և ճեմարանի հուշամեդալը: Շրջագծով՝ «200-ամյակ», «Լազարյան ճեմարանի հիմնադրում» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակ՝ էդուարդ Կուրղինյան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

«ԼԱԶԱՐՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 200-ԱՄՅԱԿ»
ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՍՔԻԶՆԵՐԸ





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողներ. սգվոր մոր հուշարձան (Իժևսկ), երգահան Կոմիտասին նվիրված հուշարձան (Փարիզ), խաչքար-հուշարձան (Էջմիածին), հուշասյուն-խաչքար (Գլենդել), Ծիծեռնակաբերդի հուշահամալիր (Երևան): Մակագրություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն», «100 դրամ», «Republic of Armenia» և «Armenian Genocide»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողներ. հուշարձան հայ հայդուկներին (Ուջան), հուշակոթողի մի հատված արծվի տեսքով (Հալեպ), հուշատախտակի մի հատված՝ կնոջ քանդակ (Սան Պաուլու), խաչքար (Անտվերպեն): Մակագրություններն են՝ «Հայոց ցեղասպանություն», «1915-2015»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	50,0 մմ
Քաշը	67,2 գ
Որակը	սովորական (հնաձև)
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	1000 հատ

էսքիզների հեղինակներ՝ Սուրեն Սիմոնյան և Արամ Ուռուտյան:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ»
ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՍՔԻԶՆԵՐԸ





ՆԿԱՐԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՓԱՆՈՍՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ-150» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Փ. Թերլեմեզյանի «Վանա լիճը և Սիփան սարը Կտուց կղզուց» կտավից դրվագ, ներքևում՝ «100 դրամ», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ 2015» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են դրվագներ Փ. Թերլեմեզյանի «Տաթևի վանքը» կտավից և ինքնադիմանկարից: Մակագրություններն են՝ «Փանոս Թերլեմեզյան 1865-1941», «150 ամյակ»:


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	28,28 գ
Չափը	28,0x40,0 մմ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Տպաքանակը	500 հատ

Էսքիզների հեղինակներ՝ Լուսինե Լալայան
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ՓԱՆՈՆ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ-150»
ՀՈՒՇԱՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՍՔԻԶՆԵՐԸ





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ-150» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Մակագրություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն», «Republic of Armenia», «1000 դրամ», «2015»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը կանգնեցված Անդրանիկի հուշարձանը: Մակագրություններն են՝ «Անդրանիկ Օզանյան», «Ես պայքարել եմ մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության եւ բարեկեցության համար», «1865-1927», «150 ամյակ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

էսքիզների հեղինակ՝ Լուսինե Լալայան:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ-150»
ՀՈՒՇԱԴՐԱՄԻ ԴԻՄԵՐԵՍԻ ԵՎ ԴԱՐՁԵՐԵՍԻ ԷՍՔԻԶՆԵՐԸ





Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկերի կողմից ներկայացվող հաշվետվությունների լրացման կարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. Թիվ 31 հաշվետվությունը ներկայացվում է հետևյալ կերպ. «Վճարային քարտերի տեսակների, վճարային քարտ սպասարկող սարքավորումների, ինչպես նաև վճարային քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ» հաշվետվությունը լրացվում և ներկայացվում է ամսական կտրվածքով և բաղկացած է չորս աղյուսակից: Հաշվետվության մեջ ընդգրկվում են տվյալներ՝ կապված հաշվետու բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտերի տեսակների, վճարային քարտ սպասարկող սարքավորումների տեղադրման վայրի, ինչպես նաև հայաստանյան և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված և Հայաստանի Հանրապետության տարածքում և արտասահմանում վճարային քարտերով կատարված գործառնությունների հետ:

1) Հաշվետվության առաջին՝ «ՀՀ բանկերի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտեր» աղյուսակում լրացվում է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ հաշվետու բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտերի վերաբերյալ տեղեկատվություն՝ տարանջատված ըստ տեղեկատվության պահպանման (գրառման) տեսակի, քարտապանների, վճարման սխեմայի և վճարային համակարգի, գումարի և քանակի: Ընդ որում.

ա. «Տեղեկատվության պահպանման տեսակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտի վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ ընտրելով համապատասխան տողը.

աա. «մագնիսական ժապավենով», եթե վճարային քարտը թողարկվել է միայն մագնիսական ժապավենի առկայությամբ,

աբ. «հիբրիդ», եթե վճարային քարտը թողարկվել է մագնիսական ժապավենի և չիպի միաժամանակյա առկայությամբ,

ագ. «միկրոպրոցեսորային», եթե վճարային քարտը թողարկվել է չիպի առկայությամբ,

ադ. «միկրոպրոցեսորային (NFC)», եթե թողարկված վճարային քարտը սարքինացված է NFC ընթերցող տվիչով,

աե. «վիրտուալ», եթե վճարային քարտը թողարկվել է բացառապես վիրտուալ (ինտերնետ) միջավայրում օգտագործման համար:

բ. «Քարտապանների տեսակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտի վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված դասակարգման, ընտրելով համապատասխան տողը՝ «ֆիզիկական անձ» կամ «իրավաբանական անձ/անհատ ձեռներեց», եթե վճարային քարտը թողարկվել է ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի/անհատ ձեռնարկատիրոջ համար համապատասխանաբար:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

գ. «Վճարային քարտի վճարման տեսակ/սխեմա» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտի սխեմայի վերաբերյալ տեղեկատվություն, ընտրելով համապատասխան տողը՝ «դեբետային», «հաշվարկային» և «վարկային», եթե վճարային քարտը թողարկվել է դեբետային, հաշվարկային կամ վարկային սխեմայով համապատասխանաբար:

դ. «Վճարային համակարգ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտի վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝ «ԱրՔա», «Վիզա», «Մաստերքարտ» և այլ, ընտրելով համապատասխան տողը, եթե վճարային քարտը թողարկվել է «ԱրՔա», «Վիզա», «Մաստերքարտ» և այլ համակարգի ապրանքանիշի տակ: Ընդ որում՝ «բանկի ներքին» տողը նշվում է, եթե վճարային քարտը թողարկվել է բանկի ներքին համակարգի ապրանքանիշի տակ, և «համատեղված», եթե վճարային քարտը թողարկվել է մեկից ավելի վճարային համակարգերի համատեղ ապրանքանիշերի տակ:

ե. «Գումար» սյունակում ներկայացվում է բանկի կողմից հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ թողարկված/տրամադրված վճարային քարտերին առկա և քարտապանին հասանելի միջոցների վերաբերյալ տեղեկատվություն (հազար ՀՀ դրամ): Ընդ որում՝ արտարժույթով թողարկված/տրամադրված քարտերի դեպքում գումարը լրացվում է հաշվետու ամսվա վերջին օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով հաշվարկված՝ արտահայտված ՀՀ դրամով:

զ. «Քանակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ թողարկողի կողմից տրամադրված վճարային քարտերի փաստացի քանակը (բացարձակ արժեք):

2) Հաշվետվության երկրորդ՝ «2. Վճարային քարտի սպասարկման սարքավորումներ/միջոցներ» աղյուսակում լրացվում է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ բանկի կողմից տեղադրված վճարային քարտեր սպասարկող սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն, տարանջատված ըստ սպասարկման սարքավորման/միջոցի տեղադրման վայրի, սարքավորման տեսակի, սարքավորման/միջոցի օգտագործման ձևի և սարքավորման/միջոցի օգտագործման վայրի, քանակի: Ընդ որում.

ա. «Սպասարկման սարքավորման/միջոցի տեղադրման վայր» սյունակում ներկայացվում է բանկի կողմից հաշվետու ամսվա վերջի դրությամբ տեղադրված վճարային քարտ սպասարկող սարքավորումների վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ ընտրելով համապատասխան տողը:

բ. «Սարքավորման տեսակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից տեղադրված վճարային քարտ սպասարկող սարքավորման տեսակի վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ ընտրելով համապատասխան տողը: Ընդ որում՝ «վիրտուալ ՊՈՍ (POS)» տողը լրացվում է, եթե տվյալ սարքը նախատեսված/հաշվառված է վճարային քարտը վիրտուալ (ինտերնետ) միջավայրում սպասարկելու համար:

գ. «Սարքավորման/միջոցի օգտագործման ձև» սյունակում ներկայացվում է բանկի կողմից վճարային քարտ սպասարկող սարքավորման օգտագործման ձևի վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ ընտրելով համապատասխան տողը: Ընդ որում՝ «համատեղ օգտագործվող» տողը լրացվում է, եթե տվյալ սարքն օգտագործվում և հաշվառված է հաշվետու բանկի և այլ բանկի հետ համատեղ:

դ. «Սարքավորման/միջոցի օգտագործման երկիր» սյունակում ներկայացվում է բանկի կողմից վճարային քարտ սպասարկող սարքավորման օգտագործման երկրի վերաբերյալ տեղեկատվություն, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ ընտրելով համապատասխան տողը: Ընդ որում՝ վճարային քարտ սպասարկող սարքավորման օգտագործման երկիր է համարվում տվյալ սարքավորման տեղադրման/ գտնվելու երկիրը, իսկ «վիրտուալ ՊՈՍ (POS)» տերմինալով գործարք կատարելու դեպքում նշվում է վիրտուալ (ինտերնետ) միջավայր:

ե. «Քանակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից հաշվետու ամսվա վերջի դրությամբ հաշվետու բանկի կողմից շահագործվող վճարային քարտ սպասարկող սարքավորումների փաստացի քանակը (բացարձակ արժեք):

3) Հաշվետվության երրորդ՝ «3. ՀՀ տարածքում գործող բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտերով կատարված գործառնություններ» աղյուսակում լրացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտերով հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում, վիրտուալ միջավայրում կամ/և արտասահմանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ տարանջատված ըստ վճարային քարտով կատարված գործառնության սպասարկման սարքավորման/միջոցի, վճարային քարտի վճարման տեսակի/սխեմայի, վճարային քարտով կատարված գործառնության տեսակի, գործառնության կա-

տարման երկրի, վճարման ենթակա ծառայության տեսակի և համապատասխան վճարային համակարգի, գումարի և քանակի: Ընդ որում.

ա. «Գործառնության սպասարկման սարքավորում/միջոց» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկած/տրամադրված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում գործառնության կատարման ժամանակ կիրառվող սարքավորման տեսակի վերաբերյալ տեղեկատվություն՝ ընտրելով համապատասխան տողը: Ընդ որում՝ «վիրտուալ ՊՈՍ (POS)» տողը լրացվում է, եթե տվյալ գործառնությունը կատարվել է վիրտուալ (ինտերնետ) միջավայրում սպասարկման համար նախատեսված/հաշվառված սարքավորման միջոցով, իսկ «բանկի գործառնական օր/հաշվառման համակարգ» տողը լրացվում է, եթե տվյալ միջոցների ստացման աղբյուր է հանդիսացել բանկի գործառնական օր կամ հաշվառման համակարգում (ներքին համակարգ) միջոցների առկայությունը: Օրինակ՝ քարտապանին աշխատավարձի վճարումը կամ կրթաթոշակի, կենսաթոշակի, նպաստի և այլ տիպի սոցվճարների վճարումը կատարվել է բանկի ներքին համակարգում համապատասխան գործողությունների կատարման արդյունքում՝ քարտապանին միջոցները հասանելի դարձնելու միջոցով:

բ. «Վճարային քարտի վճարման տեսակ/սխեմա» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտի սխեմայի վերաբերյալ տեղեկատվություն, ընտրելով համապատասխան տողը, եթե հաշվետու ամսվա ընթացքում գործառնությունը կատարվել է դեբետային, հաշվարկային կամ վարկային սխեմայով թողարկված վճարային քարտերով համապատասխանաբար:

գ. «Գործառնության եղանակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնության տեսակի վերաբերյալ տեղեկատվություն, ընտրելով համապատասխան տողը, եթե վճարային քարտով կատարվել է կանխիկացման, միջոցների կանխիկ եղանակով մուտքագրման, միջոցների անկանխիկ եղանակով մուտքագրման, վճարման կամ փոխանցման գործառնություն համապատասխանաբար: Ընդ որում, միջոցների կանխիկ եղանակով մուտքագրման համար հիմք է հանդիսանում միջոցների մուտքագրումը կանխիկ եղանակով նախաձեռնելը:

դ. «Գործառնության կատարման երկիր» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնության կատարման երկրի վերաբերյալ տեղեկատվություն, ընտրելով համապատասխան տողը, եթե գործառնությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, վիրտուալ միջավայրում կամ արտասահմանում համապատասխանաբար:

ե. «Ծառայության տեսակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտով, սահմանված ծառայությունների դիմաց հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ընտրելով համապատասխան տողը: Ընդ որում՝ նշվում է.

եա. «կոմունալ վճարումներ», եթե վճարումը կատարվել է կոմունալ ծառայությունների դիմաց,

եբ. «վարկի մարում», եթե կատարվել է վարկի մարմանն ուղղված վճարում,

եգ. «պետական բյուջե ուղղված վճարում», եթե վճարումը կատարվել է հարկերի, տուրքերի կամ տուգանքների դիմաց,

եդ. «ԱՊՊԱ/ապահովագրություն», եթե վճարումը կատարվել է ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրման կամ այլ տեսակի ապահովագրության դիմաց,

եե. «հաշվի ամրագրում/փոխանցում», եթե կատարվել է քարտային հաշվի ամրագրում կանխիկ կամ անկանխիկ եղանակով,

եզ. «քարտից քարտ փոխանցում», եթե քարտային հաշվից կատարվել է փոխանցում քարտային հաշվին,

եէ. «դրամական համակարգեր», եթե քարտային հաշվից կատարվել է փոխանցում առանց բանկային հաշվի բացման դրամական միջոցների փոխանցման համակարգերին կամ առանց բանկային հաշվի բացման դրամական միջոցների փոխանցման համակարգերից կատարվել է փոխանցում քարտային հաշվին,

եը. «ապրանքի/ծառայության դիմաց վճարում», եթե վճարումը կատարվել է ապրանքի ձեռքբերման կամ մատուցված ծառայության դիմաց,

եթ. «կանխիկի ստացում», եթե կատարվել է կանխիկացման գործառնություն,

եժ. «սոցվճար», եթե կատարվել է նպաստի, կրթաթոշակի, կենսաթոշակի կամ պետության կողմից սահմանված՝ քարտապանին ուղղված այլ սոցվճարներ,

եժա. «աշխատավարձ», եթե քարտապանի հաշվին փոխանցվել է աշխատավարձ,

եժբ. «այլ վճարում», եթե կատարվել է վերը նշված ցանկում չնշված ծառայության դիմաց:

զ. «Վճարային համակարգ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված վճարային քարտի վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝ «ԱրՔա», «Վիզա», «Մաստերքարտ» և այլ, եթե հաշվետու ամսվա ընթացքում սպասարկված վճարային քարտը թողարկված է եղել «ԱրՔա», «Վիզա», «Մաստերքարտ» և այլ համակարգի ապրանքանիշի տակ: Ընդ որում՝ «բանկի ներքին» տողը նշվում է, եթե հաշվետու ամսվա ընթացքում սպասարկված վճարային քարտը թողարկված է եղել բանկի ներքին համակարգի ապրանքանիշի տակ և «համատեղված», եթե հաշվետու ամսվա ընթացքում սպասարկված վճարային քարտը թողարկված է եղել վճարային համակարգերի համատեղ ապրանքանիշերի տակ:

է. «Գումար» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնությունների գումարի վերաբերյալ տեղեկատվություն (հազար ՀՀ դրամ): Ընդ որում՝ արտարժույթով թողարկված/տրամադրված քարտերով գործառնություններ կատարելու դեպքում, գումարը լրացվում է հաշվետու ամսվա վերջին օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով հաշվարկված՝ արտահայտված ՀՀ դրամով:

ը. «Քանակ» սյունակում ներկայացվում է բանկի կողմից թողարկված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնությունների քանակի վերաբերյալ տեղեկատվություն (բացարձակ արժեք):

4) Հաշվետվության չորրորդ՝ «4. Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով ՀՀ տարածքում կատարված գործառնություններ» աղյուսակում լրացվում է արտասահմանյան բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն, տարանջատված ըստ վճարային քարտով կատարված գործառնության սպասարկման սարքավորման/միջոցի, վճարային քարտի վճարման տեսակի/սխեմայի, վճարային քարտով կատարված գործառնության տեսակի, վճարման ենթակա ծառայության տեսակի և համապատասխան վճարային համակարգի, գումարի և քանակի: Ընդ որում.

ա. «Գործառնության սպասարկման սարքավորում/միջոց» սյունակում ներկայացվում է արտասահմանյան բանկի կողմից թողարկված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում գործառնության կատարման ժամանակ կիրառվող սարքավորման տեսակի վերաբերյալ տեղեկատվություն՝ ընտրելով համապատասխան տողը: Ընդ որում՝ «վիրտուալ ՊՈՍ (POS)» տողում լրացվում է, եթե տվյալ գործառնությունը կատարվել է վիրտուալ (ինտերնետ) միջավայրում բանկի կողմից սպասարկման համար նախատեսված/հաշվառված սարքավորման միջոցով:

բ. «Գործառնության եղանակ» սյունակում ներկայացվում է արտասահմանյան բանկի կողմից թողարկված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնության տեսակի վերաբերյալ տեղեկատվություն, ընտրելով համապատասխան տողը, եթե արտասահմանյան բանկի վճարային քարտով կատարվել է կանխիկացման, կանխիկի մուտքագրման, վճարման կամ փոխանցման գործառնություն համապատասխանաբար:

գ. «Ծառայության տեսակ» սյունակում ներկայացվում է արտասահմանյան բանկի կողմից թողարկված վճարային քարտով սահմանված ծառայությունների դիմաց հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվություն, ընտրելով համապատասխան տողը՝ համաձայն սույն հաշվետվության երրորդ աղյուսակի 5-րդ սյունակի լրացման սկզբունքի:

դ. «Վճարային համակարգ» սյունակում ներկայացվում է արտասահմանյան բանկի կողմից թողարկված վճարային քարտի վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝ «Վիզա», «Մաստերքարտ» և այլ, ընտրելով համապատասխան տողը, եթե հաշվետու ամսվա ընթացքում սպասարկված վճարային քարտը թողարկված է եղել «Վիզա», «Մաստերքարտ» և այլ համակարգի ապրանքանիշի տակ: Ընդ որում՝ «բանկի ներքին» տողը նշվում է, եթե հաշվետու ամսվա ընթացքում սպասարկված վճարային քարտը թողարկված է եղել արտասահմանյան բանկի ներքին համակարգի ապրանքանիշի տակ և «համատեղված», եթե հաշվետու ամսվա ընթացքում սպասարկված վճարային քարտը թողարկված է եղել վճարային համակարգերի համատեղ ապրանքանիշերի տակ:

ե. «Գումար» սյունակում ներկայացվում է արտասահմանյան բանկի կողմից թողարկված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնության գումարի վերաբերյալ տեղեկատվություն (հազար ՀՀ դրամ): Ընդ որում՝ արտարժույթով թողարկված/տրամադրված քարտերով գործառնություններ կատարելու դեպքում գումարը լրացվում է հաշվետու ամսվա վերջին օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով հաշվարկված՝ արտահայտված ՀՀ դրամով:

զ. «Քանակ» սյունակում ներկայացվում է արտասահմանյան բանկի կողմից թողարկված վճարային քարտով հաշվետու ամսվա ընթացքում կատարված գործառնության քանակի վերաբերյալ տեղեկատվություն (բացարձակ արժեք):»:

2. Կանոնակարգ 3-ի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 դեկտեմբերի 2014 թ., N 350-Ն

Հավելված
Հավելված 2

Հաշվետվություն

«Վճարային քարտերի տեսակների, վճարային քարտ սպասարկվող սարքավորումների, ինչպես նաև վճարային քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ»

Թիվ 31 (ամսական)

Կազմակերպության անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ.*

1. ՀՀ բանկերի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտեր

Տեղեկատվության պահպանման տեսակ	Քարտապանների տեսակ	Վճարային քարտի վճարման տեսակ/սխեմա	Վճարային համակարգ	Գումար (հազար ՀՀ դրամ)	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
մագնիսական ժապավենով	ֆիզիկական անձ	դեբետային	ԱրՔա		
հիբրիդ	իրավաբանական անձ/ անհատ ձեռնարկատեր	հաշվարկային	Վիզա		
միկրոպրոցեսորային		վարկային	Մաստեր քարտ		
միկրոպրոցեսորային (NFC)			Դայներս քլաբ		
վիրտուալ			Ամեքս		
			բանկի ներքին		
			համատեղված		

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

2. Վճարային քարտի սպասարկման սարքավորումներ/միջոցներ

Սպասարկման սարքավորման/միջոցի տեղադրման վայր	Սարքավորման տեսակ	Սարքավորման/ միջոցի օգտագործման ձև	Սարքավորման/ միջոցի օգտագործման երկիր	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*
Բանկեր (գլխամաս, մասնաճյուղ)	ԱԳՄ (ATM)	միանձնյա օգտագործվող	արտասահմանում	
Այլ ֆինանսական և ապահովագրական գործունեություն	ՊՈՍ (POS) տերմինալ կամ իմպրինտեր	համատեղ օգտագործվող	Հայաստանում	
Հանքագործական և մշակող արդյունաբերության ձեռնարկություններ	վիրտուալ ՊՈՍ (POS)		ԼՂՀ-ում	
էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (ՀէՑ, ՋէԿ)			վիրտուալ միջավայր	
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն (կայարաններ, օդանավակայան)				
Մեծածախ և մանրածախ առևտուր (սուպերմարկետ, խանութ, շուկա)				
Կացության և հանրային սննդի կազմակերպում (հյուրանոց, ռեստորան, սրճարան, բիստրո)				
Տեղեկատվություն և կապ (կապի օպերատորներ՝ Վիվասել, Արմենթել, հեռուստատեսություն, ռադիոտուն)				
Պետական կառավարում և պաշտպանություն (ազգային ժողով, կառավարություն, նախարարություններ, այլ պետական հիմնարկներ, սահմանային անցակետեր, մաքսակետեր, զորամասեր)				
Քաղաքապետարան, թաղապետարան, գյուղապետարան				
Կրթություն (համալսարաններ, դպրոցներ)				
Առողջապահություն (հիվանդանոց, ատամնաբուժարան, դեղատուն)				
Մշակույթ, զվարճություն, հանգիստ (թատրոն, կինոթատրոն, խաղատուն)				
Սպասարկման այլ ծառայություններ (գեղեցկության սրահ, բենզալցակայան, գազալցակայան, կոմունալ ծառայությունների մատուցում ջրամատակարարում)				
Միջազգային կազմակերպություն, դեսպանատուն				
Այլ (բնակելի շենք, փողոց)				

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

3. ՀՀ տարածքում գործող բանկի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտերով կատարված գործառնություններ

Գործառնության սպասարկման սարքավորում/միջոց	Վճարային քարտի կիրառման տեսակ/տեխնոլոգիա	Գործառնության եղանակ	Գործառնության կատարման վայրի երկիր	Ծառայության տեսակ	Վճարային համակարգ	Գումար ՀՀ դրամ)	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
ԱԳՄ (ATM)	հաշվարկային	կանխիկի ելք	արտասահմանում	կոմունալ վճարումներ	ԱրՔա		
ՊՈՍ (POS) տերմինալ կամ իմպրինտեր	դեբետային	կանխիկի մուտք	Հայաստանում	վարկի մարում	Վիզա		
վիրտուալ ՊՈՍ (POS)	վարկային	անկանխիկ մուտք	վիրտուալ միջավայր	պետական բյուջե ուղղված վճարում	Մաստերքարտ		
բանկի գործառնական օր/հաշվառման համակարգ		վճարում		ԱՊՊԱ/ ապահովագրություն	Դայներս քլաբ		
		փոխանցում		հաշվի ամրագրում/ փոխանցում	Ամեքս		
				քարտից քարտ փոխանցում	բանկի ներքին		
				դրամական համակարգեր	համատեղված		
				ապրանքի, ծառայության դիմաց վճարում			
				կանխիկի ստացում			
				սոցվճարներ			
				աշխատավարձ			
				այլ վճարում			

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ _____

4. Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված/տրամադրված վճարային քարտերով ՀՀ տարածքում կատարված գործառնություններ

Գործառնության սպասարկման սարքավորում/միջոց	Գործառնության եղանակ	Ծառայության տեսակ	Վճարային համակարգ	Գումար (հազար ՀՀ դրամ)	Քանակ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
ԱԳՄ (ATM)	կանխիկի ելք	կոմունալ վճարումներ	Վիզա		
ՊՈՍ (POS) տերմինալ կամ իմպրինտեր	կանխիկի մուտք	վարկի մարում	Մաստեր քարտ		
վիրտուալ ՊՈՍ (POS)	վճարում	պետական բյուջե ուղղված վճարում	Դայներս քլաբ		
	փոխանցում	ԱՊՊԱ/ապահովագրություն	Ամեքս		
		հաշվի ամրագրում/փոխանցում	բանկի ներքին		
		դրամական համակարգեր	համատեղված		
		ապրանքի, ծառայության դիմաց վճարում			
		կանխիկի ստացում			
		այլ վճարում			

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորման քննությունների կազմակերպման գործընթացին ներգրավել նաև Կենտրոնական բանկի սահմանած չափանիշները բավարարող որակավորման ստուգում իրականացնող մասնագիտացված կազմակերպություններին,

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 22-րդ, 23-33.1-րդ և 41-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 1) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 1-ի 21-րդ կետից «, ինչպես նաև կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը» բառերը հանել,
2) Կանոնակարգ 1-ի 22-րդ կետը լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «18) «Որակավորող կազմակերպություն»՝ Կենտրոնական բանկի կողմից ընտրված կազմակերպություն, որը իրականացնում է ղեկավարների որակավորման ստուգում:»,
3) Կանոնակարգ 1-ի 62-րդ և 63-րդ կետերում «4-րդ ենթակետով» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի համաձայն» բառերով,
4) Կանոնակարգ 1-ի 64-րդ կետի 1-ին ենթակետում «ներկայացուցչության» բառից հետո լրացնել «գործունեության» բառը,
5) Կանոնակարգ 1-ի 66-րդ կետում՝

   ա. «ժամանակավորապես» բառը փոխարինել «ժամանակավոր» բառով,

   բ. «բանկն այդ» բառը փոխարինել «բանկը ներկայացուցչության գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին» բառերով,
6) Կանոնակարգ 1-ի 68-րդ կետում «Կենտրոնական բանկը,» բառերը հանել,
7) Կանոնակարգ 1-ի 73-րդ կետում «4-րդ ենթակետով» բառերը փոխարինել «4-րդ ենթակետի համաձայն նախատեսված» բառերով,
8) Կանոնակարգ 1-ի 74-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «74. Սույն կանոնակարգի 67-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն նախատեսված ժամկետներում սույն կանոնակարգի 73-րդ կետով սահմանված փաստաթղթերը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցման թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում:»:
9) Կանոնակարգ 1-ի 76-րդ կետի 1-ին ենթակետում «ներկայացուցչությունը գրանցումից հանելու մասին» բառերը փոխարինել «ներկայացուցչության գործունեության դադարեցումը թույլատրելու մասին» բառերով,
10) Կանոնակարգ 1-ի 78-րդ կետում «գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը այդ» բառերը փոխարինել «թույլատրելու մասին որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում բանկը ներկայացուցչության գործունեության դադարեցման մասին» բառերով,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

11) Կանոնակարգ 1-ի 116-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«116. Կենտրոնական բանկում ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցում և համապատասխան որակավորման վկայական են ստանում միայն բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), նրա տեղակալների, բանկի տնօրենության (վարչության անդամների), օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի, բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի և բանկի գլխավոր հաշվապահի թեկնածուները: Ընդ որում, սույն կետով նշված ղեկավար պաշտոնների թեկնածուները Կենտրոնական բանկում նախատեսված քննություններին կարող են մասնակցել միայն այն բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի միջնորդությամբ, որում նախատեսում են զբաղեցնել տվյալ որակավորմանը համապատասխան պաշտոն:»,

12) Կանոնակարգ 1-ը լրացնել 116.1-րդ և 116.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«116.1. Ղեկավարները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 116-րդ կետով սահմանված ղեկավարների, որակավորման ստուգում են անցնում որակավորող կազմակերպություններում, որոնց ցանկը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

116.2. Այն դեպքում, երբ ղեկավար պաշտոնի որակավորման ստուգման անցկացման համար որևէ որակավորող կազմակերպություն չի ընտրվել և (կամ) ընտրված որակավորող կազմակերպության գործունեությունը դադարեցվել է, ապա սույն կանոնակարգի 116.1-րդ կետով սահմանված համապատասխան ղեկավարի որակավորման ստուգման անցկացման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգի համաձայն:»,

13) Կանոնակարգ 1-ի 117-րդ կետում՝

ա. «Կենտրոնական բանկի» բառերից հետո լրացնել «և որակավորող կազմակերպությունների» բառերը,

բ. «և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն» բառերը հանել:

14) Կանոնակարգ 1-ի 118-րդ կետում «որակավորումը» բառը փոխարինել «որակավորման ստուգումը» բառերով,

15) Կանոնակարգ 1-ի 20-րդ գլխի վերնագրում «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ» բառերից հետո լրացնել «ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» բառերը,

16) Կանոնակարգ 1-ի 124-րդ կետում «բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «բանկում» բառով,

17) Կանոնակարգ 1-ի 128-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառով,

18) Կանոնակարգ 1-ի 129-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:»,

19) Կանոնակարգ 1-ի 130-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,

20) Կանոնակարգ 1-ի 132-րդ կետում «բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «բանկում» բառով,

21) Կանոնակարգ 1-ի 135-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառով,

22) Կանոնակարգ 1-ի 136-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,

23) Կանոնակարգ 1-ի 23-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 23. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

24) Կանոնակարգ 1-ի 141-րդ և 142-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«141. Կենտրոնական բանկ գրանցման համար դիմած՝ սույն կանոնակարգի 116-րդ կետում նշված ղեկավարների թեկնածուները որակավորման ստուգումն անցնում են Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կողմից կազմակերպվող քննության միջոցով:

142. Բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից սույն կանոնակարգի 116-րդ կետում նշված ղեկավարի գրանցման միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո ղեկավարի թեկնածուն 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում՝ Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին:»,

25) Կանոնակարգ 1-ի 143-րդ և 144-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

26) Կանոնակարգ 1-ի 145-րդ կետի 3-րդ ենթակետում «տեղեկանքը» բառից հետո լրացնել «(ոչ ռեզիդենտները ներկայացնում են առկայության դեպքում)» բառերը,

27) Կանոնակարգ 1-ի 153-րդ կետում «Թեկնածուները Կենտրոնական բանկում» բառերը փոխարինել «Սույն կանոնակարգի 116-րդ և 116.1-րդ կետերով սահմանված ղեկավարների թեկնածուները համապատասխանաբար Կենտրոնական բանկում և Որակավորող կազմակերպությունում» բառերով,
28) Կանոնակարգ 1-ի 155-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «155. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ և ենթակա են հրապարակման, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգում: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:»,
29) Կանոնակարգ 1-ում 156-րդ կետի աղյուսակի 6-րդ կետում «80 հարց» բառերից հետո լրացնել «(ենթակա չեն հրապարակման)» բառերը,
30) Կանոնակարգ 1-ը լրացնել 156.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«156.1. Սույն կանոնակարգի 156-րդ կետով սահմանված աղյուսակի այն կետերը, որոնք վերաբերում են որակավորող կազմակերպություններում որակավորման ստուգում անցնող ղեկավարներին, գործում են միայն սույն կանոնակարգի 116.2-րդ կետով նախատեսված դեպքում:»,

31) Կանոնակարգ 1-ի 157-րդ կետում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար նախատեսված թեստի» բառերով,
32) Կանոնակարգ 1-ի 158-րդ կետում «չտիրապետող թեկնածուների» բառերը փոխարինել «չտիրապետող, Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարի թեկնածուների» բառերով,
33) Կանոնակարգ 1-ի 159-րդ և 160-րդ կետերում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեկնածուների համար նախատեսված թեստի» բառերով,
34) Կանոնակարգ 1-ի 25-րդ գլխի վերնագրում «ԹԵՍՏԻ» բառը փոխարինել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ» բառերով,
35) Կանոնակարգ 1-ի 161-րդ կետում «Թեստերի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարի թեկնածուի (սույն գլխում այսուհետ՝ թեկնածու) համար նախատեսված թեստի» բառերով,
36) Կանոնակարգ 1-ի 162-րդ կետում «համապատասխան որակավորման վկայական ստանալու համար» բառերը փոխարինել «սույն կանոնակարգի 142-րդ կետով սահմանված ժամկետում» բառերով,
37) Կանոնակարգ 1-ի 164-րդ կետում՝
    ա. «5» թիվը փոխարինել «3» թվով,
    բ. «15» թիվը փոխարինել «5» թվով,
38) Կանոնակարգ 1-ի 26-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 26. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

165. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած ղեկավարներին տրվում են որակավորման վկայականներ՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման՝

1) բանկի գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի (վարչության նախագահի տեղակալ) տեղակալ, տնօրենության (վարչության) անդամ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ,
2) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ,
3) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար,
4) բանկում որոշում կայացնող դիլեր:

165.1. Սույն կանոնակարգի 117-րդ, 118-րդ և 123-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող ղեկավարներին տրվում են որակավորման վկայականներ՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման՝

1) բանկի գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի տեղակալ (վարչության նախագահի տեղակալ), տնօրենության (վարչության) անդամ, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարիչ,
2) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ,
3) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար, բանկի ներքին աուդիտի անդամ,
4) բանկի մասնաճյուղի կառավարիչ,

5) բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի,

6) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:

165.2. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարի թեկնածուներին տրվում են որակավորման վկայականներ՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման՝

1) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալ,

2) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին աուդիտի անդամ,

3) բանկի մասնաճյուղի կառավարիչ,

4) բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի,

5) բանկի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի ներքին դիտարկումների մարմնի աշխատակից:

166. Սույն կանոնակարգի Հավելված 37-ով սահմանված որակավորման վկայականը Կենտրոնական բանկի կողմից տրամադրվում է Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած ղեկավարին, սույն կանոնակարգի 117-րդ կետի պահանջները բավարարող ղեկավարին, սույն կանոնակարգի 118-րդ կետի պահանջները բավարարող բանկի մասնաճյուղի ղեկավարին (եթե վերջինս համապատասխան որակավորման վկայական չունի կամ այլ հիմքով չի նախատեսվում տրամադրել)՝ էլեկտրոնային եղանակով՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում լրացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

167. Սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված որակավորման վկայականը Կենտրոնական բանկի կողմից տրամադրվում է բանկում որոշում կայացնող դիլերին՝ որակավորման վկայականի ստացման դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով դիմումում ներկայացված էլեկտրոնային փոստին:

168. Սույն կանոնակարգի Հավելված 38-ով սահմանված որակավորման վկայականը Կենտրոնական բանկի կողմից տրամադրվում է սույն կանոնակարգի 123-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին, ինչպես նաև որակավորող կազմակերպության կողմից համապատասխան ղեկավարի պաշտոնի որակավորման վկայական ստացած ղեկավարին՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում լրացված էլեկտրոնային փոստին:

169. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 166-րդ, 167-րդ և 168-րդ կետերով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

170. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի կամ որակավորող կազմակերպության ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից) հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հղում է տրվում որակավորող կազմակերպության կայքէջին:

171. Թեկնածուների որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 3 տարի ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 117-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ, սույն կանոնակարգի 116.1-րդ և 123-րդ կետերով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները, և 118-րդ կետով սահմանված անձին տրվող որակավորման վկայականի, որը տրվում է մինչև սույն կանոնակարգի 118-րդ կետի պահանջները բավարարող բանկում որպես մասնաճյուղի ղեկավար պաշտոնավարման ավարտը:

172. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած և գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 15 օր առաջ բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է դիմում ղեկավարի համար որակավորման ստուգման քննություն անցկաց-

նելու միջնորդությամբ: Որակավորման ստուգում անցած ղեկավարին տրամադրվում է նոր որակավորման վկայական՝ քննությունը հանձնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

172.1. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած և գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա ղեկավարին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

172.2. Կենտրոնական բանկում գրանցված ղեկավարի, որը ստացել է սույն կանոնակարգի 123-րդ կետով սահմանված ղեկավարի իր պաշտոնին համապատասխան որակավորում, նախկինում ստացված որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա ղեկավարին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

39) Կանոնակարգ 1-ի 186-րդ կետը լրացնել նոր ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «3) որակավորման առկայությունը հավաստող փաստաթուղթ (որակավորման վկայական), որը Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար չի ներկայացվում:»,
40) Կանոնակարգ 1-ի 202-րդ կետում «ղեկավարի կազմում փոփոխությունները տեղի ունենալուց հետո սույն կանոնակարգի 221-րդ կետով սահմանված ժամկետներում» բառերը փոխարինել «գրանցումից հանելու վերաբերյալ իր իրավասու մարմնի կողմից ընդունված որոշման ուժի մեջ մտնելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ այն դեպքերի, երբ բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը ունի ներքին դիտարկումների մարմնի մեկ աշխատակից, որի վերաբերյալ փոփոխությունը ներկայացվում է համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված առաջին հաշվետվության տրամադրումը)»,
41) Կանոնակարգ 1-ի 204-րդ կետում «կողմից և» բառերը փոխարինել «կողմից և (կամ)» բառերով,
42) Կանոնակարգ 1-ի 221-րդ կետում.

ա. «տասն աշխատանքային օրվա ընթացքում» բառերը հանել,

բ. 1-ին ենթակետում «կատարված փոփոխությունները» բառերից հետո լրացնել «(փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերը,

գ. 2-րդ ենթակետից «, բացառությամբ այն դեպքերի, երբ բանկն ունի ներքին դիտարկումների մարմնի մեկ աշխատակից, որի վերաբերյալ փոփոխությունը ներկայացվում է այն տեղի ունենալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված առաջին հաշվետվության տրամադրումը» բառերը հանել,

43) Կանոնակարգ 1-ի 222-րդ կետի 3-րդ ենթակետում «փոփոխությունը» բառը փոխարինել «փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
44) Կանոնակարգ 1-ի 223-րդ կետում «համապատասխանությունը» բառից հետո լրացնել «, և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը» բառերը,
45) Կանոնակարգ 1-ի 229-րդ կետում «4.1-րդ ենթակետերով կամ» բառերը փոխարինել «4.1-րդ, 4.3-րդ ենթակետերով և (կամ)» բառերով,
46) Կանոնակարգ 1-ի Հավելված 10-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է),
47) Կանոնակարգ 1-ի Հավելված 11-ի 6.3-րդ և 8.1-րդ կետերում «Հեռախոսահամար (բջջ. և այլ)» բառերը փոխարինել «Բնակության վայր, հեռախոսահամար (բջջ. և այլ)» բառերով,
48) Կանոնակարգ 1-ի Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է):
49) Կանոնակարգ 1-ի Հավելված 26-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է),

50) Կանոնակարգ 1-ի Հավելված 31-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է),

51) Կանոնակարգ 1-ի Հավելված 38-ից բոլոր «միջազգային» բառերը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 0-րդ, 11-13-րդ, 15-րդ, 23-25, 27-38-րդ, 46-րդ և 51-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 դեկտեմբերի 2014 թ., N 351-Ն

Հավելված 1

«Հավելված 10
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգերը» կանոնակարգ 1-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՂԵԿԱՎԱՐԻՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(ղեկավարի թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը)

☐ թույլ տալ մասնակցել որակավորման քննություններին (Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար)

☐ տրամադրել որակավորման վկայական՝ առանց քննության միջոցով որակավորման ստուգման

☐ գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____
(բանկի անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում եմ, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Բանկի (օտարերկրյա բանկի) կառավարման մարմնի
իրավասու անձի անուն, ազգանուն, ստորագրություն _____

«__»_____ 20__ թ.»:

Հավելված 2

«Հավելված 12
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգերը» կանոնակարգ 1-ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՁԵՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____
(բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի) իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Բանկի (բանկի մասնաճյուղի կամ ներկայացուցչության), օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ օտարերկրյա բանկի ներկայացուցչության լրիվ անվանումը

»:

Հավելված 3

«Հավելված 26
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգերը» կանոնակարգ 1-ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻ ՁԵՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____
(բանկի կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղի իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է _____ __/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ
(իրավասու մարմնի անվանում)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Բանկի (բանկի մասնաճյուղի կամ ներկայացուցչության), օտարերկրյա բանկի մասնաճյուղի կամ ներկայացուցչության լրիվ անվանումը

_____
(փոփոխություն(ներ) և (կամ) լրացում(ներ) կամ նոր խմբագրություն)

»:

Հավելված 4

«Հավելված 31
«Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգերը» կանոնակարգ 1-ի

ԴԻՄՈՒՄ
ֆիզիկական անձի կողմից բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Ես՝ _____, խնդրում եմ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____ բանկի կանոնադրական հիմնադրամում_____
(նշվում է բանկի անվանումը) *(նշվում է ուղղակի կամ անուղղակի)*

նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:

ՄԱՍ 1.

Լրացվում է բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձ հանդիսացող մասնակցի կողմից:

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը
1. Ֆիզիկական անձի տվյալները
1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____ 1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան ամսաթիվը _____ *օր/ամիս/տարի* 1.4. Ծննդավայրը _____ 1.5. Քաղաքացիությունը _____ 1.6. Անձնագրի տվյալները _____ 1.7. Հանրային ծառայությունների համարանիշը _____ 1.8. Բնակության վայրը • հաշվառման վայր _____ • փաստացի բնակության վայր _____ 1.9. Հեռախոսահամար _____ 1.10. Էլեկտրոնային փոստի հասցե _____ 1.11. Նշեք նախկինում Ձեր ունեցած բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանը Անունը, ազգանունը, հայրանունը Կրելու ժամանակաշրջանը _____ _____ *(օր/ամիս/տարի)* _____ *օր/ամիս/տարի)* _____

2. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեությունը

2.1. Կրթություն, որակավորում

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը (_____ թ-ից մինչև _____ թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորման մակարդակը

2.2. Ինչ օտար լեզուների եք տիրապետում

☐ հայերեն
☐ անգլերեն
☐ ռուսերեն
☐ այլ (նշել լեզուն)_____

2.3. Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդորում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից).

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոն, հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

2.4. Նշեք Ձեզ անձամբ ճանաչող՝ ֆինանսաբանկային համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալները, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

Անունը, ազգանունը		Աշխատանքի վայրը, պաշտոնը		Հեռախոսը

3. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

3.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ _____
Գումար *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____
գումար *%*

3.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) ձեռքբերման գինը _____

3.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ շուկայական արժեքը _____

4. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)

4.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

4.2. Նշեք ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝
Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 3.3 կետը

4.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝

ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը/անվանումը _____

բ) Գտնվելու/բնակության վայրը _____

գ) Վարկի/փոխառության գումարը _____ դ) Գրավի առարկան _____

ե) Վարկի/փոխառության ստացման պայմանները և ժամկետները _____

զ) Ինչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի _____

4.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորվող շուկայի միջոցով), ապա նշել՝

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/մասնակցության չափը (%)

5. Ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել համապատասխան փաստաթղթեր, տեղեկություններ և այլն):

6. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ (Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել նաև նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները):

6.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

Սույն կետում նշված անձանց համար լրացնել սույն կանոնակարգի Հավելված 28-ը:

6.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

7. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ
Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն

Կազմակերպության անվանումը կամ անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը	Գտնվելու (բնակության վայրը)	Փոխկապակցվածության տեսակը

8. Այլ տեղեկատվություն

8.1. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն բանկի նկատմամբ, որի կանոնադրական հիմնադրամում մտադիր եք ձեռք բերել նշանակալից մասնակցություն: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ և այլն)

8.2. Արդյո՞ք Դուք (կամ Ձեզ հետ փոխկապակցված անձինք) ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող որևէ բանկի նկատմամբ 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ և այլն)

8.3. Արդյո՞ք Ձեզ մոտ բացակայում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: ☐ Այո ☐ Ոչ

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ

8.4. Արդյո՞ք Դուք պատրաստ եք բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում (կապիտալի կտրուկ նվազում, իրացվելիության խնդիրների առաջացում, խոշոր վնասներ, արտակարգ իրավիճակներ) տրամադրել լրացուցիչ ֆինանսական օժանդակություն: ☐ Այո ☐ Ոչ ☐ Այլ

«Այլ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ

8.5. Արդյո՞ք բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված տնտեսական ծրագրում Ձեր կողմից առաջարկվում է որևէ փոփոխություն: ☐ Այո ☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասներ

8.6. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

9.Հավաստիացնում եմ, որ

ա) սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:
բ) բացակայում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերը:

Հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ բանկում անուղղակի հաշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում՝ ներկայացնում եմ օրենքով և կանոնակարգերով պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը իմ միջոցով անուղղակի հաշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին, ինչպես նաև Կանոնակարգ 1-ի 18-րդ գլխով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) կանոնակարգով սահմանված ժամկետներից առնվազն 5 աշխատանքային օր առաջ ներկայացնել բանկ (բանկի մասնաճյուղ):

Անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____

_____
օր/ամիս/տարի

ՄԱՍ II
Լրացվում է բանկի կողմից

1. Խնդրում ենք Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը _____ կողմից
(նշվում է հաշանակալից մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձի անունը և ազգանունը)
_____ բանկի կանոնադրական կապիտալում
(նշվում է բանկի անվանումը)
_____ հաշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար:
(նշվում է ուղղակի կամ անուղղակի)

2. Հավաստիացնում ենք, որ _____ բանկի
(նշվում է բանկի անվանումը)
կանոնադրական կապիտալում բանկի մասնակցի՝ բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են:
(Սույն կետը չի լրացվում բանկի մասնակցի բաժնեմասը նվիրատվությամբ ձեռք բերելու դեպքում:)

Բանկի կառավարման մարմնի իրավասու անձի
անունը և ազգանունը _____

Ստորագրություն _____

_____
(օր, ամիս, տարի)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովագրական ընկերությունների ղեկավարների որակավորման քննությունների կազմակերպման գործընթացին ներգրավել նաև Կենտրոնական բանկի կողմից ընտրված որակավորում իրականացնող մասնագիտացված կազմակերպություններին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 40-րդ հոդվածի 6-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 90-րդ հոդվածի 4-րդ մասը, 103-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ը հաստատելու մասին» թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/01) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/01-ի 22-րդ կետը լրացնել 12-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) «որակավորող կազմակերպություն»՝ Կենտրոնական բանկի կողմից ընտրված կազմակերպություն, որն իրականացնում է ղեկավարների որակավորման ստուգում»,

2) Կանոնակարգ 3/01-ի 115-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«115. Կենտրոնական բանկում ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցում և համապատասխան որակավորման վկայական են ստանում միայն ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) գործադիր տնօրենի, տնօրենության ղեկավարի, տնօրենության անդամի, վարչության նախագահի, վարչության անդամի, գործադիր տնօրենի տեղակալի, ներքին աուդիտի ղեկավարի, գլխավոր հաշվապահի թեկնածուները: Ընդ որում, սույն կետով նշված ղեկավար պաշտոնների թեկնածուները Կենտրոնական բանկում նախատեսված քննություններին կարող են մասնակցել միայն այն ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի) միջնորդությամբ, որում նախատեսում են զբաղեցնել տվյալ որակավորմանը համապատասխան պաշտոն:»,

3) Կանոնակարգ 3/01-ը 115-րդ կետից հետո լրացնել 115.1-րդ և 115.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«115.1. Ղեկավարները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 115-րդ կետով սահմանված ղեկավարների, որակավորման ստուգում անցնում են որակավորող կազմակերպություններում, որոնց ցանկը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

115.2. Այն դեպքում, երբ ղեկավար պաշտոնի որակավորման ստուգման անցկացման համար որևէ որակավորող կազմակերպություն չի ընտրվել և (կամ) ընտրված կազմակերպության գործունեությունը դադարեցվել է, ապա սույն կանոնակարգի 115.1-րդ կետով սահմանված համապատասխան ղեկավարի որակավորման ստուգման անցկացման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգի համաձայն:»,

4) Կանոնակարգ 3/01-ի 117-րդ կետում՝

ա. «Կենտրոնական բանկի կողմից տրամադրված» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի և որակավորող կազմակերպությունների կողմից տրամադրվող» բառերով,

բ. «և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն նաև» բառերը հանել,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

5) Կանոնակարգ 3/01-ի գլուխ 19-ի վերնագրում «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ» բառերից հետո լրացնել «ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» բառերը,
6) Կանոնակարգ 3/01-ի 122-րդ և 130-րդ կետերում «Կենտրոնական բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկում» բառերով,
7) Կանոնակարգ 3/01-ի 126-րդ և 133-րդ կետերում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառերով,
8) Կանոնակարգ 3/01-ի 127-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Խորհրդի անդամի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:»,
9) Կանոնակարգ 3/01-ի 128-րդ և 134-րդ կետերում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,
10) Կանոնակարգ 3/01-ի գլուխ 21-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՊԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

11) Կանոնակարգ 3/01-ի 135-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«135. Կենտրոնական բանկ գրանցման համար դիմած ապահովագրական ընկերության (օտարերկրյա ապահովագրական ընկերության) գործադիր տնօրենի, տնօրենության ղեկավարի, տնօրենության անդամի, վարչության նախագահի, վարչության անդամի, գործադիր տնօրենի տեղակալի, ներքին աուդիտի ղեկավարի, գլխավոր հաշվապահի թեկնածուները որակավորման ստուգումն անցնում են Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կողմից կազմակերպվող քննության միջոցով:»,

12) Կանոնակարգ 3/01-ի 136-րդ և 137-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,
13) Կանոնակարգի 138-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«138. Ապահովագրական ընկերության կողմից ղեկավարի գրանցման միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո ղեկավարի թեկնածուն 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում՝ Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին:»,

14) Կանոնակարգի 139-րդ կետի 3-րդ ենթակետում «տեղեկանք» բառից հետո լրացնել «(ոչ ռեզիդենտների համար՝ առկայության դեպքում)» բառերը,
15) Կանոնակարգ 3/01-ի գլուխ 22-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ»,

16) Կանոնակարգ 3/01-ի 147-րդ կետում «Թեկնածուները Կենտրոնական բանկում» բառերը փոխարինել «Սույն կանոնակարգի 115-րդ կետով, ինչպես նաև 115.1-րդ կետով սահմանված ղեկավարների թեկնածուները համապատասխանաբար Կենտրոնական բանկում և որակավորող կազմակերպությունում» բառերով,
17) Կանոնակարգ 3/01-ի 149-րդ կետում «Թեստերը» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերը» բառերով,
18) Կանոնակարգ 3/01-ը 150-րդ կետից հետո լրացնել 150.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«150.1. Սույն կանոնակարգի 150-րդ կետով սահմանված աղյուսակի այն կետերը, որոնք վերաբերում են որակավորող կազմակերպություններում որակավորման ստուգում անցնող ղեկավարներին, գործում են միայն սույն կանոնակարգի 115.2-րդ կետով նախատեսված դեպքում:»,

19) Կանոնակարգ 3/01-ի 151-րդ կետում առաջին «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար նախատեսված թեստերի» բառերով,
20) Կանոնակարգ 3/01-ի 153-րդ, 155-րդ կետերում «Թեստերի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերի» բառերով,
21) Կանոնակարգ 3/01-ի 154-րդ կետում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստի» բառերով,
22) Կանոնակարգ 3/01-ի գլուխ 23-ի վերնագրում «ԹԵՍՏԻ» բառից առաջ լրացնել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՊԵԿԱՎԱՐՆԵՐԻ» բառերը,
23) Կանոնակարգ 3/01-ի 156-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«156. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ սույն կանոնակարգի 138-րդ կետով սահմանված 15-օրյա ժամկետում:»,

24) Կանոնակարգ 3/01-ի 158-րդ կետում.
ա. «5» թիվը փոխարինել «3» թվով,
բ. «15» թիվը փոխարինել «5» թվով,

25) Կանոնակարգ 3/01-ի 159-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«159. Կենտրոնական բանկում որակավորված ղեկավարների թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրենի, նրա տեղակալի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) և անդամի պաշտոնների համար,
2) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի,
3) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի»,

26) Կանոնակարգ 3/01-ը 159-րդ կետից հետո լրացնել 159.1-րդ և 159.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«159.1. Որակավորող կազմակերպությունում ղեկավարների թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամի պաշտոնի համար,
2) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնի համար,
3) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուարի պաշտոնի համար,
4) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,
5) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի համար,
6) ապահովագրական բրոքերային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) և անդամի պաշտոնների համար,
7) ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխավոր հաշվապահի պաշտոնի համար,
8) ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձի համար:»,

«159.2. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայական տրամադրվում է այն ղեկավարներին, որոնք բավարարում են սույն կանոնակարգի 117-րդ և (կամ) 121-րդ կետերի պահանջները՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրենի, նրա տեղակալի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) և անդամի պաշտոնների համար,
2) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի,
3) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի,
4) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամի պաշտոնի համար,
5) ապահովագրական ընկերության և օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի պատասխանատու ակտուարի պաշտոնի համար,
6) ապահովագրական ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,
7) ապահովագրական ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի պաշտոնի համար,
8) ապահովագրական բրոքերային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, տնօրենության ղեկավարի (վարչության նախագահի) և անդամի պաշտոնների համար,
9) ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխավոր հաշվապահի պաշտոնի համար»,

27) Կանոնակարգ 3/01-ի 160-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«160. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 33-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 117-րդ կետի պահանջները բավարարող, Կենտրոնական բանկի կողմից որակավորման ստուգում անցնող ղեկավարին էլեկտրոնային եղանակով Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:»,

28) Կանոնակարգ 3/01-ի 161-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«161. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 115.1-րդ կետով սահմանված որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:»,

29) Կանոնակարգ 3/01-ի 162-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«162. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 34-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 121-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:»,

30) Կանոնակարգ 3/01-ի 163-րդ կետում «Որակավորման» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի կողմից որակավորման» բառերով,

31) Կանոնակարգ 3/01-ի 164-րդ կետում՝

ա. «Կենտրոնական բանկի» բառերից հետո լրացնել «կամ որակավորող կազմակերպության» բառերը,

բ. լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հղում է տրվում որակավորող կազմակերպության կայք էջի համապատասխան բաժնին:»,

32) Կանոնակարգ 3/01-ի 165-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«165. Թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 117-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ և սույն կանոնակարգի 115.1-րդ և 121-րդ կետերով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել է որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:»,

33) Կանոնակարգ 3/01-ը 165-րդ կետից հետո լրացնել 165.1-րդ և 165.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«165.1. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 15 օր առաջ ընկերությունը Կենտրոնական բանկ է դիմում՝ ղեկավարի որակավորման ստուգում անցնելու միջնորդությամբ: Որակավորման ստուգում անցած ղեկավարներին տրամադրվում է նոր որակավորման վկայական՝ քննությունը հանձնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

165.2. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցնող գրանցված ղեկավարների որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարներին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

34) Կանոնակարգ 3/01-ի 177-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) որակավորման առկայությունը հավաստող փաստաթուղթ՝ որակավորման վկայական (բացառությամբ Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների)»,

35) Կանոնակարգ 3/01-ի 195-րդ կետում «և» բառից հետո լրացնել «(կամ)» բառը,

36) Կանոնակարգ 3/01-ի 211-րդ կետի 2-րդ ենթակետում «կատարված փոփոխությունները» բառերից հետո լրացնել «(փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերը,

37) Կանոնակարգ 3/01-ի 213-րդ կետի 3-րդ ենթակետում «փոփոխությունը» բառը փոխարինել «փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,

38) Կանոնակարգ 3/01-ի 214-րդ կետի 2-րդ ենթակետում «համապատասխանությունը» բառից հետո լրացնել «և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը» բառերը,
39) Կանոնակարգ 3/01-ի 220-րդ կետում «4.1-րդ» բառից հետո լրացնել «, 4.3-րդ» բառը,
40) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 17-ի 6.3-րդ և 8.1-րդ կետերի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը,» բառերը,
41) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է),
42) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 16-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է),
43) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 34-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է),
44) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 35-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է),
45) Կանոնակարգ 3/01-ի Հավելված 36-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 5-ի (կցվում է):

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 42-րդ, 43-րդ ենթակետերն ուժի մեջ են մտնում 2015 թվականի մարտի 1-ից:

3. Սույն որոշման 1-ին կետի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 14-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 44-րդ, 45-րդ ենթակետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 դեկտեմբերի 2014 թ., N 352-Ն

Հավելված 1
«Հավելված 12
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՏԵՂԵԿԱՆՔ
Ապահովագրական գործակալների վերաբերյալ

Ամրակցեք այստեղ ֆիզիկական անձ գործակալի լուսանկարը
☐ Այս վանդակում նշում է կատարվում, եթե ներկայացվում են միայն փոփոխությունները:
1. Ապահովագրական գործակալների ռեգիստրում անձին հաշվառելու համար միջնորդագիր ներկայացնող ապահովագրական ընկերության անվանումը
2. Ապահովագրական գործակալի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը կամ անուն, հայրանուն, ազգանունը ○ Իրավաբանական անձ գործակալի համար Անվանումը Կազմակերպաիրավական ձևը Ֆիզիկական անձ՝ ○ Անհատ ձեռնարկատեր Ֆիզիկական անձ (անուն, ազգանուն, հայրանուն) ○ Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող Ֆիզիկական անձ (անուն, ազգանուն, հայրանուն)

3. Ապահովագրական գործակալի վերաբերյալ տվյալներ
3.1. Իրավաբանական անձ գործակալի համար Հարկ Վճարողի Հաշվառման Համարը Պետական գրանցման համարը Անհատ ձեռնարկատեր գործակալի համար Հարկ Վճարողի Հաշվառման Համարը Պետական գրանցման համարը Հանրային ծառայությունների համարանիշը Կամ Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը Անձնագրի տվյալներ Ֆիզիկական անձ գործակալի համար Հանրային ծառայությունների համարանիշը Կամ Հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ապահովագրական գործակալի համար Անձնագրի տվյալներ
3.2. Իրավաբանական անձ գործակալի համար ○ Գործունեության տեսակը _____ ○ Այլ գործունեությամբ չի զբաղվում Գործունեության իրականացման վայրը Հեռախոսահամար Անհատ ձեռնարկատեր և ֆիզիկական անձ ապահովագրական գործակալի համար ○ Գործունեության տեսակը _____ ○ Այլ գործունեությամբ չի զբաղվում Հաշվառման վայր Գործունեության իրականացման վայր Հեռախոսահամար
3.3. Իրավաբանական անձ գործակալի ղեկավար անձանց ցանկը
3.4. Իրավաբանական անձ գործակալի մասնաճյուղերի և (կամ) ներկայացուցչությունների ցանկը *Սույն կետը լրացվում է, եթե իրավաբանական անձ գործակալը մտադիր է իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների միջոցով: Վերջիններիս բացակայության դեպքում կատարվում է «չունի մասնաճյուղեր և (կամ) ներկայացուցչություններ» նշումը:*
4. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը (որի հետ աշխատելու է գործակալը) ստանձնել է ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը: ○ Ոչ ○ Այո, նշել պատասխանատվության չափը:
5. Արդյո՞ք ապահովագրական ընկերությունը հավաստում է, որ ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձինք տիրապետում են սույն կանոնակարգի հավելված 37-ով սահմանված թեմաներին՝ ըստ սահմանված խորության: ○ Ոչ ○ Այո:
6. Արդյո՞ք առկա է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված հիմքերի բացակայության մասին հայտարարությունը: ○ Ոչ ○ Այո:
7. Կից ներկայացնում ենք ապահովագրական գործակալի հետ կնքած պայմանագրի պատճենը (__ էջ): *Ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալի մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու պատասխանատվությունը չստանձնելու դեպքում՝* կից ներկայացնում ենք մասնագիտական անփութության հետևանքով պատճառված վնասի հատուցումն ապահովելու համար գործակալի կնքած պատասխանատվության ապահովագրության պայմանագրի պատճենը:

»:

Հավելված 2

«Հավելված 16
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____ (անուն, ազգանուն, հայրանուն)

- թույլ տալ մասնակցել որակավորման քննություններին (Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար)
- տրամադրել որակավորման վկայական՝ առանց քննության միջոցով որակավորման ստուգման
- գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____ :

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշված անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Ապահովագրական ընկերության (օտարերկրյա
ապահովագրական ընկերության) կառավարման
իրավասու մարմին _____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__»_____ 20__ թ.»:

Հավելված 3

«Հավելված 34
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ԴԻՄԵՐԵՍ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____ -ին _____
Անուն, ազգանուն *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

ապահովագրական _____
պաշտոնի կամ պաշտոնների անվանումը

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ _____

«__»_____ 20__ թ.»:

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում է վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտվել են որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը այլևս վկայագրի տրման հիմք չէ:

»:

Հավելված 4

«Հավելված 35
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

Ապահովագրական ընկերության կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____

(ապահովագրական ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ապահովագրական ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

»:

Հավելված 5

«Հավելված 36
«Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի

Ապահովագրական ընկերության կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____

(ապահովագրական ընկերության, իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ ____ որոշմամբ

Փոփոխված է _____ __/__/_____ թ. թիվ ____ որոշմամբ

(իրավասու մարմնի անվանումն)

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ապահովագրական ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

_____(փոփոխություն(ներ) և (կամ) լրացում(ներ) կամ նոր խմբագրություն)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների որակավորման քննությունների կազմակերպման գործընթացին ներգրավել նաև Կենտրոնական բանկի կողմից ընտրված որակավորում իրականացնող մասնագիտացված կազմակերպություններին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թ. հունվարի 15-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ը հաստատելու մասին» թիվ 15-Ն որոշմամբ հաստատված ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց մասնագիտական համապատասխանության չափանիշները, որակավորման ստուգման և գրանցման կարգը» կանոնակարգ 4/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ կամ Կանոնակարգ 4/05) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կամ որակավորող կազմակերպության կողմից տրամադրված համապատասխան որակավորում ստացած են համարվում նաև սույն կանոնակարգի հավելված 3-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն 1 տարի աշխատած, գրանցման գործընթացում գտնվող այն անձինք, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և (կամ) զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:»,

2) Կանոնակարգի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Կենտրոնական բանկում անցկացվող որակավորման քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ է ներդրումային ծառայություններ մատուցող անձի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի միջնորդությունը, որում թեկնածուն նախատեսում է զբաղեցնել տվյալ որակավորմանը համապատասխան պաշտոն:»,

3) Կանոնակարգի 12-րդ կետում.

ա. 2-րդ և 4-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. լրացնել 10-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) «որակավորող կազմակերպություն»՝ Կենտրոնական բանկի կողմից ընտրված կազմակերպություն, որն իրականացնում է ղեկավարների որակավորման ստուգում:»,

4) Կանոնակարգի ԳԼՈՒԽ 3-ի վերնագրում «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ» բառերից հետո լրացնել «ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» բառերը,

5) Կանոնակարգի 15-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկում» բառերով,

6) Կանոնակարգի 19-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառերով,

7) Կանոնակարգի 20-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշումը կարող է կայացվել նաև առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:»,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

8) Կանոնակարգի 21-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,
9) Կանոնակարգի 23-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկ» բառերով,
10) Կանոնակարգի 26-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառերով,
11) Կանոնակարգի 27-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,
12) Կանոնակարգի 28-րդ կետից հետո լրացնել 28.1 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«28.1. Այն դեպքում, երբ օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը, գործադիր տնօրենի տեղակալը, Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը, գործադիր տնօրենի տեղակալը ունի վերջին 5 տարում օպերատորում կամ Կենտրոնական դեպոզիտարիայում ղեկավար պաշտոնում աշխատելու առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ, նրա որակավորումն իրականացվում է համաձայն սույն գլխի»,

13) Կանոնակարգի 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

14) Կանոնակարգի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29. Որակավորման ստուգում անցնելու նպատակով Կենտրոնական բանկում համապատասխան ֆինանսական կազմակերպության միջնորդությամբ քննություն են հանձնում ստորև նշված պաշտոններում աշխատելու համար Կենտրոնական բանկ գրանցման դիմած թեկնածուները՝

1) ներդրումային ընկերության գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը,
2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը,
3) ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահը,
4) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահը,
5) օպերատորի գործադիր մարմնի անդամները (այդ թվում՝ գործադիր մարմնի ղեկավարը և գործադիր տնօրենի տեղակալը), վերահսկող ծառայության ղեկավարը կամ նման այլ մարմինների ղեկավարը (բացառությամբ սույն կանոնակարգի 28.1-րդ կետով նախատեսված դեպքի),
6) Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները (այդ թվում՝ գործադիր տնօրենի տեղակալը), վերստուգող հանձնաժողովի ղեկավարը կամ նման այլ մարմինների ղեկավարը (բացառությամբ սույն կանոնակարգի 28.1-րդ կետով նախատեսված դեպքի):»,

15) Կանոնակարգի 29-րդ կետից հետո լրացնել 29.1, 29.2, 29.3 և 29.4 կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«29.1. Որակավորման ստուգում անցնելու նպատակով որակավորող կազմակերպությունում որակավորման քննություն են հանձնում ստորև նշված պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները՝

1) ներդրումային ընկերության ներքին աուդիտի անդամները, մասնաճյուղի տնօրենը,
2) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամները,
3) ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահի տեղակալը,
4) օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալը,
5) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձը,
6) բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը,
7) օպերատորի վերահսկող ծառայության անդամները,
8) Կենտրոնական դեպոզիտարիայի վերստուգող հանձնաժողովի անդամները:»,

«29.2. Ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի, օպերատորի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ղեկավարի գրանցման միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո ղեկավարի թեկնածուն 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում, Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին: Բացասական արդյունք ապահոված թեկնածուները 15-օրյա ժամկետում կրկին կարող են մասնակցել քննությանը:»,

«29.3. Որակավորող կազմակերպությունների ցանկը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:»,

«29.4. Այն դեպքում, երբ ղեկավար պաշտոնի որակավորման ստուգման անցկացման համար որևէ որակավորող կազմակերպություն չի ընտրվել և (կամ) ընտրված որակավորող կազմակերպության գործունեությունը դադարեցվել է, ապա սույն կանոնակարգի 29.1-րդ կետով սահմանված համապատասխան ղեկավարի որակավորման ստուգման անցկացման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգի համաձայն:»,

16) Կանոնակարգի 30-րդ և 31-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

17) Կանոնակարգի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32. Թեկնածուն գրանցման միջնորդագիրը ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում, Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին:»,

18) Կանոնակարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետը «տեղեկանք» բառից հետո լրացնել «(ոչ ռեզիդենտների համար՝ առկայության դեպքում)» բառերով,

19) Կանոնակարգի 6-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ»,

20) Կանոնակարգի 42-րդ կետում «Թեկնածուները Կենտրոնական բանկում» բառը փոխարինել «Սույն կանոնակարգի 29-րդ կետով, ինչպես նաև 29.1-րդ կետով սահմանված ղեկավարների թեկնածուները համապատասխանաբար Կենտրոնական բանկում և որակավորող կազմակերպություններում» բառերով,

21) Կանոնակարգի 44-րդ կետում «Թեստերը» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերը» բառերով,

22) Կանոնակարգի 45-րդ կետից հետո լրացնել 45.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«45.1. Սույն կանոնակարգի 45-րդ կետով սահմանված՝ աղյուսակի այն կետերը, որոնք վերաբերում են որակավորող կազմակերպություններում որակավորման ստուգում անցնող ղեկավարներին, գործում են միայն սույն կանոնակարգի 29.4-րդ կետով նախատեսված դեպքում:»,

23) Կանոնակարգի 46-րդ կետում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստի» բառերով,

24) Կանոնակարգի 48-րդ կետում «Թեստերի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերի» բառերով,

25) Կանոնակարգի 49-րդ կետում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստի» բառերով,

26) Կանոնակարգի 7-րդ գլխի վերնագրում «ԹԵՍՏԻ» բառից առաջ լրացնել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ» բառերը,

27) Կանոնակարգի 51-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«51. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ սույն կանոնակարգի 29.2-րդ կետով սահմանված 15-օրյա ժամկետում:»,

28) Կանոնակարգի 53-րդ կետում «5 աշխատանքային օրվա» և «15 աշխատանքային օրվա» բառերը փոխարինել համապատասխանաբար «3 աշխատանքային օրվա» և «5 աշխատանքային օրվա» բառերով,

29) Կանոնակարգի 54-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«54. Կենտրոնական բանկում որակավորված թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի համար,
2) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավարի համար,
3) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի համար,
4) օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
5) օպերատորի վերահսկող ծառայության ղեկավարի համար,
6) Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
7) Կենտրոնական դեպոզիտարիայի վերստուգող հանձնաժողովի ղեկավարի պաշտոնի համար,»,

30) Կանոնակարգը 54-րդ կետից հետո լրացնել 54.1-րդ և 54.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«54.1. Որակավորող կազմակերպությունում թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի պաշտոնների համար,
2) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար,
3) ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնների համար,
4) ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,
5) օպերատորի վերահսկող ծառայության անդամի պաշտոնի համար,
6) Կենտրոնական դեպոզիտարիայի վերստուգող հանձնաժողովի անդամի պաշտոնների համար,
7) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձի համար, այդ թվում՝

ա. Բրոքեր՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

բ. Խորհրդատու՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

գ. Դիլեր՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

դ. Կառավարիչ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

ե. Տեղաբաշխող՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

զ. Պահառուի աշխատակից՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից:»,

«54.2. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայական տրամադրվում է այն ղեկավարներին, որոնք բավարարում են սույն կանոնակարգի 10-րդ և (կամ) 14-րդ կետերի պահանջները՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ներդրումային ընկերության գործադիր մարմնի ղեկավարի, գործադիր մարմնի անդամի, գործադիր տնօրենի տեղակալի, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարի, գործադիր մարմնի անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
2) ներդրումային ընկերության մասնաճյուղի տնօրենի պաշտոնի համար,
3) ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավարի, օտարերկրյա ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնների համար,
4) ներդրումային ընկերության ներքին աուդիտի անդամի, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի ներքին աուդիտի անդամի պաշտոնների համար,
5) ներդրումային ընկերության գլխավոր հաշվապահի, գլխավոր հաշվապահի տեղակալի, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գլխավոր հաշվապահի և գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնների համար,
6) բանկերի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի համար,
7) օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
8) օպերատորի կարգապահական հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավարի պաշտոնի համար,
9) օպերատորի վերահսկող ծառայության կամ նման այլ մարմնի ղեկավարի և անդամի պաշտոնների համար,
10) Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի կամ նման այլ մարմնի ղեկավարի և անդամի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
11) Կենտրոնական դեպոզիտարիայի վերստուգող հանձնաժողովի կամ նման այլ մարմնի ղեկավարի և անդամի պաշտոնների համար,

12) ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձի պաշտոնի համար, այդ թվում՝

ա. Բրոքեր՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

բ. Խորհրդատու՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

գ. Դիլեր՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

դ. Կառավարիչ՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

ե. Տեղաբաշխող՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից,

զ. Պահառուի աշխատակից՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծառայություններ մատուցող աշխատակից։»,

31) Կանոնակարգի 55-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«55. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 10-րդ կետի պահանջները բավարարող, Կենտրոնական բանկի կողմից որակավորման ստուգում անցնող ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին։»,

32) Կանոնակարգը 55-րդ կետից հետո լրացնել 55.1-րդ և 55.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«55.1. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 4.1-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 29.1-րդ կետով սահմանված որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին։»,

«55.2. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 4.1-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին։»,

33) Կանոնակարգի 56-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«56. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականները սույն կանոնակարգի 55-րդ, 55.1-րդ, 55.2-րդ կետերով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով անձը ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին։»,

34) Կանոնակարգի 57-րդ կետում՝

ա. «Կենտրոնական բանկի» բառերից հետո լրացնել «կամ որակավորող կազմակերպության» բառերով,

բ. լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հղում է տրվում որակավորող կազմակերպության կայքէջի համապատասխան բաժնին։»,

35) Կանոնակարգի 58-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«58. Թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ, և սույն կանոնակարգի 14-րդ և 29.1-րդ կետերով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ՝ որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակա-

վորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:»,

36) Կանոնակարգը 58-րդ կետից հետո լրացնել 58.1-րդ և 58.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«58.1. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 15 օր առաջ համապատասխան ֆինանսական կազմակերպությունը Կենտրոնական բանկ է դիմում ղեկավարի որակավորման ստուգում անցնելու միջնորդությամբ: Դրական արդյունք ապահոված ղեկավարներին տրամադրվում է նոր որակավորման վկայական՝ քննությունը հանձնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով»,

«58.2. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցնող գրանցված ղեկավարների որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ համապատասխան ֆինանսական կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարներին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

37) Կանոնակարգի 70-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) որակավորման առկայությունը հավաստող փաստաթուղթ՝ որակավորման վկայական (բացառությամբ՝ Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների)»,

38) Կանոնակարգի 88-րդ կետում «թափուր» բառից առաջ լրացնել «(կամ)» բառը,

39) Կանոնակարգի Հավելված 1-ի 6.3-րդ կետի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը» բառերը,

40) Կանոնակարգը լրացնել Հավելված 4.1-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

41) Կանոնակարգի Հավելված 7-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 դեկտեմբերի 2014 թ., N 353-Ն

Հավելված 1

«Հավելված 4.1

«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՊԵՐԱՏՈՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ԴԻՄԵՐԵՍ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____ -ին _____

Անուն, ազգանուն *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

պաշտոնի կամ պաշտոնների անվանումը

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____

(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական

բանկի նախագահ _____

«__»_____ 20__ թ.:

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում է վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտել է որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը այլևս վկայագրի տրման հիմք չէ:

»:

Հավելված 2

«Հավելված 7
«Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ի

Միջնորդագիր
ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)

- թույլ տալ մասնակցել որակավորման քննություններին (լրացվում է միայն Կենտրոնական բանկում որակավորվող ղեկավարների համար)
- տրամադրել որակավորման վկայական՝ առանց քննության միջոցով որակավորման ստուգման
- գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____ :
  (կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Ֆինանսական կազմակերպության (օտարերկրյա ֆինանսական կազմակերպության) կառավարման իրավասու մարմին _____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__»_____ 20__ թ.:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ֆոնդի կառավարիչների և ներդրումային ֆոնդի պահառուների ղեկավարների և պատասխանատու աշխատակիցների գրանցման գործընթացները և օպտիմալացնել այդ գործընթացները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 79-րդ հոդվածի 3-րդ մասը, 88-րդ հոդվածի 3-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը հաստատելու մասին» թիվ 115-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 10-րդ կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
Պաշտոն	Չափանիշ
1) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում	1. Պետք է ունենա. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 3 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 1 տարվա փորձ և Սի-էֆ-էյ (CFA) առնվազն 1 փուլն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) որակավորող կազմակերպությունից ստացված որակավորման վկայական
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում	1. Պետք է ունենա. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 3 տարվա փորձ կամ ակտիվների կառավարման առնվազն 1 տարվա փորձ և Սի-էֆ-էյ-ի (CFA) առնվազն 1 փուլն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Որակավորող կազմակերպությունից ստացված որակավորման վկայական կամ 2. Պետք է ունենա. 1) բարձրագույն կրթություն, 2) էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ (ACCA, CPI) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) Կենտրոնական բանկից ստացված որակավորման վկայական

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

2. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող անձինք	
1) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի ներդրումային քաղաքականության շրջանակներում ֆոնդի ակտիվների ներդրման վերաբերյալ որոշումների կայացում	1. Պետք է ունենա. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 5 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 2 տարվա փորձ և Սի-էֆ-էյ-ի (CFA) առնվազն երկու փուլը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) որակավորող կազմակերպությունից ստացված որակավորման վկայական
2) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում	1. Պետք է ունենա. 1) բարձրագույն կրթություն, 2) ակտիվների կառավարման առնվազն 5 տարվա փորձ, կամ ակտիվների կառավարման առնվազն 2 տարվա փորձ և Սի-էֆ-էյ-ի (CFA) առնվազն երկու փուլն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) որակավորող կազմակերպությունից ստացված որակավորման վկայական կամ 2. Պետք է ունենա. 1) բարձրագույն կրթություն, 2) էյ-Սի-Սի-էյ, Սի-Փի-էյ (ACCA, CPI) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի առկայություն և 3) որակավորող կազմակերպությունից ստացված որակավորման վկայական
3. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ղեկավար	
1) ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավար, օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի ներքին աուդիտի ղեկավար	1. Պետք է ունենա. 1) բարձրագույն կրթություն, 2) առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, 3) միջազգային աուդիտորական որակավորման (Սի-Այ-էյ) փուլերից առնվազն մեկը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական), 4) որակավորող կազմակերպությունից ստացված որակավորման վկայական կամ էյ-ՍԻ-ՍԻ-էյ (ACCA) որակավորման բոլոր մակարդակներն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ

2) Կանոնակարգի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Սույն կանոնակարգով սահմանված կարգով Կենտրոնական բանկի կամ որակավորող կազմակերպության կողմից տրամադրված համապատասխան որակավորումը ստացած են համարվում նաև սույն կանոնակարգի Հավելված 3-ով սահմանված միջազգային հեղինակավոր կազմակերպություններում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն 1 տարի աշխատած, գրանցման գործընթացում գտնվող այն անձինք, ովքեր դրանցում ստանձնել են որակավորման ենթակա պաշտոնին համանման պաշտոնի պարտականություններ և (կամ) զբաղեցրել նմանատիպ պաշտոններ:»,

3) Կանոնակարգի 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Կենտրոնական բանկում անցկացվող որակավորման քննություններին մասնակցելու և համապատասխան որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ է ներդրումային ֆոնդի կառավարչի միջնորդությունը, որում թեկնածուն նախատեսում է զբաղեցնել տվյալ որակավորմանը համապատասխան պաշտոն:»,

4) Կանոնակարգի 13-րդ կետում.

ա. 2-րդ և 4-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել,

բ. լրացնել 9-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) որակավորող կազմակերպություն»՝ Կենտրոնական բանկի որոշմամբ հաստատված կարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից հավաստագրված որակավորող կազմակերպություն:»,

5) Կանոնակարգի ԳԼՈՒԽ 3-ի վերնագրում «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ» բառերից հետո լրացնել «ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» բառերով,

6) Կանոնակարգի 16-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկում» բառերով,
7) Կանոնակարգի 20-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառերով,
8) Կանոնակարգի 21-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել նաև առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու»,
9) Կանոնակարգի 22-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,
10) Կանոնակարգի 24-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկ» բառերով,
11) Կանոնակարգի 27-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառերով,
12) Կանոնակարգի 28-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,
13) Կանոնակարգի 5-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ՊԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

14) Կանոնակարգի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29. Որակավորման ստուգում անցնելու նպատակով Կենտրոնական բանկում համապատասխան ֆինանսական կազմակերպության միջնորդությամբ քննություն են հանձնում ստորև նշված պաշտոններում աշխատելու համար Կենտրոնական բանկ գրանցման դիմած թեկնածուները՝

1) կառավարչի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը,
2) օտարերկրյա կառավարչի գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, գործադիր տնօրենի տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը,
3) կառավարչի գլխավոր հաշվապահը,
4) օտարերկրյա կառավարչի գլխավոր հաշվապահը:»,

15) Կանոնակարգը 29-րդ կետից հետո լրացնել 29.1-րդ, 29.2-րդ, 29.3-րդ և 29.4-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«29.1. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցնելու նպատակով քննություն հանձնում են ստորև նշված պաշտոններում աշխատելու համար դիմող թեկնածուները՝

1) կառավարչի ներքին աուդիտի անդամները, մասնաճյուղի տնօրենը,
2) օտարերկրյա կառավարչի ներքին աուդիտի անդամները,
3) կառավարչի գլխավոր հաշվապահի տեղակալը,
4) օտարերկրյա կառավարչի գլխավոր հաշվապահի տեղակալը,
5) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձը,
6) ֆոնդի պահառուի ղեկավարը և աշխատակիցը:»,

«29.2. Կառավարչի, օտարերկրյա կառավարչի մասնաճյուղի կողմից ղեկավարի գրանցման միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո ղեկավարի թեկնածուն 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում, Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին: Բացասական արդյունք ապահոված թեկնածուները 15-օրյա ժամկետում կրկին կարող են մասնակցել քննությանը:»,

«29.3. Որակավորող կազմակերպությունների ցանկը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:»,

«29.4. Այն դեպքում, երբ ղեկավար պաշտոնի որակավորման ստուգման անցկացման համար որևէ որակավորող կազմակերպություն չի ընտրվել և (կամ) ընտրված որակավորող կազմակերպության գործունեությունը դադարեցվել է, ապա սույն կանոնակարգի 29.1-րդ կետով սահմանված համապատասխան ղեկավարի որակավորման ստուգման անցկացման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգի համաձայն:»,

16) Կանոնակարգի 30-րդ և 31-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,
17) Կանոնակարգի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
18)*«32. Թեկնածուն գրանցման միջնորդագիրը ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում, Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին:»,

* *Պաշտոնական հրատարակության մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ, սակայն խառնաշփոթից խուսափելու նպատակով համարակալումը չի փոխվում:*

19) Կանոնակարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետը «տեղեկանք» բառից հետո լրացնել «(ոչ ռեզիդենտների համար՝ առկայության դեպքում)» բառերով,
20) Կանոնակարգի 6-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ»,
21) Կանոնակարգի 42-րդ կետում «Թեկնածուները» բառը փոխարինել «Սույն կանոնակարգի 29-րդ կետով, ինչպես նաև 29.1-րդ կետով սահմանված ղեկավարների թեկնածուները» բառերով,
22) Կանոնակարգի 44-րդ կետում «Թեստերը» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերը» բառերով,
23) Կանոնակարգը 45-րդ կետից հետո լրացնել 45.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«45.1. Սույն կանոնակարգի 45-րդ կետով սահմանված աղյուսակի այն կետերը, որոնք վերաբերում են որակավորող կազմակերպություններում որակավորման ստուգում անցնող ղեկավարներին, գործում են միայն սույն կանոնակարգի 29.4-րդ կետով նախատեսված դեպքում:»,

24) Կանոնակարգի 46-րդ կետում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստի» բառերով,
25) Կանոնակարգի 48-րդ կետում «Թեստերի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերի» բառերով,
26) Կանոնակարգի 49-րդ կետում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստի» բառերով,
27) Կանոնակարգի 7-րդ գլխի վերնագրում «ԹԵՍՏԻ» բառից առաջ լրացնել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ» բառերը,
28) Կանոնակարգի 51-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«51. Բացասական արդյունք ապահոված թեկնածուները կրկին կարող են մասնակցել քննությանը՝ սույն կանոնակարգի 29.2-րդ կետով սահմանված 15-օրյա ժամկետում:»,

29) Կանոնակարգի 53-րդ կետում «5 աշխատանքային» և «15 աշխատանքային» բառերը փոխարինել համապատասխանաբար «3 աշխատանքային» և «5 աշխատանքային» բառերով,
30) Կանոնակարգի 54-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«54. Կենտրոնական բանկում որակավորման վկայականը տրվում է ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի) և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
2) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավարի համար,
3) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի գլխավոր հաշվապահի համար:»,

31) Կանոնակարգը 54-րդ կետից հետո լրացնել 54.1-րդ և 54.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«54.1. Որակավորող կազմակերպությունում որակավորման վկայականը տրվում է ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի անդամի պաշտոնի համար,
2) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի գլխավոր հաշվապահի տեղակալի համար,
3) ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրենի համար,
4) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի պաշտոնի համար,
5) ֆոնդի պահառուի ղեկավարի և աշխատակցի պաշտոնների համար:»,

«54.2. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայական տրամադրվում է այն ղեկավարներին, որոնք բավարարում են սույն կանոնակարգի 11-րդ և (կամ) 15-րդ կետերի պահանջները՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման.

1) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղի գործադիր տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի) և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնների համար,
2) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի գլխավոր հաշվապահի և գլխավոր հաշվապահի տեղակալի պաշտոնների համար,
3) ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ֆոնդի կառավարչի ներքին աուդիտի ղեկավարի և անդամների պաշտոնների համար,

4) ֆոնդի կառավարչի մասնաճյուղի տնօրենի համար,
5) ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի պաշտոնի համար,
6) ֆոնդի պահառուի ղեկավարի և աշխատակցի պաշտոնների համար:»,

32) Կանոնակարգի 55-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«55. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 4-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 11-րդ կետի պահանջները բավարարող, Կենտրոնական բանկի կողմից որակավորման ստուգում անցնող ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:»,

33) Կանոնակարգը 55-րդ կետից հետո լրացնել 55.1-րդ և 55.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«55.1. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 4.1-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 29.1-րդ կետով սահմանված որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:»,

«55.2. Կենտրոնական բանկի կողմից սույն կանոնակարգի Հավելված 4.1-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 15-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:»,

34) Կանոնակարգի 56-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«56. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականները սույն կանոնակարգի 55-րդ, 55.1-րդ, 55.2-րդ կետերով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով անձը ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:»,

35) Կանոնակարգի 57-րդ կետում.

ա. «Կենտրոնական բանկի» բառերից հետո լրացնել «կամ որակավորող կազմակերպության» բառերով,

բ. լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հղում է տրվում որակավորող կազմակերպության կայքէջի համապատասխան բաժնին:»,

36) Կանոնակարգի 58-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«58. Թեկնածուներին որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ և սույն կանոնակարգի 15-րդ և 29.1-րդ կետերով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:»,

37) Կանոնակարգը 58-րդ կետից հետո լրացնել 58.1-րդ և 58.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«58.1. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 15 օր առաջ համապատասխան ֆինանսական կազմակերպությունը Կենտրոնական բանկ է դիմում ղեկավարի որակավորման ստուգում անցնելու միջնորդությամբ: Դրական արդյունք ապահոված ղեկավարներին տրամադրվում է նոր որակավորման

վկայական՝ քննությունը հանձնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով»,

«58.2. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցնող գրանցված ղեկավարների որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ համապատասխան ֆինանսական կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարներին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

38) Կանոնակարգի 70-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) որակավորման առկայությունը հավաստող փաստաթուղթ՝ որակավորման վկայական (բացառությամբ՝ Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների):»,

39) Կանոնակարգի 88-րդ կետում «թափուր» բառից առաջ լրացնել «(կամ)» բառը:

40) Կանոնակարգի Հավելված 1-ի 6.3-րդ և 8.1-րդ կետի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը» բառերը:

41) Կանոնակարգը լրացնել Հավելված 4.1-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

42) Կանոնակարգի Հավելված 7-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 դեկտեմբերի 2014 թ., N 354-Ն

Հավելված 1
Հավելված 4.1
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի

ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ, ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՎՈՂ ԱՆՁԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ԴԻՄԵՐԵՍ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____ -ին _____
(անուն, ազգանուն) *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

_____
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ՝ _____

«__» _____ 20__ թ.:

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում է վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտել է որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը այլևս վկայագրի տրման հիմք չէ:

Հավելված 2
Հավելված 7
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(անուն, ազգանուն, հայրանուն)

- թույլ տալ մասնակցել որակավորման քննություններին (Կենտրոնական բանկում որակավորվող ղեկավարների համար)
- տրամադրել որակավորման վկայական
- գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես _____:
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկություններ:

Հավաստիացնում եմ, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Ֆինանսական կազմակերպության (օտարերկրյա ֆինանսական կազմակերպության) կառավարման իրավասու մարմին՝

(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__»_____ 20__ թ.

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների գրանցման, ղեկավարների կազմում փոփոխությունների իրականացման և ղեկավարներին որակավորման վկայականների տրամադրման գործընթացները,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի ««Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 241-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 17/01) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգ 17/01-ի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Վճարահաշվարկային կազմակերպությունը տեղեկացնում է Կենտրոնական բանկին իր կանոնադրությունում իրականացված փոփոխություն(ներ)ի և/կամ լրացում(ներ)ի կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ՝ տեղեկանքում նշվելով Արդարադատության նախարարության պետական ռեգիստրում գրանցված՝ իր կանոնադրության վերջին փոփոխության ամսաթիվը:»,

2) Կանոնակարգ 17/01-ի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Սույն կանոնակարգով սահմանված գրանցման, լիցենզավորման կամ այլ գործընթացի համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում (տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում) արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, մասնակիցների փոփոխություն տեղի ունենալու դեպքում ներկայացվում է նաև նոր մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն հավելվածների: Սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին:»,

3) Կանոնակարգ 17/01-ի 17-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, վճարահաշվարկային կազմակերպությունն առնվազն պետք է նշանակի գործադիր տնօրենին, ինչպես նաև գլխավոր հաշվապահին կամ գլխավոր հաշվապահի պարտականությունները

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

իրականացնող անձին (այդ թվում նաև պատվիրակման դեպքում)՝ սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:»,

4) Կանոնակարգ 17/01-ի 80-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարների նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություններ կատարելու վերաբերյալ,»,

5) Կանոնակարգ 17/01-ի 84-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«84. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի պաշտոն(ներ)ը կարող է (են) զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարների կողմից և (կամ) թափուր մնալ ոչ ավելի, քան երեք ամիս՝ սկսած Վճարահաշվարկային կազմակերպության կողմից ղեկավարին պաշտոնից փաստացի ազատելու պահից»,

6) Կանոնակարգ 17/01-ի 92-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«92. Եթե Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարը Կենտրոնական բանկի համապատասխան որոշման հիման վրա զրկվել է որակավորման վկայականից, ապա ղեկավարին որակավորման վկայականից զրկելու մասին Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից 3 տարվա ընթացքում նա չի կարող գրանցվել որպես Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավար»,

7) Կանոնակարգ 17/01-ի 114-րդ կետում «հավաստագրերը» բառից հետո լրացնել «և վերջիններիս առկայության դեպքում Կենտրոնական բանկի կողմից ղեկավարի թեկնածուին տրամադրվում է որակավորման վկայական»,

8) Կանոնակարգ 17/01-ի 115-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«115. Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարները բավարարում են որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները, եթե՝

1) բավարարում են սույն կանոնակարգի 81-րդ կամ 82-րդ և 116-րդ կամ 118-րդ կետերի պահանջները,
2) առկա է սույն կանոնակարգի 143-րդ, 144-րդ կամ 150-րդ կետերով սահմանված որակավորման վկայական/ները՝ վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի պաշտոններում գրանցվելու համար, և
3) առկա է սույն կանոնակարգի 144-րդ կամ 150-րդ կետերով սահմանված որակավորման վկայական/ները՝ վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահի պաշտոնում գրանցվելու համար,

9) Կանոնակարգ 17/01-ի 116-րդ կետի աղյուսակի 1-ին և 2-րդ կետերում հանել «Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակները կամ» բառերը,

10) Կանոնակարգ 17/01-ի 117-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«117. Այն դեպքում, երբ միևնույն անձը գրանցվում է գործադիր տնօրենի/գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնում և գլխավոր հաշվապահի պաշտոնում, ապա նա պետք է բավարարի այդ պաշտոններում գրանցման համար ներկայացվող որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշները:»,

11) Կանոնակարգ 17/01-ի 15-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ) ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ»,

12) Կանոնակարգ 17/01-ի 118-րդ կետում «վրա» բառից հետո լրացնել «Կենտրոնական բանկի կողմից» բառերը,

13) Կանոնակարգ 17/01-ի 120-րդ կետում «Ղեկավարների» բառից հետո լրացնել «(գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ)» բառերը,

14) Կանոնակարգ 17/01-ի 16-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԵՐԸ»,

15) Կանոնակարգ 17/01-ի 150-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«150. Բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի), գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալի, տնօրենության (վարչության) անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի որակավորման վկայական ունեցող անձը կարող է աշխատել որպես Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ՝ առանց Վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի (գործադիր տնօրեն, գործադիր տնօրենի տեղակալ) որակավորման վկայական ստանալու: Բանկի ու օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր

հաշվապահի տեղակալի որակավորման վկայական ունեցող անձը կարող է աշխատել որպես Վճարահաշվարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ առանց Վճարահաշվարկային կազմակերպության, 144-րդ կետում նշված, գլխավոր հաշվապահի որակավորման վկայական ստանալու:»,

16) Կանոնակարգ 17/01-ի 192-րդ կետում «սույն կանոնակարգի 143-րդ կետով սահմանված» բառերը փոփոխել «վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի» բառերով,

17) Կանոնակարգ 17/01-ի Հավելված 2.2-ի 2-րդ կետի «Ֆիզիկական անձի համար փոխկապակցված անձինք են համարվում հայրը, մայրը, ամուսինը և չափահաս երեխաները» նախադասությունը հանել,

18) Կանոնակարգ 17/01-ի Հավելված 5-ի Ձև 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի (կցվում է),

19) Կանոնակարգ 17/01-ի Հավելված 5-ի Ձև 2-ի 6.3-րդ և 8.1-րդ կետերի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը,» բառերը,

20) Կանոնակարգ 17/01-ի Հավելված 6-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ ___»,

21) Կանոնակարգ 17/01-ի Հավելված 10-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ (ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ, ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Այն վճարահաշվարկային կազմակերպությունները, որոնք նախկինում չունեին գրանցված գործադիր տնօրեն կամ գլխավոր հաշվապահ, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում պետք է բավարարեն սույն կանոնակարգի համապատասխան պաշտոնների համար սահմանված պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
19 դեկտեմբերի 2014 թ., N 355-Ն

Հավելված

«Հավելված 5-ի ՀՀ 1
«Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը,
վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը,
վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության
վայրին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 17/01-ի

Միջնորդագիր
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____

(անուն, ազգանուն, հայրանուն)

- թույլ տալ մասնակցել որակավորման քննություններին (Կենտրոնական բանկում որակավորվող ղեկավարների համար)
- տրամադրել որակավորման վկայական
- գրանցել (խորհրդի անդամի համար՝ նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես_____:

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Վճարահաշվարկային կազմակերպության գործադիր տնօրեն
_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

«__»_____ 20__ թ.»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել ներդրումային ֆոնդի կառավարիչների կողմից Կենտրոնական բանկ կանոնադրությունների փոփոխությունների ներկայացման գործընթացը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորում՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորում՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 10/01-ի 67-րդ կետի 1-ին ենթակետում «կատարված փոփոխությունները» բառերից հետո լրացնել «(փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերը,
2) Կանոնակարգ 10/01-ի 68-րդ կետի 3-րդ ենթակետում «փոփոխությունը» բառը փոխարինել «փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
3) Կանոնակարգ 10/01-ի 70-րդ կետի 2-րդ ենթակետում «համապատասխանությունը» բառից հետո լրացնել «և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը» բառերը,
4) Կանոնակարգի Հավելված 6-ի 6.3-րդ և 8.1-րդ կետերի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը» բառերը,
5) Կանոնակարգ 10/01-ի Հավելված 15-ը և Հավելված 16-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 դեկտեմբերի 2014 թ., N 356-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

Հավելված 1

«Հավելված 15
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
կանոնակարգ 10/01-ի

Կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է	ԳՐԱՆՑՎԱԾ է
_____ *(ընկերության իրավասու մարմնի անվանումը)*	ՀՀ կենտրոնական բանկում
__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ	
_____ *(իրավասու անձի պաշտոնը)*	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____ *(անուն, ազգանուն, ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

»:

Հավելված 2

«Հավելված 16
«Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
կանոնակարգ 10/01-ի

Կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
_____
(ընկերության, իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է _____ __/__/_____ թ. թիվ _____որոշմամբ

_____
(իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
_____
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Կենտրոնական բանկ կանոնադրությունների փոփոխությունների ներկայացման գործընթացը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ը հաստատելու մասին» թիվ 14-Ն որոշմամբ հաստատված ««Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ կամ Կանոնակարգ 5/02) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 5/02-ի 6-րդ կետը «Կենտրոնական բանկ է ներկայացվում» բառերից առաջ լրացնել «ինչպես նաև կանոնները (դրանցում փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը)» բառերով,
2) Կանոնակարգ 5/02-ի 61-րդ կետի 2-րդ ենթակետը «կատարված փոփոխությունները» բառերից հետո լրացնել «(փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
3) Կանոնակարգ 5/02-ի 62-րդ կետի 3-րդ ենթակետում «փոփոխված կանոնադրություն» բառերը փոխարինել «կանոնադրության փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
4) Կանոնակարգ 5/02-ի 63-րդ կետի 2-րդ ենթակետում «համապատասխանությունը» բառից հետո լրացնել «և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը» բառերով,
5) Կանոնակարգ 5/01-ի Հավելված 5-ի 6.3-րդ և 8.1-րդ կետերի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը» բառերը,
6) Կանոնակարգ 5/02-ի Հավելված 16-ը և Հավելված 17-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 դեկտեմբերի 2014 թ., N 357-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

Հավելված 1

«Հավելված 16
«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
կանոնակարգ 5/02-ի

Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____

(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ընկերության լրիվ անվանումը

»:

Հավելված 2

«Հավելված 17
«Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում մշտանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ծևը և ժամկետները»
կանոնակարգ 5/02-ի

Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
_____
(ընկերության, իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____
(ստորագրություն)

Փոփոխված է _____ __/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

_____
(իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Ընկերության լրիվ անվանումը
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել կարգավորվող շուկայի օպերատորի կողմից Կենտրոնական բանկ կանոնադրությունների փոփոխությունների ներկայացման գործընթացը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ը հաստատելու մասին» թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ կամ Կանոնակարգ 5/01) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 5/01-ի 6-րդ կետը «Կենտրոնական բանկ է ներկայացվում» բառերից առաջ լրացնել «, ինչպես նաև կանոնները (դրանցում փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը)» բառերով,
2) Կանոնակարգ 5/01-ի 61-րդ կետի 2-րդ ենթակետը «կատարված փոփոխությունները» բառերից հետո լրացնել «(փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
3) Կանոնակարգ 5/01-ի 62-րդ կետի 3-րդ ենթակետում «փոփոխված կանոնադրություն» բառերը փոխարինել «կանոնադրության փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
4) Կանոնակարգ 5/01-ի 63-րդ կետի 2-րդ ենթակետը «համապատասխանությունը» բառից հետո լրացնել «և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը» բառերով,
5) Կանոնակարգ 5/01-ի Հավելված 5-ի 6.3-րդ և 8.1-րդ կետերի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը» բառերը,
6) Կանոնակարգ 5/01-ի Հավելված 16-ը և Հավելված 17-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 դեկտեմբերի 2014 թ., N 358-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

Հավելված 1

«Հավելված 16

«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի

Օպերատորի կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____

(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

--/--/----թ. թիվ ---------որոշմամբ

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ընկերության լրիվ անվանումը

»:

Հավելված 2
«Հավելված 17
«Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի

Օպերատորի կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

_____

(ընկերության, իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____թ. թիվ _____ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ կենտրոնական բանկում

Փոփոխված է _____/__/_____թ. թիվ _____ որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____

(ստորագրություն)

_____

(իրավասու մարմնի անվանումը)

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ընկերության լրիվ անվանումը
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել ներդրումային ընկերությունների կողմից Կենտրոնական բանկ կանոնադրությունների փոփոխությունների ներկայացման գործընթացը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ն ենթակետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 4/01-ի 65-րդ կետում «ժամանակավորապես» բառը փոխարինել «ժամանակավոր» բառով,
2) Կանոնակարգ 4/01-ի 120-րդ կետի 2-րդ ենթակետը «կատարված փոփոխությունները» բառերից հետո լրացնել «(փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
3) Կանոնակարգ 4/01-ի 121-րդ կետի 3-րդ ենթակետում «փոփոխությունը» բառը փոխարինել «փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերով,
4) Կանոնակարգ 4/01-ի 122-րդ կետի 2-րդ ենթակետը «համապատասխանությունը» բառից հետո լրացնել «և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը» բառերով,
5) Կանոնակարգ 4/01-ի 128-րդ կետը «4.1-րդ» բառից հետո լրացնել «, 4.3-րդ» բառով,
6) Կանոնակարգ 4/01-ի Հավելված 8-ի 6.3-րդ կետի վերջին սյունակում լրացնել «Բնակության վայրը» բառերը,
7) Կանոնակարգ 4/01-ի Հավելված 24-ը և Հավելված 25-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 դեկտեմբերի 2014 թ., N 359-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

Հավելված 1

«Հավելված 24
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի

Ներդրումային ընկերության կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

_____

(ընկերության իրավասու մարմնի անվանումը)

__/__/____ թ. թիվ _____ որոշմամբ

_____

(իրավասու անձի պաշտոնը)

_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

»:

Հավելված 2

«Հավելված 25
«Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ի

Ներդրումային ընկերության կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է _____ *(ընկերության, իրավաստու մարմնի անվանումը)* __/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ	ԳՐԱՆՑՎԱԾ է ՀՀ կենտրոնական բանկում
Փոփոխված է _____ __/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ _____ *(իրավաստու մարմնի անվանումը)* _____ *(իրավաստու անձի պաշտոնը)* _____ *(անուն, ազգանուն, ստորագրություն)*	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ _____ *(ստորագրություն)*

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ընկերության (ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը
(փոփոխություն(ներ)/լրացում(ներ)/նոր խմբագրություն)

»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 4-ի թիվ 135-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով արժութային դիլեր-բրոքերի աշխատակցի որակավորման քննությունների կազմակերպման գործընթացին ներգրավել նաև Կենտրոնական բանկի սահմանած չափանիշները բավարարող որակավորում իրականացնող մասնագիտացված կազմակերպություններին,

հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7^1-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 4-ի ««Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ը հաստատելու մասին» թիվ 135-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 12-ի 4.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Սույն կարգի իմաստով՝ որակավորող կազմակերպություն է համարվում Կենտրոնական բանկի կողմից ընտրված կազմակերպությունը, որն իրականացնում է արտարժույթի դիլեր-բրոքերի աշխատակիցների որակավորման ստուգում:»,

2) Կանոնակարգ 12-ի 5-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) լիցենզիայով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար ներկայացված պատասխանատու անձի (այսուհետ՝ աշխատակից) մասնագիտական որակավորման վկայականի պատճենը, եթե մասնագիտական որակավորման վկայականը տրամադրվել է որակավորող կազմակերպության կողմից:»,

3) Կանոնակարգ 12-ի 6-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) աշխատակից մասնագիտական որակավորման վկայականի պատճենը:»,

4) Կանոնակարգ 12-ի 2-րդ գլխի 9-րդ կետի 2 նախադասությունը «նպատակով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված բողոքարկման դիմում ներկայացնելու դեպքում» բառերով,

5) Կանոնակարգ 12-ի 10-րդ կետը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) աշխատակիցը (աշխատակիցները) չունի մասնագիտական որակավորման վկայական կամ 13.4-րդ կետով սահմանված դեպքում աշխատակիցը (աշխատակիցները) չի ստացել Կենտրոնական բանկի կողմից տրվող որակավորման վկայական:»,

6) Կանոնակարգ 12-ի 3-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 3. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻԼԵՐ-ԲՐՈՔԵՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

13. Արժութային դիլեր-բրոքերի աշխատակիցը պետք է ունենա Կենտրոնական բանկի կողմից տրված մասնագիտական որակավորման վկայական (այսուհետ՝ որակավորման վկայական):

13.1. Արժութային դիլեր-բրոքերի աշխատակիցը որակավորման ստուգումն անցնում է որակավորող կազմակերպություններում, որոնց ցանկը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

13.2. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 13.4-րդ կետով սահմանված դեպքում Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած կամ որակավորող կազմակերպության կողմից որակավորման վկայական ստացած անձին:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

13.3. Անձը կարող է դիմել Կենտրոնական բանկ որակավորման վկայական ստանալու նպատակով միայն այն դեպքում, երբ ներկայացվել է արժութային բրոքեր-դիլերի ներդիրում ընդգրկվելու համար արժութային բրոքեր-դիլերի, մասնաճյուղի լիցենզավորման փուլում կամ ներդիրի վերաձևակերպման ժամանակ, ինչպես նաև սույն կանոնակարգի 23.1-րդ կետով սահմանված դեպքում:

13.4. Այն դեպքում, երբ որևէ կազմակերպություն Կենտրոնական բանկի կողմից չի ընտրվել որպես որակավորող կազմակերպություն և (կամ) որակավորող կազմակերպության գործունեությունը դադարեցվել է, որակավորման ստուգման անցկացման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգի համաձայն: Սույն կետով նախատեսված դեպքում սույն կանոնակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ կամ 24-րդ կետերում նշված փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպվում է որակավորման վկայական չունեցող աշխատակցի (աշխատակիցների) մասնագիտական որակավորման ստուգման քննության անցկացումը Կենտրոնական բանկում:

13.5. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի կամ որակավորող կազմակերպության ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հղում է տրվում որակավորող կազմակերպության կայքէջին:

14. Որակավորման վկայական ստանալու համար արժութային դիլեր-բրոքերի աշխատակիցը պետք է գիտելիքներ ունենա հետևյալ թեմաների վերաբերյալ՝

1) «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք,
2) «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեության լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12,
3) «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք (Կենտրոնական բանկի կողմից արժութային դիլեր-բրոքերների նկատմամբ իրականացվող ստուգումների և վերահսկողության, ինչպես նաև արժութային դիլեր-բրոքերներին պատասխանատվության ենթարկելու կարգի ու պայմանների վերաբերյալ իմացություն),
4) «Ֆինանսական հաշտարարի մասին» ՀՀ օրենք,
5) արժութային դիլեր-բրոքերների կողմից իրականացվող գործառնությունների իմացություն:

15. Կենտրոնական բանկում արժութային դիլեր-բրոքերի աշխատակցի մասնագիտական որակավորման վկայական ստանալու համար դիմող անձանց (այսուհետ՝ թեկնածուներ) մասնագիտական համապատասխանության քննությունը (այսուհետ՝ քննություն) անցկացվում է համակարգչային ծրագրով՝ թեստային եղանակով: Թեստը հարցեր պարունակող փաստաթուղթ է, որը մշակվում է սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված թեմաների շրջանակներում:

16. Կենտրոնական բանկի կողմից կազմված թեստը պարունակում է 30 հարց: Թեստին պատասխանելու համար տրվում է 45 րոպե ժամանակ: Թեստի հարցերից յուրաքանչյուրը պարունակում է մի քանի պատասխան, որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտ: Թեստի հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Սխալ պատասխաններ են համարվում միանշանակ սխալ և ոչ միանշանակ ճիշտ պատասխան նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը կամ որևէ պատասխան չնշելը:

17. Կենտրոնական բանկում անցկացվող քննության թեստերի պատասխանների գնահատումն ու ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ. եթե թեկնածուն հավաքել է՝

1) մինչև 25 միավոր, ապա թեկնածուն համարվում է բացասական արդյունք ապահոված,
2) 25 և ավելի միավոր, ապա թեկնածուն համարվում է դրական արդյունք ապահոված:

18. Թեկնածուները Կենտրոնական բանկում քննությանը մասնակցում են՝ քննության օրը ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և դրա պատճենը,
2) պետական տուրքի վճարման անդորրագիր,
3) հանրային ծառայությունների համարանիշ (ոչ ռեզիդենտների համար՝ առկայության դեպքում) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը:

19. Կենտրոնական բանկում քննությունն անցկացվում է հետևյալ ընթացակարգով.

1) Քննությունն անցկացվում է առանձնացված սենյակում, որը վերահսկվում է տեսախցիկների միջոցով:
2) Թեկնածուին թույլատրվում է մուտք գործել քննության անցկացման սենյակ անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացման դեպքում՝ ըստ նախապես կազմված ցուցակի նստելով համապատասխան համակարգչի մոտ: Ուշացած թեկնածուների համար քննության տևողությունը չի երկարաձգվում:

3) Թեկնածուներին տրվում են բացատրություններ քննության անցկացման հետ կապված տեխնիկական հարցերի վերաբերյալ:
4) Քննության սկիզբը հայտարարելուց հետո թեկնածուն ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի (խնդրի) ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ նշվածներից միանշանակ ճիշտ) պատասխան:
5) Քննության ժամանակ թեկնածուին արգելվում է օգտվել տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութերից, էլեկտրոնային սարքերից (բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հաշվիչների), ինչպես նաև՝ աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, դուրս գալ սենյակից: Եթե թեկնածուն ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված: Նշված պահանջներից յուրաքանչյուրի չկատարման դեպքում թեկնածուն զրկվում է քննության հետագա ընթացքին մասնակցելու իրավունքից և համարվում է բացասական արդյունք ապահոված:
6) Աշխատանքն ավարտելուց, ինչպես նաև քննության առաջադրանքները կատարելու համար սահմանված ժամանակը սպառվելուց հետո թեկնածուին տրվում է իր հանձնած թեստի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (երկու օրինակից), որտեղ արտացոլվում են թեկնածուի միավորները տոկոսային արտահայտությամբ: Հաշվետվությունները ստորագրվում են թեկնածուի կողմից, որոնցից մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկում, մյուսը տրվում է թեկնածուին:

20. Կենտրոնական բանկում անցկացվող քննության թեստերի հարցերի պատասխանների արդյունքները (ելնելով համակարգչային տվյալներից) հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որի դրական եզրակացության հիման վրա թեկնածուին տրվում է որակավորման վկայական:

21. Կենտրոնական բանկում որակավորված թեկնածուները կարող են բողոքարկել անցկացված քննության արդյունքները քննության անցկացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ գրավոր դիմում ներկայացնելով Կենտրոնական բանկ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի, կամ դիմումը լրացնելով Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի համապատասխան էջում: Դիմումը ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է բողոքարկողին բողոքարկման արդյունքների վերաբերյալ:

22. Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականը, համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի, տրվում է որակավորման ստուգում անցած թեկնածուներին կամ Որակավորող կազմակերպության կողմից տրված որակավորման վկայական ներկայացրած անձին՝ էլեկտրոնային եղանակով՝ ուղարկվելով թեկնածուի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին քննությունը հանձնելու օրվանից կամ սույն կանոնակարգի 9-րդ կետով սահմանված կարգով արժութային բրոքեր-դիլերի, մասնաճյուղի լիցենզիայի տրման կամ 26-րդ կետով սահմանված կարգով լիցենզիայի ներդիրի վերաձևակերպման օրվանից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

23. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած անձին որակավորման վկայականը տրվում է երեք տարի ժամկետով՝ հաշված դրա ստորագրման պահից: Որակավորող կազմակերպությունից ստացած որակավորման վկայականի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից որակավորման վկայականը տրվում է մինչև հիմք հանդիսացող որակավորման վկայականի վավերականության ավարտը:

23.1. Գործող արժութային բրոքեր-դիլերի ներդիրում ընդգրկված աշխատակցի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ՝ բացառությամբ սույն կանոնակարգի 13.4-րդ կետով սահմանված դեպքի, արժութային բրոքեր-դիլերը Կենտրոնական բանկ է ներկայացնում աշխատակցի որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով աշխատակցի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա ղեկավարին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով: Սույն կանոնակարգի 13.4-րդ կետով սահմանված դեպքում աշխատակցի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ արժութային բրոքեր-դիլերը Կենտրոնական բանկ է ներկայացնում աշխատակցի համար որակավորման ստուգման քննություն անցկացնելու դիմում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

23.2. Կենտրոնական բանկում որակավորված անձինք որակավորման վկայականները 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով չստանալու կամ էլեկտրոնային փոստի խափանման դեպքում կարող են այդ մասին հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում Կենտրոնական բանկի նախագահի անունով՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով նա ցան-

կանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով նրա դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:»:

5) Կանոնակարգ 12-ի 25-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
6) Կանոնակարգ 12-ի 29-րդ կետը «կամ» բառից հետո լրացնել «Կենտրոնական բանկի կողմից տրամադրված» բառերով:
7) Կանոնակարգ 12-ի 30-րդ կետի առաջին նախադասությունը «կամ» բառից հետո լրացնել «Կենտրոնական բանկի կողմից տրամադրված» բառերով:
8) Կանոնակարգ 12-ի հավելված 3-ի 1-ին կետը 1.8-րդ ենթակետից հետո լրացնել 1.9 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.9. Մասնագիտական որակավորման վկայականի առկայություն.
ա. առկա է որակավորող կազմակերպության կողմից տրված վկայական,
բ. առկա է Կենտրոնական բանկի կողմից տրված վկայական,
գ. Կանոնակարգի 13.4-րդ կետի հիմքով անհրաժեշտ է քննության կազմակերպում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 դեկտեմբերի 2014 թ., N 361-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 738-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել գրավատների անվտանգության պահանջները,

հիմք ընդունելով «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 19-ի ««Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգը» և «Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիայի ձևը» հաստատելու մասին» թիվ 738-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կարգի 3-րդ կետի «զ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայության հետ կնքված պայմանագրի պատճենն առ այն, որ գրավատան պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը միացված է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնի «911» ծառայությանը,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 դեկտեմբերի 2014 թ., N 362-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման քննությունների կազմակերպման գործընթացին ներգրավել նաև Կենտրոնական բանկի սահմանած չափանիշները բավարարող որակավորման ստուգում իրականացնող մասնագիտացված կազմակերպություններին,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 9^2-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի ««Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ը հաստատելու մասին» թիվ 194-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 13) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 13-ի 22-րդ կետը լրացնել նոր 15-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«15) «Որակավորող կազմակերպություն»՝ Կենտրոնական բանկի կողմից ընտրված կազմակերպություն, որն իրականացնում է ղեկավարների որակավորման ստուգում:»,

2) Կանոնակարգ 13-ի 70-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«70. Կենտրոնական բանկում ղեկավար պաշտոնների համար նախատեսված քննություններին մասնակցում և համապատասխան որակավորման վկայական են ստանում միայն վարկային կազմակերպության գործադիր տնօրենի, վարչության նախագահի, գործադիր տնօրենի տեղակալի, վարչության նախագահի տեղակալի, տնօրենության անդամի, վարչության անդամի, վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարի, գլխավոր հաշվապահի թեկնածուները: Ընդ որում, սույն կետով նշված ղեկավար պաշտոնների թեկնածուները Կենտրոնական բանկում նախատեսված քննություններին կարող են մասնակցել միայն այն վարկային կազմակերպության միջնորդությամբ, որում նախատեսում են զբաղեցնել տվյալ որակավորմանը համապատասխան պաշտոն:»,

3) Կանոնակարգ 13-ը լրացնել 70.1-րդ և 70.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«70.1. Ղեկավարները՝ բացառությամբ սույն կանոնակարգի 70-րդ կետով սահմանված ղեկավարների, որակավորվում են որակավորող կազմակերպություններում, որոնց ցանկը հրապարակվում է Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում:

70.2. Այն դեպքում, երբ ղեկավար պաշտոնի որակավորման ստուգման անցկացման համար որևէ որակավորող կազմակերպություն չի ընտրվել, և (կամ) ընտրված որակավորող կազմակերպության գործունեությունը դադարեցվել է, ապա սույն կանոնակարգի 70.1-րդ կետով սահմանված համապատասխան ղեկավարի որակավորման ստուգման անցկացման գործընթացը կազմակերպվում է Կենտրոնական բանկում՝ սույն կանոնակարգով սահմանված ընթացակարգի համաձայն:»,

4) Կանոնակարգ 13-ի 72-րդ կետում՝

ա. «Կենտրոնական բանկի» բառերից հետո լրացնել «և որակավորող կազմակերպությունների» բառերը,

բ. «և լրացուցիչ որակավորման ստուգում անցնելու կարիք չունեն» բառերը հանել:

5) Կանոնակարգ 13-ի 14-րդ գլխի վերնագրում «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ» բառերից հետո լրացնել «ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» բառերով,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 16-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

6) Կանոնակարգ 13-ի 75-րդ կետում «բանկի խորհրդի նիստում» բառերը փոխարինել «բանկում» բառով,
7) Կանոնակարգ 13-ի 79-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառով,
8) Կանոնակարգ 13-ի 80-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Վարկային կազմակերպության խորհրդի անդամի թեկնածուի գիտելիքների համապատասխանության վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել նաև առանց խորհրդի անդամի թեկնածուին հարցազրույցի հրավիրելու:»,
9) Կանոնակարգ 13-ի 81-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,
10) Կանոնակարգ 13-ի 83-րդ կետում «բանկի խորհրդում» բառերը փոխարինել «բանկում» բառով,
11) Կանոնակարգ 13-ի 86-րդ կետում «Կենտրոնական բանկի խորհուրդն ընդունում է» բառերը փոխարինել «ընդունվում է» բառով,
12) Կանոնակարգ 13-ի 87-րդ կետում հանել «Կենտրոնական բանկի խորհրդի» բառերը,
13) Կանոնակարգ 13-ի 16-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 16. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՊԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»,

14) Կանոնակարգ 13-ի 88-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
15) Կանոնակարգ 13-ի 89-րդ և 90-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«89. Կենտրոնական բանկ գրանցման համար դիմած վարկային կազմակերպության սույն կանոնակարգի 70-րդ կետում նշված ղեկավարի թեկնածուները որակավորման ստուգումն անցնում են Կենտրոնական բանկի թեստավորման ծառայության (այսուհետ՝ թեստավորման ծառայություն) կողմից կազմակերպվող քննության միջոցով:

90. Վարկային կազմակերպության կողմից ղեկավարի գրանցման միջնորդագիրը Կենտրոնական բանկ ներկայացնելուց հետո ղեկավարի թեկնածուն 15-օրյա ժամկետում անցնում է որակավորման ստուգում, ընդ որում՝ Կենտրոնական բանկը նախապես թեկնածուին տեղեկացնում է քննության ստույգ օրվա մասին:»,

16) Կանոնակարգ 13-ի 91-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
17) Կանոնակարգ 13-ի 92-րդ կետի 3-րդ ենթակետում «տեղեկանք» բառից հետո լրացնել «(ոչ ռեզիդենտները ներկայացնում են առկայության դեպքում)» բառերով,
18) Կանոնակարգ 13-ի 100-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«100. Սույն կանոնակարգի 70-րդ կետով, ինչպես նաև 70.1-րդ կետով սահմանված ղեկավարների թեկնածուները համապատասխանաբար Կենտրոնական բանկում և Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգումն անցնում են սույն կանոնակարգի Հավելված 24-ում ներկայացված աղյուսակում նշված թեմաներով, ընդ որում, «+» նշանը նշանակում է, որ տվյալ թեման վերաբերում է, իսկ «-» նշանը՝ չի վերաբերում:»,

19) Կանոնակարգ 13-ի 102-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«102. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեստերը, ինչպես նաև դրանցում կատարված լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Կենտրոնական բանկի նախագահի անհատական որոշմամբ և ենթակա են հրապարակման: Թեստերը վերանայվում են ըստ անհրաժեշտության:»,

20) Կանոնակարգ 13-ը լրացնել 103.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«103.1. Սույն կանոնակարգի 103-րդ կետով սահմանված աղյուսակի այն կետերը, որոնք վերաբերում են որակավորող կազմակերպություններում որակավորման ստուգում անցնող ղեկավարներին գործում են միայն սույն կանոնակարգի 70.2-րդ կետով նախատեսված դեպքում:»,

21) Կանոնակարգ 13-ի 104-րդ կետում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար նախատեսված թեստի» բառերով,
22) Կանոնակարգ 13-ի 105-րդ կետում «չտիրապետող թեկնածուների» բառերը փոխարինել «չտիրապետող, Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարի թեկնածուների» բառերով,
23) Կանոնակարգ 13-ի 106-րդ և 107-րդ կետերում «Թեստի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների թեկնածուների համար նախատեսված թեստի» բառերով,
24) Կանոնակարգ 13-ի 18-րդ գլխի վերնագրում «ԹԵՍՏԻ» բառը փոխարինել «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑՆՈՂ ՊԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ» բառերով,

25) Կանոնակարգ 13-ի 108-րդ կետում «Թեստերի» բառը փոխարինել «Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարի թեկնածուի (սույն գլխում այսուհետ՝ թեկնածու) համար նախատեսված թեստի» բառերով,

26) Կանոնակարգ 13-ի 109-րդ կետում «համապատասխան որակավորման վկայական ստանալու համար» բառերը փոխարինել «սույն կանոնակարգի 90-րդ կետով սահմանված ժամկետում» բառերով,

27) Կանոնակարգ 13-ի 111-րդ կետում «15» թիվը փոխարինել «5» թվով,

28) Կանոնակարգ 13-ի 19-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 19. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

112. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած ղեկավարներին տրվում են որակավորման վկայականներ՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման՝

1) վարկային կազմակերպության գործադիր տնօրեն, (վարչության նախագահ), գործադիր տնօրենի տեղակալ, (վարչության նախագահի տեղակալ), տնօրենության անդամ (վարչության անդամ),

2) վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ,

3) վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ:

112.1. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած ղեկավարի թեկնածուներին տրվում են որակավորման վկայականներ՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման՝

1) գլխավոր հաշվապահի տեղակալ,

2) վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

112.2. Սույն կանոնակարգի 72-րդ և 74-րդ կետերով սահմանված պահանջները բավարարող ղեկավարներին տրվում են որակավորման վկայականներ՝ ըստ պաշտոնների հետևյալ խմբավորման՝

1) վարկային կազմակերպության գործադիր տնօրեն (վարչության նախագահ), գործադիր տնօրենի տեղակալ (վարչության նախագահի տեղակալ), տնօրենության (վարչության) անդամ,

2) վարկային կազմակերպության գլխավոր հաշվապահ, գլխավոր հաշվապահի տեղակալ,

3) վարկային կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

113. Սույն կանոնակարգի Հավելված 26-ով սահմանված որակավորման վկայականը Կենտրոնական բանկի կողմից տրամադրվում է Կենտրոնական բանկում քննություն հանձնած վարկային կազմակերպության ղեկավարին, սույն կանոնակարգի 72-րդ կետի պահանջները բավարարող ղեկավարին էլեկտրոնային եղանակով՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ղեկավարին Կենտրոնական բանկում գրանցելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

114. Սույն կանոնակարգի Հավելված 27-ով սահմանված որակավորման վկայականը տրվում է սույն կանոնակարգի 74-րդ կետով սահմանված որակավորում ունեցող ղեկավարին, ինչպես նաև որակավորող կազմակերպության կողմից համապատասխան ղեկավարի պաշտոնի որակավորման վկայական ստացած ղեկավարին՝ Կենտրոնական բանկում գրանցվելու օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղարկվելով ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքում ներկայացված էլեկտրոնային փոստին:

115. Որակավորման վկայականները սույն կանոնակարգի 113-րդ և 114-րդ կետերով սահմանված ժամկետներում էլեկտրոնային փոստին չստանալու, էլեկտրոնային փոստի խափանման կամ թղթային եղանակով տրամադրված որակավորման վկայականների կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Կենտրոնական բանկ՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով անձը ցանկանում է ստանալ որակավորման վկայականը: Դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում որակավորման վկայականը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկվելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:

116. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Կենտրոնական բանկի կամ որակավորող կազմակերպության ինտերնետային կայքում՝ «Որակավորման վկայական ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից (սույն կանոնակարգում սահմանված դեպքերում ղեկավարի գրանցումից հետո տրամադրելու դեպքում՝ որպես ղեկավար գրանցման օրվանից) հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում, Կենտրոնական բանկի ինտերնետային կայքում հղում է տրվում որակավորող կազմակերպության կայքէջին:

117. Թեկնածուների որակավորման վկայականները տրվում են դրանց ստորագրման պահից հաշված 3 տարի ժամկետով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 72-րդ կետով սահմանված անձանց

տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են անժամկետ, և սույն կանոնակարգի 70.1-րդ և 74-րդ կետով սահմանված անձանց տրվող որակավորման վկայականների, որոնք տրվում են մինչև որակավորման վկայականի տրման հիմք հանդիսացող որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը կամ տվյալ որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի՝ որակավորման վկայականի տրամադրման հիմք հանդիսանալու ավարտը կամ անձի կողմից այնպիսի գործողության կամ անգործության կատարումը, որի հետևանքով խախտվել են որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

118. Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցած և գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 15 օր առաջ վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է դիմում ղեկավարի համար որակավորման ստուգման քննություն անցկացնելու միջնորդությամբ: Որակավորման ստուգում անցած ղեկավարին տրամադրվում է նոր որակավորման վկայական՝ քննությունը հանձնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

118.1. Որակավորող կազմակերպությունում որակավորման ստուգում անցած և գրանցված ղեկավարի որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա ղեկավարին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:

118.2. Կենտրոնական բանկում գրանցված ղեկավարի, որը ստացել է սույն կանոնակարգի 74-րդ կետով սահմանված ղեկավարի իր պաշտոնին համապատասխան որակավորում, նախկինում ստացված որակավորման վկայականի ժամկետը լրանալուց առնվազն 5 օր առաջ վարկային կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում որակավորման վկայականի ստացման համար դիմում՝ կցելով ղեկավարի որակավորումը հավաստող փաստաթուղթը: Կենտրոնական բանկը որակավորումը հավաստող փաստաթղթի հիման վրա ղեկավարին տրամադրում է նոր որակավորման վկայական՝ դիմումը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սույն կանոնակարգով սահմանված կարգով:»,

29) Կանոնակարգ 13-ի 132-րդ կետը լրացնել նոր 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) որակավորման առկայությունը հավաստող փաստաթուղթ (որակավորման վկայական), որը Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար չի ներկայացվում:»,

30) Կանոնակարգ 13-ի 147-րդ կետում «ղեկավարների կազմում փոփոխությունները տեղի ունենալուց հետո» բառերը փոխարինել «գրանցումից հանելու վերաբերյալ վարկային կազմակերպության իրավասու մարմնի կողմից ընդունված որոշման ուժի մեջ մտնելու պահից» բառերով,

31) Կանոնակարգ 13-ի 149-րդ կետում «կողմից և» բառերը փոխարինել «կողմից և (կամ)» բառերով,

32) Կանոնակարգ 13-ի 165-րդ կետում՝

ա. «10 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը հանել,

բ. առաջին ենթակետում «կատարված փոփոխությունները» բառերից հետո լրացնել «(փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը» բառերը,

33) Կանոնակարգ 13-ի 166-րդ կետի երրորդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) վարկային կազմակերպության, վարկային կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տարածքային ստորաբաժանման կանոնադրության փոփոխված դրույթները (փոփոխություն(ներ)ը և (կամ) լրացում(ներ)ը) կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը, որոնք պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 29-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,»,

34) Կանոնակարգ 13-ի 167-րդ կետում «համապատասխանությունը» բառից հետո լրացնել «, և Կենտրոնական բանկ կներկայացվեն տարածքի և տեխնիկական հագեցվածության համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը» բառերը,

35) Կանոնակարգ 13-ի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է),

36) Կանոնակարգ 13-ի Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է),

37) Կանոնակարգ 13-ի Հավելված 4-ի 6.3-րդ և 8.1-րդ կետերում «Հեռախոսահամար (բջջ. և այլ)» բառերը փոխարինել «Բնակության վայր, հեռախոսահամար (բջջ. և այլ)» բառերով,

38) Կանոնակարգ 13-ի Հավելված 27-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է),

39) Կանոնակարգ 13-ի Հավելված 29-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ 1-ին կետի 1-5-րդ, 13-16-րդ, 18-29-րդ, 36-րդ և 38-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 դեկտեմբերի 2014 թ., N 363-Ն

Հավելված 1

«Հավելված 2
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպության կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է	ԳՐԱՆՑՎԱԾ Է
_____ *(վարկային կազմակերպության իրավասու մարմնի անվանումը)*	ՀՀ կենտրոնական բանկում
__/__/____ թ. թիվ _____ որոշմամբ	
_____ *(իրավասու անձի պաշտոնը)*	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ _____ *(ստորագրություն)*
_____ *(անուն, ազգանուն, ստորագրություն)*	

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Վարկային կազմակերպության (վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

»:

Հավելված 2

«Հավելված 3
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
Ղեկավարի գրանցման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____
(ղեկավարի թեկնածուի անունը, ազգանունը)

☐ թույլ տալ մասնակցել որակավորման քննություններին (Կենտրոնական բանկում որակավորման ստուգում անցնող ղեկավարների համար)

☐ տրամադրել որակավորման վկայական՝ առանց քննության միջոցով որակավորման ստուգման

☐ գրանցել (խորհրդի անդամի համար նաև ստուգել մասնագիտական համապատասխանությունը) որպես

_____
(վարկային կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում եմ, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և կարգերով սահմանված պահանջներին, և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականին:

Վարկային կազմակերպության կառավարման մարմնի իրավասու անձի անուն, ազգանուն, ստորագրություն _____

«__»_____ 20__ թ.»:

Հավելված 3

«Հավելված 27
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ԴԻՄԵՐԵՍ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն N

Սույն վկայականը տրվում է

_____ -ին _____
(անուն, ազգանուն) *(հանրային ծառայությունների համարանիշ, իսկ բացակայության դեպքում՝ անձնագրի տվյալներ)*

վարկային կազմակերպության _____
(պաշտոնի կամ պաշտոնների անվանումը)

պաշտոնում (պաշտոններում) աշխատելու համար:

Վկայականի տրման հիմք է հանդիսանում _____
(որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը)

Սույն վկայականն ուժի մեջ է մինչև որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի վավերականության ավարտը:

ՀՀ կենտրոնական
բանկի նախագահ _____

«__» _____20__ թ.:

ԴԱՐՁԵՐԵՍ

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե վերջինիս տրման համար հիմք հանդիսացող որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրը կորցնում է վավերականությունը:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե անձը կատարել է այնպիսի գործողություն կամ թույլ է տվել այնպիսի անգործություն, որի հետևանքով խախտել են որակավորման, դիպլոմի կամ հավաստագրի տրամադրման և (կամ) պահպանման կանոնները:

Սույն վկայականն ուժը կորցրած է ճանաչվում, եթե համապատասխան փոփոխությունների արդյունքում տվյալ որակավորումը, դիպլոմը կամ հավաստագիրն այլևս վկայագրի տրման հիմք չէ:

»:

Հավելված 4

«Հավելված 29
«Վարկային կազմակերպության գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 13-ի

Վարկային կազմակերպության կանոնադրության փոփոխության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
_____
(վարկային կազմակերպության իրավասու մարմնի անվանումը)

__/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ

Փոփոխված է _____ __/__/_____ թ. թիվ _____ որոշմամբ
(իրավասու մարմնի անվանումը)

_____
(իրավասու անձի պաշտոնը)

_____
(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

_____
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____
Վարկային կազմակերպության (վարկային կազմակերպության մասնաճյուղի կամ ներկայացուցչության) լրիվ անվանումը

_____
(փոփոխություն(ներ) և (կամ) լրացում(ներ) կամ նոր խմբագրություն)

»:

«Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգը» հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով բարելավել բանկերից ստացվող տվյալների որակը, օպտիմալացնել բանկերի հաշվետվական համակարգը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերից համապարփակ տվյալների ստացման կարգը»՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 1-ին: 2015 թվականի մարտ և ապրիլ հաշվետու ամիսների համար հաշվետվությունները ներկայացվում են 2015 թվականի մայիսի 15-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
14 հունվարի 2015 թ., N 377-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ

ԲԱՆԿԵՐԻՑ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է հաշվետու բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև հաշվետու բանկի հետ ակտիվ կամ պարտավորություն առաջացնող գործարք իրականացրած անձանց վերաբերյալ տեղեկատվությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացնելու սկզբունքները:

2. Սույն կարգում ներկայացվում է «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» և «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվությունների լրացման կարգը:

3. Հաշվետվություններում հաշվետու բանկի հաճախորդների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է ակտիվի կամ պարտավորության ծագման պահի դրությամբ առկա արժանահավատ տեղեկատվության հիման վրա, որը պետք է ճշգրտվի առնվազն հաշվետու բանկի՝ ակտիվների և պարտավորությունների գծով իրականացվող մոնիտորինգի պարբերականությանը համապատասխան:

4. Հաշվետվությունների այն սյունակներում, որտեղ պահանջվում է լրացնել ծավալային տվյալներ, ապա.

1) լրացվում է 0, եթե տվյալ հոդվածի գծով հաշվետվությունում պահանջվող այլ մնացորդների առկայության դեպքում տվյալ մնացորդը հավասար է զրոյի,
2) չի լրացվում, եթե տվյալ սյունակը տվյալ հոդվածի համար ենթակա չէ լրացման:

5. Հաշվետվություններում գումարները լրացվում են հազար դրամներով՝ կետից հետո երեք նիշի ճշտությամբ, իսկ տոկոսադրույքները լրացվում են կետից հետո երկու նիշի ճշտությամբ:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2014 թ. դեկտեմբերի 30-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 9.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

6. Հաշվետվությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով՝ հաշվետու ժամանակահատվածին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը: Սույն կարգում հաշվետու ժամանակահատվածը սահմանվում է մեկ ամիսը: Հաշվետվություններում նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը: Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր.ամիս.տարի (օրինակ՝ 31.01.2023):

7. «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» և «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվությունների ֆայլերի կոդերը պետք է ունենան համապատասխանաբար հետևյալ կառուցվածքը. «XXXXX_soushi asset.xlsx» և «XXXXX_soushi liab.xlsx», որտեղ XXXXX-ի փոխարեն լրացվում է բանկի 5-անիշ կոդը:

8. Հաշվետվություններում մեկ տարին պետք է ընդունել 365 կամ 366 օր:

9. Հաշվետվություններում սահմանված միջակայքերի վերին սահմանները չեն ընդգրկվում տվյալ միջակայքերում (օրինակ՝ «1-ից 2 տարի» միջակայքում 2-րդ տարին չի ընդգրկվում), եթե հաջորդող միջակայքերի վերին և ստորին սահմանները համընկնում են:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10. Սույն կարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***«Հաշվային պլան»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլան»,
2) ***«Դասակարգման կարգ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ» և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման կարգ»,
3) ***«Լրացուցիչ պահուստավորման կարգ»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մայիսի 29-ի թիվ 143Ա որոշմամբ հաստատված «Առանց ակտիվների դասակարգման լրացուցիչ պահուստավորում իրականացնելու կարգ»,
4) ***«Բանկի աշխատակից»***՝ հաշվետու բանկի հետ որոշակի կամ անորոշ ժամկետով կնքած պայմանագրով աշխատող անձ,
5) ***«Վարկանշային գործակալություն»***՝ Moody's Investors Service (Մուդիզ Ինվեստորս Սերվիս), Standard & Poor's (Ստանդարտ և Փուրզ), Fitch Ratings (Ֆիտչ Ռեյտինգս), A.M. Best (Ա.Մ. Բեստ) վարկանշային գործակալություններ,
6) ***«Առևտրային կազմակերպություն»***՝ շահույթ հետապնդող կազմակերպություն, որը գործում է սույն կարգի հավելված 2-ի 2-րդ կետի 1-10-րդ և 12-17-րդ ենթակետերում սահմանված բնագավառներում,
7) ***«Ենթահաշվետվություն»***՝ ակտիվների կամ պարտավորությունների որոշ տեսակները բնութագրող տվյալների համախումբ,
8) ***«Ակտիվ»***՝ հաշվային պլանի «Ակտիվներ» կարգում հաշվառվող ու պահանջ հանդիսացող ակտիվները (բացառությամբ՝ հաշվետու բանկի՝ իր մասնաճյուղերի նկատմամբ հաշվարկների), անհուսալի դասակարգված ակտիվները, բլանկային ակտիվները, ածանցյալ գործիքների գծով ապագայում ստացվելիք գումարները, հետհաշվեկշռային պայմանական ակտիվները և տրված ակտիվների գծերի չօգտագործված մասերը,
9) ***«Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդ (արժեք)»***՝ ակտիվի գծով հաշվեկշռում հաշվեգրված գումարը, ներառյալ՝ տոկոսները, շահաբաժինները, տույժերը և տուգանքները (առկայության դեպքում)՝ նվազեցրած չկրած ֆինանսական եկամուտները (առկայության դեպքում) և չնվազեցրած պահուստները,
10) ***«Պարտավորություն»***՝ հաշվային պլանի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող պարտավորությունները, ածանցյալ գործիքների գծով ապագայում վճարվելիք գումարները և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները (բացառությամբ՝ վարկային և միջոցների այլ գծերի),

11) ***«Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդ (արժեք)»***՝ պարտավորության գծով հաշվեկշռում հաշվեգրված գումարը, ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները (առկայության դեպքում) ու նվազեցրած չկրած ֆինանսական ծախսերը (առկայության դեպքում),
12) ***«երկարաժամկետ ստորադաս փոխառություն»***՝ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 2) սահմանված նշանակության,
13) ***«Կրեդիտորական պարտք»***՝ հաշվեկշռային պարտավորությունների բոլոր տեսակները, որոնք սահմանված չեն «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում,
14) ***«Դեբիտորական պարտք»***՝պահանջ հանդիսացող հաշվեկշռային ակտիվների բոլոր տեսակները, որոնք չեն ներկայացվում «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվության շրջանակներում,
15) ***«Վերականգնվող վարկային գիծ և օվերդրաֆտ»***՝վարկային գիծ և օվերդրաֆտ, որի օգտագործված մասը մարվելու դեպքում պայմանագրով նախատեսվում է նույն չափով չօգտագործված մասի աճ,
16) ***«Չվերականգնվող վարկային գիծ և օվերդրաֆտ»***՝վարկային գիծ և օվերդրաֆտ, որի օգտագործված մասը մարվելու դեպքում պայմանագրով չի նախատեսվում նույն չափով չօգտագործված մասի աճ:

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

11. ***«Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ»*** հաշվետվությունում՝ հաշվետու բանկի համար ակտիվ առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց (այսուհետ՝ գործընկեր), իսկ ***«Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ»*** հաշվետվությունում՝ հաշվետու բանկի համար պարտավորություն առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց (այսուհետ՝ գործընկեր) վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է՝ համաձայն սույն կարգի 0-0-րդ կետերով սահմանված տարբերակների:

12. ***«Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»*** սյունակում լրացվում է գործընկերոջ տեսակը՝ սույն կարգի հավելված 1-ով սահմանված սկզբունքների հիման վրա: Սյունակում լրացվում է սույն կետի 1-22-րդ ենթակետերում նշված տարբերակներից մեկը, մասնավորապես.

1) «Կենտրոնական (հանրապետական) կառավարման մարմիններ»,
2) «Տեղական ինքնակառավարման մարմին»,
3) «Սոցիալական ապահովության պետական հիմնադրամ»,
4) «Կենտրոնական բանկ»,
5) «Բանկ»,
6) «Վարկային կազմակերպություն»,
7) «Ապահովագրական ընկերություն»,
8) «Կենսաթոշակային հիմնադրամ»,
9) «Ներդրումային ընկերություն»,
10) «Ներդրումային ֆոնդ»,
11) «Ներդրումային ֆոնդի կառավարիչ»,
12) «Վճարահաշվարկային կազմակերպություն»,
13) «Գրավատուն»,
14) «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ»,
15) «Կարգավորվող շուկա»:

ա. Լրացվում է այն դեպքում, երբ կարգավորվող շուկայի տվյալ հարթակում գործում են տարբեր հատվածային պատկանելություն ունեցող անձինք և հնարավոր չէ որոշել գործընկերոջ հատվածային պատկանելությունը,

16) «Այլ ֆինանսական կազմակերպություն»,
17) «Օժանդակ այլ ֆինանսական կազմակերպություն»,
18) «Ոչ ֆինանսական հատվածի կազմակերպություն»,
19) «Անհատ ձեռնարկատեր»,
20) «Այլ տնային տնտեսություն»,
21) «Տնային տնտեսություններին սպասարկող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններ»,
22) «Այլ անձ»:

13. ***«Գործընկերոջ երկիրը»*** սյունակում լրացվում է՝
   1) այն երկրի կոդը (համաձայն ԻՍՕ 3166-1 ալֆա-3 (ISO 3166-1 alpha-3) կոդերի), որի ռեզիդենտ է համարվում գործընկերը՝ համաձայն սույն կարգի հավելված 3-ով սահմանված չափանիշների,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը սույն կարգի հավելված 4-ով սահմանված չափանիշների համաձայն հանդիսանում է միջազգային կազմակերպություն:
   3) Եթե գործընկերը ֆինանսական կազմակերպություն է, որը գործարքը կատարել է իր մասնաճյուղի միջոցով, ապա սյունակում լրացվում է այն երկրի կոդը, որի ռեզիդենտ է համարվում տվյալ մասնաճյուղը:
14. ***«Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը»*** սյունակում լրացվում է՝
   1) սույն կարգի հավելված 4-ով սահմանված չափանիշների համաձայն միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերոջ անվանումը,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում միջազգային կազմակերպություն:
15. ***«Գործընկերոջ իրավական կարգավիճակը»*** սյունակում լրացվում է՝
   1) գործընկերոջ իրավական կարգավիճակը՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «իրավաբանական անձ», «ֆիզիկական անձ» կամ «անհատ ձեռնարկատեր»,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը սույն կետում նշված իրավական կարգավիճակներից որևէ մեկին չի համապատասխանում:
16. ***«Գործընկերոջ կոդը»*** սյունակում լրացվում է՝
   1) ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությանը՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կոդը,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերոջը Կենտրոնական բանկը չի տրամադրել կոդ, կամ գործընկերը հանդիսանում է փոխանակման կետ, գրավատուն, արտարժույթի դիլեր-բրոքեր կամ արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձ:
17. ***«Գործընկերոջ ՍՎԻՖԹ կոդը»*** սյունակում լրացվում է՝
   1) ֆինանսական կազմակերպության ՍՎԻՖԹ կոդը,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը ՍՎԻՖԹ կոդ չունի, կամ գործընկերը չի հանդիսանում ֆինանսական կազմակերպություն:
18. **«Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը»** սյունակում լրացվում է՝
   1) «կապված» տարբերակը, եթե գործընկերը հանդիսանում է բանկի հետ կապված անձ՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայման(ներ)ի,
   2) «կապված չէ» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում բանկի հետ կապված անձ՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայման(ներ)ի:
19. ***«Գործընկերոջ մոտ պետական մասնակցությունը»*** սյունակում լրացվում է՝
   1) «պետական» տարբերակը, եթե՝
      ա. պետության բաժնեմասը տվյալ կազմակերպությունում գերազանցում է 50%-ը, կամ
      բ. պետությունն օրենսդրորեն օժտված է այդ կազմակերպությունը կառավարելու և ղեկավար անձանց նշանակելու հատուկ իրավասությամբ,
   2) «ոչ պետական» տարբերակը, եթե ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գործընկերը սույն կետի առաջին ենթակետում սահմանված պայմաններին չի համապատասխանում,
   3) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը հանդիսանում է ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր:
20. ***«Գործընկերոջ մոտ օտարերկրյա մասնակցություն»*** սյունակում լրացվում է՝
   1) «օտարերկրյա» տարբերակը, եթե՝
      ա. ոչ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող անձի (իրավաբանական, ֆիզիկական կամ այլ անձ) բաժնեմասը գործընկեր կազմակերպությունում գերազանցում է 50%-ը, և (կամ)
      բ. ոչ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող անձն օրենսդրորեն օժտված է գործընկեր կազմակերպությունը կառավարելու և ղեկավար անձանց նշանակելու հատուկ իրավասությամբ,
   2) «չի կիրառվում» տարբերակը, եթե սույն կետի 0-ին ենթակետում սահմանված պայմանները չեն բավարարվում:
21. ***«Գործընկերոջ գործունեության նպատակը»*** սյունակում լրացվում է՝
   1) «առևտրային» տարբերակը, եթե իրավաբանական անձի գործունեության նպատակը շահույթ ստանալն է,

2) «ոչ առևտրային» տարբերակը, եթե իրավաբանական անձը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում,

3) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը իրավաբանական անձ չի հանդիսանում:

22. ***«Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը»*** սյունակում լրացվում է «Moody's» («Մուդիզ»), «Standard and Poor's» («Ստանդարտ և Փուրզ»), «Fitch Ratings» («Ֆիտչ Ռեյտինգս»), «A.M. Best» («Ա.Մ. Բեստ»), «ԿԲ» կամ «չի կիրառվում» տարբերակը:

1) Սյունակում լրացվում է՝

ա. այն կազմակերպության համար սույն կետով սահմանված տարբերակը, որի կողմից տրված վարկանիշը լրացվել է «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը» կամ «Գործընկերոջ վարկանիշը» սյունակում,

բ. «չի կիրառվում» տարբերակը, եթե «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը» կամ «Գործընկերոջ վարկանիշը» սյունակում լրացվել է «չի կիրառվում» տարբերակը:

23. Ի լրումն սույն կարգի 12-22-րդ կետով սահմանված սյունակների՝ «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվությունում լրացվում են նաև 24-27-րդ կետերով սահմանված սյունակները:

24. ***«Գործընկերոջ՝ բանկի աշխատակից հանդիսանալը»*** սյունակում լրացվում է՝ «աշխատակից է», «աշխատակից չէ» կամ «չի կիրառվում» տարբերակը:

1) Սյունակում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ:

25. ***«Գործընկերոջ չափը»*** սյունակում լրացվում է «չի կիրառվում», «գերփոքր», «փոքր», «միջին» կամ «խոշոր» տարբերակը: Ձեռնարկությունների դասակարգումն իրականացվում է սույն կարգի հավելված 5-ով սահմանված սկզբունքներին համապատասխան, ընդ որում, սյունակում լրացվում է՝

1) «չի կիրառվում» տարբերակը, եթե՝

ա. գործընկերը հանդիսանում է խաղատների և շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող անձ,

բ. գործընկերը հանդիսանում է ոչ ՀՀ ռեզիդենտ, և/կամ

գ. գործընկերը չի հանդիսանում առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

26. ***«Գործընկերոջ գործունեության մարզը»*** սյունակում լրացվում է՝

1) Հայաստանի Հանրապետության այն մարզի անվանումը, որտեղից ֆիզիկական անձ հանդիսացող գործընկերը ստանում է Հայաստանի Հանրապետությունում ձևավորվող իր եկամտի հիմնական մասը, իսկ անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն հանդիսացող գործընկերը՝ իր շահույթի հիմնական մասը,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե՝

ա. գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն, և (կամ)

բ. գործընկերոջ եկամուտը (շահույթը) չի ձևավորվում Հայաստանի Հանրապետությունում:

27. ***«Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը»*** սյունակում լրացվում է՝

1) Վարկանշային գործակալության կամ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկանիշը՝ Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 4-րդ գլխով սահմանված սկզբունքներին համապատասխան, կամ

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը վարկանիշ է ստացել Վարկանշային գործակալությունից կամ Կենտրոնական բանկից տարբերվող կազմակերպության կողմից, կամ գործընկերը չի վարկանշվել:

28. Ի լրումն 12-22-րդ կետերով սահմանված սյունակների՝ «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվությունում լրացվում է նաև սույն կարգի 29-32-րդ կետերով սահմանված սյունակը:

29. ***«Գործընկերոջ գործունեության մարզը»*** սյունակում լրացվում է՝

1) Հայաստանի Հանրապետության այն մարզի անվանումը, որտեղ գրանցված է ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն հանդիսացող գործընկերը,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն, կամ նշված անձինք գրանցված չեն ՀՀ տարածքում:

30. ***«Գործընկերոջ վարկանիշը»*** սյունակում լրացվում է՝

1) վարկանշային գործակալության կողմից տրամադրված թողարկողի երկարաժամկետ վարկանիշից (բացակայության դեպքում միայն՝ թողարկողի կարճաժամկետ վարկանիշից) և (կամ) Կենտրոնական բանկի կողմից տրամադրված վարկանիշից ամենացածր վարկանիշը,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը վարկանիշ է ստացել վարկանշային գործակալությունից և Կենտրոնական բանկից տարբերվող կազմակերպության կողմից կամ գործընկերը չի վարկանշվել:

31. ***«Խոշոր պարտատիրոջ անվանումը»*** սյունակում լրացվում է՝

1) այն պարտատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), որի անհատական պահանջները բանկի նկատմամբ հավասար են կամ գերազանցում են բանկի հաշվետու ամսվա միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը, կամ
2) փոխկապակցված անձանցից ամենամեծ պարտատիրոջ անվանումը (անունը, ազգանունը), եթե բանկն ունի իրար հետ փոխկապակցված մի քանի պարտատերեր, որոնց հանդեպ բանկի ունեցած պարտավորությունների ընդհանուր գումարը հավասար կամ գերազանցում է բանկի հաշվետու ամսվա միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը,
3) «չի կիրառվում» տարբերակը, եթե անձի անվանումը, համաձայն սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի, ենթակա չէ լրացման տվյալ սյունակում:

32. ***«Խոշոր պարտատիրոջ նույնականացման տվյալները»*** սյունակում լրացվում է՝

1) սույն կարգի 31-րդ կետի համաձայն ներկայացված անձի հարկային հաշվառման համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշը չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, ոչ ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը, իսկ բացակայության դեպքում՝ տվյալ երկրում իրավաբանական անձանց նույնականացնող այլ տվյալ,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե սույն կարգի 16-րդ և 17-րդ կետերի պահանջների համաձայն նույնականացուցիչ տվյալները լրացվում են այդ կետերով սահմանված սյունակներում կամ եթե սույն կարգի 31-րդ կետում լրացվել է «չի կիրառվում» տարբերակը:

33. Հաշվետվություններում կարգավորվող շուկաներում կնքված գործարքների ներկայացման դեպքում գործընկերների ներկայացման համար նախատեսված սյունակներում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը, եթե սյունակներում պահանջվող տեղեկատվությունը հաշվետու բանկին հասանելի չէ:

34. Հաշվետվություններում ռեպո համաձայնագրով վաճառված (փոխառությամբ տրամադրված) արժեթղթերի և ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի ներկայացման դեպքում՝

1) ***«Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը»*** սյունակում լրացվում է այն անձի վերաբերյալ տվյալը, որին վաճառվել (տրվել) կամ որից գնվել է արժեթուղթը,
2) հաշվետվությունների այլ սյունակներում լրացվում են արժեթղթի թողարկողի վերաբերյալ տվյալները:

ԲԱԺԻՆ 2. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

35. «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվությունում (սույն գլխում այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է հաշվետու բանկի ակտիվների ու հաշվետու բանկի համար ակտիվ առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց (սույն բաժնում այսուհետ՝ գործընկեր) վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվությունը բաղկացած է «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ», «Դեբիտորական պարտքերի վերաբերյալ», «Ածանցյալ գործիքների վերաբերյալ» և «Պայմանական ակտիվների վերաբերյալ» ենթահաշվետվություններից: Հաշվետվությունում գործընկերների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է՝ համաձայն սույն կարգի Գլուխ 3-ի:

ԳԼՈՒԽ 5.ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

36. «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության սյունակները լրացվում են սույն կարգի 0-0-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

37. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է հաշվային պլանում ակտիվի հիմնական (մայր գումարի) գումարի հաշվառման համար նախատեսված հաշվի համարը (օրինակ՝ 15000, 15002):

1) Այն դեպքում, երբ ակտիվի գծով միաժամանակ առկա են հիմնական (մայր) գումարի հաշվեկշռային և հետհաշվեկշռային մնացորդներ, ապա լրացվում է հաշվեկշռային հոդվածի հաշվառման համարը:

38. ***«Ակտիվի տեսակը»*** սյունակում սույն ենթահաշվետվության շրջանակներում ակտիվի տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝

1) «թղթակցային հաշիվ»,
2) «թանկարժեք մետաղով թղթակցային հաշիվ»,

3) «վարկ»,
4) «փոխառություն»,
5) «վերականգնվող վարկային գիծ և օվերդրաֆտ»,
6) «չվերականգնվող վարկային գիծ և օվերդրաֆտ»,
7) «այլ վարկային գիծ և օվերդրաֆտ»,
8) «օվերնայթ»,
9) «վարկային քարտ»,
10) «ավանդ»
11) «ֆինանսական վարձակալություն»,
12) «ռեպո համաձայնագիր»,
13) «ֆակտորինգ»,
14) «երաշխիք/երաշխավորություն»,
15) «ակրեդիտիվ»,
16) «երկարաժամկետ ստորադաս փոխառություն»,
17) «սովորական բաժնետոմս»,
18) «արտոնյալ բաժնետոմս»,
19) «այլ փայամասնակցություն»,
20) «տոկոսային պարտատոմս»,
21) «ոչ տոկոսային պարտատոմս»,
22) «ռեպո համաձայնագրով վաճառված արժեթուղթ»,
23) «փոխառությամբ տրամադրված արժեթուղթ»,
24) «այլ արժեթուղթ»:
25) Դեպոնացված և սառեցված միջոցները հաշվետվությունում ներկայացվում են այն ակտիվի համար սույն հաշվետվությունում նախատեսված լրացման կարգով, որի մաս են կազմում այդ միջոցները (օրինակ՝ թղթակցային հաշվի մաս հանդիսացող, բայց հաշվեկշռում առանձին բացահայտվող դեպոնացված միջոցները ներկայացվում են թղթակցային հաշիվների համար սույն հաշվետվությունում նախատեսված լրացման կարգով):

39. «Միջազգային (զարգացման) վարկային ծրագրեր» սյունակում լրացվում է՝
1) սույն կարգի հավելված 6-ով սահմանված այն վարկային ծրագրի անվանումը, որի շրջանակում տրամադրվել է ակտիվը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվը որևէ միջազգային (զարգացման) ծրագրի շրջանակում չի տրամադրվել:
3) Այն դեպքում, երբ ակտիվը տրամադրվել է մի քանի վարկային ծրագրերի համաֆինանսավորմամբ, ապա յուրաքանչյուր ծրագրի շրջանակում տրամադրված գումարը պետք է դիտել որպես առանձին ակտիվ:

40. «Վարկավորման բնագավառը» սյունակում լրացվում է՝
1) այն ճյուղը, որում օգտագործելու նպատակով տրամադրվել է ակտիվը կամ ֆիզիկական անձանց վարկավորման տեսակը՝ համաձայն սույն կարգի հավելված 2-ով սահմանված սկզբունքների,
2) բաժնային գործիքի համար՝ այն ճյուղը, որում գործունեություն է ծավալում բաժնային գործիք թողարկող կազմակերպությունը՝ համաձայն սույն կարգի հավելված 2-ով սահմանված սկզբունքների:

41. «Ակտիվի իրականացման մարզը» սյունակում լրացվում է՝
1) Հայաստանի Հանրապետության այն մարզը, որում օգտագործվելու նպատակով ակտիվը (բացառությամբ՝ բաժնային գործիքի) տրամադրվել է ֆիզիկական անձին, անհատ ձեռնարկատիրոջը կամ առևտրային կազմակերպությանը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե՝
ա. ակտիվը բաժնային գործիք է,
բ. ակտիվը Հայաստանի Հանրապետությունում չի օգտագործվելու,
գ. գործընկերը չի հանդիսանում ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն,
3) «չի բացահայտվել» տարբերակը, եթե հաշվետու բանկը չի բացահայտել միջոցների օգտագործման մարզը:
4) Այն դեպքում, երբ միջոցը օգտագործվելու է մի քանի մարզերում, ապա բանկը լրացնում է այն մարզը, որում օգտագործվելու է ակտիվի մեծ մասը:

42. ***«Ակտիվի ապահովվածությունը»*** սյունակում լրացվում է «ապահովված է» կամ «ապահովված չէ» տարբերակը՝ կախված ապահովվածության առկայության հանգամանքից:

43. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է ակտիվի մայր գումարի արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի, իսկ առարկայազուրկ մետաղական հաշիվների ու արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածների ներկայացման համար սյունակում լրացվում են համապատասխանաբար «XMA» («ԷՔՍԷՄԷՅ») և «XAM»(«ԷՔՍԷՅԷՄ») կոդերը:

44. ***«Տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի արժույթը»*** սյունակում լրացվում է.

1) ակտիվի գծով հաշվեգրված տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի,
2) «չի կիրառվում», եթե ակտիվի գծով չի նախատեսվում տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի ստացում:

45. ***«Դասակարգումը»*** սյունակում լրացվում է «ստանդարտ», «հսկվող», «ոչ ստանդարտ», «կասկածելի», «ոչ ռիսկային», «ռիսկային», «միջին ռիսկային», «բարձր ռիսկային», «անհուսալի», «բլանկային» կամ «չդասակարգվող» տարբերակը:

1) Տարբերակների ընտրության համար հիմք է հանդիսանում ակտիվների դասակարգման կարգը, ընդ որում, «անհուսալի» տարբերակը ընտրվում է, եթե ակտիվը (բացառությամբ՝ բլանկային ակտիվի) դուրս է գրվել հաշվեկշռից:
2) Սյունակում լրացվում է «չդասակարգվող» տարբերակը, եթե ակտիվը դասակարգման կարգի համաձայն չի դասակարգվում:

46. ***«Ակտիվի պայմանագրային գումարը»*** սյունակում լրացվում է ակտիվի պայմանագրով սահմանված սկզբնական գումարի մեծությունն ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 500.000 դրամ», «500.000 - 3 մլն դրամ», «3 մլն - 7 մլն դրամ», «7 մլն - 15 մլն դրամ», «15 մլն դրամ և ավելի»:

1) Վարկային գծերի և ակտիվների այլ գծերի համար սյունակում լրացվում է բանկի կողմից սահմանված առավելագույն սահմանաչափը:
2) Փուլային տրամադրված վարկերի ներկայացման համար սյունակում լրացվում է յուրաքանչյուր փուլի համար նախատեսված սկզբնական գումարի մեծությունը:

47. ***«Ակտիվի պայմանագրային ժամկետը»*** սյունակում լրացվում են ակտիվի պայմանագրային ժամկետները՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «ցպահանջ», «մինչև 91 օր», «91 օրից 181 օր», «181 օրից 1 տարի», «1-ից 2 տարի», «2-ից 3 տարի», «3-ից 4 տարի», «4-ից 5 տարի», «5-ից 7 տարի», «7-ից 10 տարի», «10-ից 15 տարի», «15 տարուց ավելի», «անժամկետ»:

1) Տարբերակները ընտրվում են՝ համաձայն ակտիվի սկզբնական պայմանագրի (ենթապայմանագրի) գործողության ժամկետի, իսկ պայմանագրային ժամկետի կրճատման դեպքում՝ համաձայն սահմանված նոր ժամկետի:
2) Սյունակում լրացվում է «Անժամկետ» տարբերակը, եթե ակտիվը ցպահանջ չէ և չունի հստակ սահմանված մարման ժամկետ:

48. ***«Ակտիվի երկարաձգման ժամկետը»*** սյունակում լրացվում է ակտիվի պայմանագրային վերջնաժամկետի փաստացի երկարաձգման ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 91 օր», «91 օրից 181 օր», «181 օրից 1 տարի», «1-ից 2 տարի», «2-ից 3 տարի», «3-ից 4 տարի», «4-ից 5 տարի», «5-ից 7 տարի», «7-ից 10 տարի», «10-ից 15 տարի», «15 տարուց ավելի»:

1) Մի քանի անգամ ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգելու դեպքում սյունակում լրացվում է ընդհանուր երկարաձգման ժամկետը: Օրինակ՝ եթե ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգվել է 5 անգամ 40-ական օրերով, ապա սյունակում ընտրվում է «181 օրից 1 տարի» տարբերակը:
2) Եթե ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգվել է նախքան մարման սկզբնական ժամկետի ավարտը, ապա երկարաձգման փաստացի ժամկետը հաշվարկվում է երկարաձգման պայմանագրին նախորդող պայմանագրի ժամկետի ավարտից սկսած:
3) Սյունակում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվը երկարաձգված չէ:

49. ***«Ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո»*** սյունակում լրացվում է՝

1) ակտիվի պայմանագրային վերջնաժամկետի և երկարաձգման ժամկետների հանրագումարի հիման վրա ձևավորված նոր պայմանագրային ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 91 օր», «91 օրից 181 օր», «181 օրից 1 տարի», «1-ից 2 տարի», «2-ից 3 տարի», «3-ից 4 տարի», «4-ից 5 տարի», «5-ից 7 տարի», «7-ից 10 տարի», «10-ից 15 տարի», «15 տարուց ավելի»,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվի պայմանագրային ժամկետը չի երկարաձգվել:

50. ***«Տոկոսադրույքի տեսակը»*** սյունակում լրացվում է՝

1) «անտոկոս» տարբերակը, եթե ակտիվը տեղաբաշխվել է առանց տոկոսների ստացման պայմանի,
2) «ֆիքսված» տարբերակը, եթե ակտիվը տեղաբաշխվել է ֆիքսված տոկոսադրույքով,

3) «փոփոխվող» տարբերակը, եթե՝

ա. ակտիվը տեղաբաշխվել է այնպիսի ֆիքսված տոկոսադրույքով, որը պայմանագրի համաձայն վերանայվելու է կամ կարող է վերանայվել, կամ

բ. ակտիվի գծով տոկոսադրույքը սահմանվել է՝ որպես փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում, փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա հաշվետու բանկն ուղղակիորեն կարող է ազդեցություն ունենալ (օրինակ՝ բանկի հաշվարկային տոկոսադրույք +2.5%),

4) «լողացող» տարբերակը, եթե տոկոսադրույքը սահմանվել է՝ որպես շուկայական փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում, փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա հաշվետու բանկն ուղղակիորեն չի կարող ազդեցություն ունենալ (օրինակ՝ ԼԻԲՕՐ+2.5%),

5) «լողացող-փոփոխվող» տարբերակը, եթե կիրառվող տոկոսադրույքը միաժամանակ բավարարում է սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված պայմանները,

6) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվը բաժնային գործիք է:

51. ***«Տոկոսադրույքի փոփոխմանը մնացած ժամկետը»*** սյունակում լրացվում է՝

1) ակտիվի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքի վերանայմանը մնացած ժամկետները՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 30 օր», «31-ից 60 օր», «61-ից 90 օր», «91-ից 120 օր», «121-ից 150 օր», «151-ից 180 օր», «181 օրից 1 տարի», «1 տարուց 3 տարի», «3 տարուց ավելի», «անորոշ ժամկետ»,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվի գծով կիրառվող տոկոսադրույքի փոփոխության հնարավորություն պայմանագրով նախատեսված չէ:

52. ***«Լողացող/փոփոխվող տոկոսադրույքի հնդեքսը (դրույքը)»*** սյունակում լրացվում է՝

1) տոկոսադրույքի այն հնդեքսը (դրույքը), որը ընդգրկվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքի հիմքում (օրինակ՝ 1-ամսյա LIBOR, 3-ամսյա LIBOR, 3-ամսյա LIBOR/բանկի հաշվարկային դրույք),

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվի գծով չի սահմանվել հնդեքս (դրույք):

53. ***«Անվանական տոկոսադրույքը/մասնաբաժինը»*** սյունակում լրացվում է՝

1) ակտիվի՝ պայմանագրով սահմանված անվանական տոկոսադրույքը կամ կազմակերպությունում բանկի մասնակցության չափը,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ակտիվը տեղաբաշխվել է առանց տոկոսների (բացառությամբ՝ զրոյական տոկոսադրույքի) ստացման պայմանի:

3) Այն դեպքում, երբ միջոցը տեղաբաշխվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, ապա սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:

54. ***«Հետհաշվեկշռային հոդվածի տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է՝

1) տրված ակտիվների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները,

2) «չի կիրառվում» տարբերակը, եթե տրված ակտիվների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ չի կիրառվում տոկոսադրույք, կամ գործիքը չի հանդիսանում ակտիվի գիծ:

55. ***«Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը», «Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ գործընկերոջ տեսանկյունից (APRC)» և «Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ բանկի տեսանկյունից»*** սյունակներում լրացվում են ակտիվների համապատասխանաբար տարեկան արդյունավետ տոկոսադրույքը և գործընկերոջ տեսանկյունից բոլոր դրամական հոսքերը ներառող տարեկան փաստացի տոկոսադրույքը (APRC)՝ հաշվարկված սույն կարգի հավելված 7-ով սահմանված կարգի համապատասխան, ու բանկի տեսանկյունից բոլոր դրամական հոսքերը ներառող՝ տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ հաշվարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

1) «Տարեկան արդյունավետ տոկոսադրույք» սյունակում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը ցպահանջ և անժամկետ ակտիվների համար:

2) «Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ բանկի տեսանկյունից» սյունակում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը ցպահանջ, անժամկետ և կանխատեսելի դրամական հոսքեր չունեցող ակտիվների համար:

3) «Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ ***գործընկերոջ տեսանկյունից*** (APRC)» սյունակում լրացվում է «չի կիրառվում» տարբերակը՝

ա. բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ իրականացված գործարքների համար,

բ. ցպահանջ և անժամկետ միջոցների համար:

4) Այն դեպքում, երբ միջոցը տեղաբաշխվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, ապա սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:

56. ***«Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է ակտիվի մայր գումարի, հաշվեգրված անվանական տոկոսագումարների և ակտիվի գծով հաշվեգրված այլ գումարների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ մարմանը մնացած ժամկետների:

1) «Ժամկետային» և «Ժամկետանց» ենթասյունակներում լրացվում են չաշխատող ակտիվի գծով սույն կետով պահանջվող գումարները, ընդ որում, ակտիվի ժամկետում գտնվող մասը լրացվում է՝ «Ժամկետային» ենթասյունակում, իսկ ժամկետանց մասը՝ «Ժամկետանց» ենթասյունակում:
2) Երկարաձգված ակտիվը ենթասյունակներում ներկայացվում է՝ երկարաձգման պայմանագրով սահմանված մարման նոր ժամկետայնությամբ:
3) Այն դեպքում, երբ ցպահանջ ակտիվը սառեցվել (դեպոնացվել, գրավադրվել) է որոշակի ժամկետով, ապա սառեցված (դեպոնացված, գրավադրված) մասը համարվում է ժամկետային միջոց և արտացոլվում է համապատասխան (պայմանագրով սահմանված սառեցման (դեպոնացման, գրավադրման) ժամկետով) ժամկետային ենթասյունակներում:
4) Ցպահանջ և անժամկետ գումարները ենթասյունակներում (բացառությամբ՝ «Ժամկետանց» ենթասյունակի) չեն արտացոլվում:
5) Անհուսալի դասակարգված ակտիվները ենթասյունակներում չեն արտացոլվում:
6) Բլանկային ակտիվները ենթասյունակներում լրացվում են՝

ա. համաձայն սույն կետով սահմանված սկզբունքների, եթե ըստ դասակարգման կարգի ակտիվը չի բավարարում անհուսալի ճանաչման չափանիշները վերջին դասակարգման օրվա դրությամբ, կամ

բ. չեն լրացվում, եթե ըստ դասակարգման կարգի ակտիվը բավարարում է անհուսալի ճանաչման չափանիշները վերջին դասակարգման օրվա դրությամբ:

57. ***«Հնարավոր կորուստների պահուստը»*** սյունակում ներկայացվում է դասակարգման կարգի համաձայն ակտիվի (բացառությամբ՝ հետհաշվեկշռային հոդվածի) գծով ձևավորված հնարավոր կորուստների ընդհանուր կամ հատուկ պահուստի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

58. ***«Հնարավոր կորուստների պահուստը՝ հետհաշվեկշռային հոդվածի գծով»*** սյունակում լրացվում է ակտիվի գծի չօգտագործված մասի համար ձևավորված հնարավոր կորուստների ընդհանուր կամ հատուկ պահուստի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

59. ***«Լրացուցիչ պահուստը»*** սյունակում լրացվում է լրացուցիչ պահուստավորման կարգի համաձայն ակտիվների գծով ձևավորված լրացուցիչ պահուստը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

60. ***«Դեպոնացված և սառեցված միջոցների արժեքը»*** սյունակում լրացվում է ակտիվի այն մասի արժեքը, որը դեպոնացվել կամ սառեցվել է:

61. ***«Տոկոսագումարի/զեղչի/շահաբաժնի մնացորդը»*** սյունակում լրացվում է ակտիվի գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարի, զեղչի կամ շահաբաժնի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

62. ***«Տույժի/տուգանքի մնացորդը»*** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվի գծով հաշվեգրված և չվճարված տույժերի ու տուգանքների մնացորդը:

63. ***«Ակտիվի մայր գումարի մնացորդը»*** սյունակում լրացվում է ակտիվի (այդ թվում՝ անհուսալի դասակարգված և բլանկային ակտիվների) մայր գումարի (հիմնական գումարի) մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

64. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը»*** սյունակում լրացվում են վարկային գծերի կամ ակտիվների այլ գծերի չօգտագործված մասերի գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարների մնացորդները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Այլ պայմանական պարտավորությունների գծով հաշվեգրված տոկոսագումարները լրացվում են «Դեբիտորական պարտքերի վերաբերյալ ենթահաշվետվությունում» որպես «դեբիտորական այլ պարտք»՝ համաձայն տվյալ ենթահաշվետվության լրացման կարգի:

65. ***«Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը»*** սյունակում լրացվում է՝

1) ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ,
2) «0», եթե ակտիվը հանդիսանում է թղթակցային հաշիվ, որի համախառն հաշվեկշռային մնացորդը 0 է:

66. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում է անհուսալի դասակարգված ակտիվների, բլանկային ակտիվների, վարկային գծերի և այլ տրված ակտիվների գծերի հետհաշվեկշռում գրանցված մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

67. ***«Անշարժ գույք հանդիսացող ապահովվածության արժեքը», «Շարժական գույք հանդիսացող ապահովվածության արժեքը», «Այլ ապահովվածության արժեքը»*** սյունակներում համապատասխանաբար լրացվում են որպես ակտիվի ապահովվածություն հանդիսացող անշարժ գույքի, շարժական գույքի և (կամ) այլ ապահովածության միջոցի արժեքը (այդ թվում՝ ռեպո համաձայնագրի և ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի գծով ապահովվածության արժեքը) կամ միջոցների արժեքների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

1) Այն դեպքում, երբ միջոցը հանդիսանում է չհամախմբվող մի քանի ակտիվների ապահովվածություն, և ապահովվածության միջոցի հստակ տարանջատում ըստ ակտիվների առկա չէ, ապա յուրաքանչյուր ակտիվի համար սյունակում լրացվում է ապահովվածության միջոցի՝ բանկի կողմից գնահատված տվյալ ակտիվին բաժին ընկնող արժեքը:
2) Այն դեպքում, երբ միջոցն ապահովված է դրամական հոսքերով կամ ապահովվածությունը բացակայում է, ապա սյունակը չի լրացվում:

68. ***«Ակտիվների քանակը»*** սյունակում լրացվում է ակտիվների քանակը:

1) Սույն սյունակը արժեթղթերի համար չի լրացվում:
2) Համաֆինանսավորմամբ տրամադրված միջոցների դեպքում, որոնք հաշվետվությունում ներկայացվում են որպես առանձին ակտիվներ, սույն սյունակը լրացվում է միայն մեկ ակտիվի համար, իսկ մյուսների համար լրացվում է «0»:

69) Այն դեպքում, երբ գործընկերոջ վերաբերյալ սույն կարգով սահմանված տեղեկատվությունը, ինչպես նաև 0-0-րդ (նաև 0-րդ կետով սահմանված սյունակներում «չի կիրառվում» լրացնելու դեպքում) կետերում ներկայացված սյունակներում ակտիվների տվյալները համընկնում են, ապա՝

1) սույն հաշվետվության 0-0-րդ կետերում ներկայացված սյունակներում լրացվում են այդ ակտիվների՝ սյունակներում պահանջվող մասերի հանրագումարները:
2) 0-րդ կետով սահմանված սյունակներում արդյունավետ տոկոսադրույքները լրացվում են հետևյալ բանաձևով.

Մտ = (Ա1*S1+Ա2*S2+ ... + Ամ*Sm) / (Ա1+Ա2+...+Ամ), որտեղ Ա-ն տրված միջոցների անվանական (մայր) գումարի մնացորդն է, S-ն՝ տրված միջոցների տարեկան արդյունավետ տոկոսադրույքները, 1-m-ը՝ տրված միջոցների քանակը:

ԳԼՈՒԽ 6. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

70. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը», «Գործընկերոջ երկիրը», «Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը», «Գործընկերոջ իրավական կարգավիճակը», «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը», ինչպես նաև «Ակտիվների տեսակը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Մայր գումարի արժույթ», «Դասակարգում», «Հնարավոր կորուստների պահուստ», «Լրացուցիչ պահուստ», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Սառեցված և դեպոնացված միջոցներ», «Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը» և «Ակտիվների քանակը» սյունակները:

71. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Մայր գումարի արժույթ», «Դասակարգում», «Հնարավոր կորուստների պահուստ», «Լրացուցիչ պահուստ», «Սառեցված և դեպոնացված միջոցներ», «Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը», «Ակտիվների քանակը» սյունակները լրացվում են՝ համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում ներկայացված սկզբունքների:

72. Սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերների ներկայացման համար նախատեսված սյունակները (դրանց մի մասը) լրացվում են՝ համաձայն սույն կարգի 3-րդ գլխով սահմանված պահանջների, եթե գործընկերը հանդիսանում է բանկի հաճախորդ կամ բանկը տիրապետում է գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին): Այն դեպքում, երբ գործընկերը չի հանդիսանում բանկի հաճախորդ և բանկը չի տիրապետում գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին), ապա սույն կետում նշված սյունակներում (դրանց մի մասում) լրացվում է «հաճախորդ չէ» տարբերակը:

73. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Ակտիվների տեսակը» և «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը» սյունակները լրացվում են սույն կարգի 0-0-րդ կետերի համաձայն:

74. «Ակտիվների տեսակը» սյունակում լրացվում է ակտիվի տեսակը՝ ըստ հետևյալ տարբերակների «կանխավճար», «գերավճար», «ածանցյալ գործիքի իրական արժեք», «դեբիտորական այլ պարտք»:

75. «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը» սյունակը լրացվում է համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում սահմանված սկզբունքների, ընդ որում, սյունակում ծախսերով ձևակերպման ենթակա կանխավճարները չեն լրացվում:

76. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերոջ վերաբերյալ տվյալները, ինչպես նաև «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվների տեսակը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Մայր գումարի արժույթ», «Դասակարգում» սյունակներում պահանջվող տվյալները համընկնում են, ապա «Հնարավոր կորուստների պահուստ», «Լրացուցիչ պահուստ», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը», «Ակտիվների քանակը» սյունակներում լրացվում են ակտիվների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 7. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

77. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Գործընկերոջ հատվածային պատկանելությունը», «Գործընկերոջ երկիրը», «Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը», «Գործընկերոջ իրավական կարգավիճակը», «Գործընկերոջ կոդը», «Գործընկերոջ ՍՎԻՖԹ կոդը», «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը», «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը», «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը», «Ակտիվի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսադրույքի տեսակը», «Տոկոսագումարի արժույթը», «Անվանական տոկոսադրույքը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը», «Ակտիվի քանակը» սյունակները:

78. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Ակտիվի քանակը» սյունակները լրացվում են՝ համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում ներկայացված սկզբունքների:

79. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսագումարի արժույթը», «Անվանական տոկոսադրույքը», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը» սյունակները լրացվում են սույն կարգի 0-0-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

80. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի գծով ապագայում ստացվելիք գումարների հաշվառման համար նախատեսված հաշվի համարը:

81. ***«Ակտիվի տեսակը»*** սյունակում ակտիվի տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝

1) Ֆորվարդ
2) Ֆյուչերս
3) Օպցիոն
4) Արժութային սվոպ
5) Փոխարժեքային սվոպ
6) Այլ սվոպ:

82. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում ստացվելիք գումարների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի:

83. ***«Տոկոսագումարի արժույթը»*** սյունակում լրացվում է՝

1) ածանցյալ գործիքների գծով ստացվելիք տոկոսների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե տվյալ ածանցյալ գործիքի գծով չի նախատեսվում տոկոսագումարի ստացում:

84. ***«Անվանական տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է՝

1) ածանցյալ գործիքի շրջանակներում տրված գումարների գծով կիրառվող տոկոսադրույքը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ածանցյալ գործիքի գծով տոկոսադրույք սահմանված չէ:

85. ***«Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի գծով ստացվելիք գումարների գծով հետհաշվեկշռում գրանցված գումարը՝ ըստ մարմանը մնացած ժամկետների:

86. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում ստացվելիք գումարները հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ առանց հաշվարկված տոկոսագումարների:

87. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը»*** սյունակում առանց զուտացման լրացվում են ածանցյալ գործիքի գծով հետհաշվեկշռում գրանցված տոկոսագումարները՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ:

88. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերոջ վերաբերյալ տվյալները, ինչպես նաև «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսադրույքի տեսակը», «Տոկոսագումարի արժույթը», «Անվանական տոկոսադրույքը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո» սյունակներում ակտիվների տվյալները համընկնում են, ապա «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ», «Ակտիվների քանակը» սյունակներում լրացվում են այդ սյունակներում պահանջվող տվյալների մնացորդների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 8. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

89. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը», «Գործընկերոջ երկիրը», «Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը», «Գործընկերոջ իրավական կարգավիճակը», «Գործընկերոջ կոդը», «Գործընկերոջ ՍՎԻՖԹ կոդը», «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը», «Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը», «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը», «Ակտիվի տեսակը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Մայր գումարի արժույթը», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ», «Ակտիվի քանակը» սյունակները:

90. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Ակտիվի քանակը» սյունակները լրացվում են՝ համաձայն «Վարկային ներդրումների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում ներկայացված սկզբունքների:

91. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» հաշվետվության «Ակտիվի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ» սյունակները լրացվում են սույն կարգի 0-0-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

92. «Ակտիվի տեսակը» սյունակում լրացվում են պայմանական ակտիվներն ըստ հետևյալ տարբերակների՝

1) «ստացված երաշխիք»,
2) «ստացված երաշխավորություն»,
3) «ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթուղթ»,
4) «այլ պայմանական ակտիվ»:

93. «Մայր գումարի արժույթը» սյունակում լրացվում է հետհաշվեկշռային հոդվածի արժույթը:

94. «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ» սյունակում լրացվում է ստացված երաշխիքի, երաշխավորության, ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերի կամ այլ պայմանական ակտիվի հետհաշվեկշռային մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

95. Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթերը «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը» սյունակը լրացվում են՝ ըստ արժեթղթերի մարմանը մնացած ժամկետների:

96. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերոջ վերաբերյալ տվյալները, ինչպես նաև «Հաշվառման հաշվի համարը», «Ակտիվի տեսակը», «Ակտիվի պայմանագրային ժամկետը», «Ակտիվի երկարաձգման ժամկետը», «Ակտիվի ժամկետը երկարաձգումից հետո», «Մայր գումարի արժույթը» սյունակներում ներկայացված տվյալները համընկնում են, ապա «Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ», «Ակտիվի քանակը» սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային մնացորդների հանրագումարները:

ԲԱԺԻՆ 3. ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԼՈՒԽ 9. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

97. «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվությունում (սույն գլխում այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է հաշվետու բանկի պարտավորությունների և հաշվետու բանկի

համար պարտավորություն առաջացնող գործարքի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկատվություն: Հաշվետվությունը բաղկացած է «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ», «Կրեդիտորական պարտավորությունների վերաբերյալ», «Պայմանական պարտավորությունների վերաբերյալ» և «Ածանցյալ գործիքների վերաբերյալ» ենթահաշվետվություններից: Հաշվետվությունում գործընկերների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է՝ համաձայն սույն կարգի Գլուխ 3-ով սահմանված սկզբունքների:

ԳԼՈՒԽ 10. ՎԱՐԿԱՅԻՆ (ԱՎԱՆԴԱՅԻՆ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

98. «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության սյունակները լրացվում են սույն կարգի 0-0-րդ կետերով սահմանված սկզբունքների հիման վրա:

99. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է հաշվային պլանում պարտավորության հիմնական գումարի հաշվառման համար նախատեսված հաշվի համարը (օրինակ՝ 32200, 32202):

1) Այն դեպքում, երբ միաժամանակ առկա են հիմնական (մայր) գումարի հաշվեկշռային և հետհաշվեկշռային մնացորդներ, ապա լրացվում է հաշվեկշռային հոդվածի հաշվառման համարը:

100. ***«Պարտավորության տեսակը»*** սյունակում լրացվում է պարտավորության տեսակը՝ ըստ հետևյալ տարբերակների՝

1) «թղթակցային հաշիվ»,
2) «թանկարժեք մետաղով հաշիվ»,
3) «թանկարժեք մետաղով թղթակցային հաշիվ»,
4) «բանկային հաշիվ»,
5) «վարկ»,
6) «վերականգնվող վարկային գիծ»,
7) «չվերականգնվող վարկային գիծ»,
8) «այլ վարկային գիծ»,
9) «օվերնայթ»,
10) «ավանդ»,
11) «ռեպո համաձայնագիր»,
12) «երկարաժամկետ ստորադաս փոխառություն»,
13) «փոխառություն»,
14) «ֆինանսական վարձակալություն»,
15) «արտոնյալ բաժնետոմս»,
16) «տոկոսային պարտատոմս»,
17) «ոչ տոկոսային պարտատոմս»,
18) «այլ»:

101. ***«Միջազգային (զարգացման) վարկային ծրագրեր»*** սյունակում լրացվում է՝

1) սույն կարգի հավելված 6-ով սահմանված այն վարկային ծրագրի անվանումը, որի շրջանակում ներգրավվել է միջոցը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե միջոցը որևէ միջազգային (զարգացման) վարկային ծրագրի շրջանակում չի ներգրավվել:
3) Այն դեպքում, երբ միջոցը ներգրավվել է մի քանի վարկային ծրագրերի համաֆինանսավորմամբ, ապա յուրաքանչյուր ծրագրի շրջանակում ներգրավված գումարը պետք է դիտել որպես առանձին պարտավորություն:

102. ***«Ֆինանսական միջոցների ներգրավման բնագավառը»*** սյունակում լրացվում է՝

1) այն բնագավառը, որում գործունեություն է ծավալում ֆիզիկական անձ չհանդիսացող գործընկերը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե գործընկերը հանդիսանում է ֆիզիկական անձ:
3) Ֆիզիկական անձ չհանդիսացող գործընկերոջ գործունեության բնագավառի նկարագիրը ներկայացված է սույն կարգի հավելված 2-ի 2-րդ կետի 1-17-րդ ենթակետերում:
4) Եթե գործընկերն ընդգրկված է գործունեության մի քանի բնագավառներում, ապա սյունակում ընտրվում է այն բնագավառը, որից հաշվետու բանկը ներգրավվել է միջոցների ավելի մեծ ծավալ, քան գործընկերոջ գործունեության այլ բնագավառներից:

103. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է պարտավորության մայր գումարի արժույթը՝ համաձայն ISO 4217 կոդերի, իսկ առարկայազուրկ մետաղական հաշիվների ու արտարժութային ռիսկ

պարունակող դրամային հոդվածների ներկայացման համար սյունակում լրացվում է համապատասխանաբար «ХМА» («ԷՔՍԷՄԷՅ») և «ХАМ»(«ԷՔՍԷՅԷՄ») կոդերը:

104. ***«Տոկոսագումարի արժույթը»*** սյունակում լրացվում է՝

1) պարտավորության գծով հաշվեգրված տոկոսագումարների արժույթը՝ համաձայն ISO 4217 կոդերի,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության գծով չի նախատեսվում տոկոսագումարների վճարում:

105. ***«Փոխարկվող պարտավորություն»*** սյունակում լրացվում է՝

1) «փոխարկվող» տարբերակը, եթե պարտավորության պայմանագրի համաձայն հաշվետու բանկի պարտավորության արժույթը կարող է փոփոխվել,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության արժույթը ենթակա չէ փոփոխման:

106. ***«Պարտավորության պայմանագրային գումարը»*** սյունակում լրացվում է պարտավորության՝ պայմանագրով սահմանված սկզբնական գումարի մեծությունն ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 500.000 դրամ», «500.000 - 1 մլն դրամ», «1 մլն - 2 մլն դրամ», «2 մլն - 4 մլն դրամ», «4 մլն դրամ և ավելի»:

1) Վարկային և այլ գծերի համար սյունակում լրացվում է տվյալ գործիքների համար սահմանված առավելագույն սահմանաչափը:
2) Փուլային ստացված վարկերի ներկայացման համար սյունակում լրացվում է յուրաքանչյուր փուլի համար նախատեսված սկզբնական գումարի մեծությունը:

107. ***«Պարտավորության պայմանագրային ժամկետը»*** սյունակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝ «ցպահանջ», «մինչև 91 օր», «91 օրից 181 օր», «181 օրից 1 տարի», «1-ից 2 տարի», «2-ից 3 տարի», «3-ից 4 տարի», «4-ից 5 տարի», «5-ից 7 տարի», «7-ից 10 տարի», «10-ից 15 տարի», «15 տարուց ավելի», «անժամկետ» կամ «XX.XX.XXXX» (օր.ամիս.տարի) (միայն երկարաժամկետ ստորադաս փոխառությունների համար):

1) Տարբերակները ընտրվում են՝ համաձայն պարտավորության սկզբնական պայմանագրի (ենթապայմանագրի) գործողության ժամկետի, իսկ պայմանագրի գործողության ժամկետի կրճատման դեպքում՝ համաձայն սահմանված նոր ժամկետի՝ բացառությամբ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների, որոնց համար սյունակում լրացվում է փոխառության փաստացի ստացման ամսաթիվը:
2) Այն դեպքում, երբ պարտավորությունների գծով գործերը գտնվում են դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում, ապա այդ պարտավորությունները համարվում են ցպահանջ:
3) Այն դեպքում, երբ պարտավորությունը ցպահանջ չէ և չունի հստակ սահմանված մարման ժամկետ, ապա այդ պարտավորությունը համարվում է անժամկետ:

108. ***«Պարտավորության երկարաձգման ժամկետը»*** սյունակում լրացվում է՝

1) պարտավորության մարման վերջնաժամկետի փաստացի երկարաձգման ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 91 օր», «91 օրից 181 օր», «181 օրից 1 տարի», «1-ից 2 տարի», «2-ից 3 տարի», «3-ից 4 տարի», «4-ից 5 տարի», «5-ից 7 տարի», «7-ից 10 տարի», «10-ից 15 տարի», «15 տարուց ավելի»,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորությունը չի երկարաձգվել:
3) Մի քանի անգամ պարտավորության մարման ժամկետը երկարաձգելու դեպքում սյունակում լրացվում է ընդհանուր երկարաձգման ժամկետը:

109. ***«Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո»*** սյունակում լրացվում է՝

1) պարտավորության պայմանագրային վերջնաժամկետի և երկարաձգման ժամկետների հանրագումարի հիման վրա ձևավորված նոր պայմանագրային ժամկետը՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 91 օր», «91 օրից 181 օր», «181 օրից 1 տարի», «1-ից 2 տարի», «2-ից 3 տարի», «3-ից 4 տարի», «4-ից 5 տարի», «5-ից 7 տարի», «7-ից 10 տարի», «10-ից 15 տարի», «15 տարուց ավելի» կամ
2) երկարաժամկետ ստորադաս փոխառությունների համար՝ փոխառության մարման ամսաթիվը (ներառյալ՝ երկարաձգման ժամկետը (առկայության դեպքում))՝ ըստ «XX.XX.XXXX» (օր.ամիս.տարի) տարբերակի,
3) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության (բացառությամբ՝ երկարաժամկետ ստորադաս փոխառության) պայմանագրային ժամկետը չի երկարաձգվել:

110. ***«Տոկոսադրույքի տեսակը»*** սյունակում լրացվում է «անտոկոս», «ֆիքսված», «փոփոխվող» կամ «լողացող» տարբերակը: Սյունակում լրացվում է.

1) «անտոկոս» տարբերակը, եթե պարտավորությունը ձևավորվել է առանց տոկոսների վճարման պայմանի,

2) «ֆիքսված» տարբերակը, եթե ներգրավված միջոցների դիմաց իրականացվում է ֆիքսված տոկոսադրույքով վճարում,
3) «փոփոխվող» տարբերակը, եթե

ա. ներգրավված միջոցների դիմաց իրականացվում է վճարում ֆիքսված տոկոսադրույքով, որը պայմանագրի համաձայն վերանայվելու է կամ կարող է վերանայվել, կամ

բ. ներգրավված միջոցների դիմաց սահմանվել է տոկոսադրույք՝ որպես փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում, փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա գործընկերն ուղղակիորեն կարող է ազդեցություն ունենալ (օրինակ՝ բանկի հաշվարկային տոկոսադրույք +2.5%),

4) «լողացող» տարբերակը, եթե ներգրավված միջոցների համար տոկոսադրույքը սահմանվել է որպես շուկայական փոփոխվող բազային տոկոսադրույքի և որոշակի մարժայի հանրագումար, ընդ որում, փոփոխվող բազային տոկոսադրույքի վրա գործընկերն ուղղակիորեն չի կարող ազդեցություն ունենալ (օրինակ՝ ԼԻԲՕՐ+2.5%),
5) «լողացող-փոփոխվող» տարբերակը, եթե կիրառվող տոկոսադրույքը միաժամանակ բավարարում է սույն կետի 3-րդ և 4-րդ ենթակետով սահմանված պայմանները:

111. ***«Տոկոսադրույքի փոփոխմանը մնացած ժամկետը»*** սյունակում լրացվում է՝

1) պարտավորության գծով կիրառվող տոկոսադրույքի վերանայմանը մնացած ժամկետները՝ ըստ հետևյալ տարբերակների՝ «մինչև 30 օր», «31-ից 60 օր», «61-ից 90 օր», «91-ից 120 օր», «121-ից 150 օր», «151-ից 180 օր», «181 օրից 1 տարի», «1 տարուց 3 տարի», «3 տարուց ավելի», «անորոշ ժամկետ»,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության գծով կիրառվող տոկոսադրույքի փոփոխության հնարավորություն պայմանագրով նախատեսված չէ:

112. ***«Լողացող/փոփոխվող տոկոսադրույքի հնդեքսը (դրույքը)»*** սյունակում լրացվում է՝

1) տոկոսադրույքի այն հնդեքսը (դրույքը), որն ընդգրկվել է լողացող և (կամ) փոփոխվող տոկոսադրույքի հիմքում (օրինակ՝ 1-ամսյա LIBOR, 3-ամսյա LIBOR, հաշվարկային դրույք),
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե պարտավորության գծով չի սահմանվել հնդեքս (դրույք):

113. ***«Անվանական տոկոսադրույք»*** սյունակում լրացվում է՝

1) պարտավորության՝ պայմանագրով սահմանված անվանական տոկոսադրույքը,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե միջոցը ներգրավվել է առանց տոկոսագումարների (բացառությամբ՝ զրոյական տոկոսադրույքի) տրման պայմանի:
3) Այն դեպքում, երբ միջոցը ներգրավվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, ապա սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:

114. ***«Հետհաշվեկշռային հոդվածի տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում են՝

1) ստացված միջոցների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե ստացված միջոցների գծերի չօգտագործված մասերի նկատմամբ տոկոսադրույք սահմանված չէ կամ գործիքը չի հանդիսանում ստացված միջոցների գիծ:

115. ***«Տարեկան արդյունավետ տոկոսադրույք» և «Տարեկան արդյունավետ տոկոսադրույք՝ բանկի տեսանկյունից»*** սյունակներում լրացվում է՝

1) պարտավորության գծով հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը, որի հաշվարկման կարգը սահմանված է սույն կարգի հավելված 7-ում, և պարտավորության գծով բանկի տեսանկյունից բոլոր դրամական հոսքերը ներառող տարեկան արդյունավետ տոկոսադրույքը՝ հաշվարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան,
2) «չի կիրառվում» տարբերակը՝ ցպահանջ և անժամկետ միջոցների համար:
3) Այն դեպքում, երբ միջոցը ներգրավվել է փոփոխվող և (կամ) լողացող տոկոսադրույքով, ապա սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող տոկոսադրույքը:

116. ***«Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է պարտավորության մայր գումարի, հաշվեգրված տոկոսագումարների և պարտավորության գծով վճարվելիք այլ գումարների հանրագումարը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ըստ մարմանը մնացած ժամկետների:

1) «Ժամկետանց» և «Ժամկետային» ենթասյունակները լրացվում են միայն այն պարտավորությունների մասով, որոնք չեն կատարվել պայմանագրով սահմանված ժամկետում, ընդ որում,

սյունակում լրացման ենթակա գումարների ժամկետում գտնվող մասերը լրացվում են «ժամկետային» ենթասյունակում, իսկ ժամկետանց մասերը՝ «Ժամկետանց» ենթասյունակում:

2) Երկարաձգված պարտավորությունը ենթասյունակներում ներկայացվում է երկարաձգման պայմանագրով սահմանված մարման նոր ժամկետայնությամբ:
3) Ենթասյունակներում (բացառությամբ՝ «Ժամկետանց» ենթասյունակի) ցպահանջ և անժամկետ գումարները չեն լրացվում:

117. ***«Տոկոսագումարի մնացորդը»*** սյունակում լրացվում է պարտավորության գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարի մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

118. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը»*** սյունակում ներկայացվում են վարկային գծերի կամ միջոցների այլ գծերի չօգտագործված մասերի գծով հաշվեգրված և չվճարված տոկոսագումարների մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

119. ***«Տույժի/տուգանքի մնացորդը»*** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորության գծով հաշվեգրված և չվճարված տույժերի ու տուգանքների մնացորդը:

120. ***«Պարտավորության մայր գումարի մնացորդը»*** սյունակում լրացվում է պարտավորության մայր գումարի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

121. ***«Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը»*** սյունակում լրացվում է՝

1) պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ,
2) «0», եթե պարտավորությունը հանդիսանում է թղթակցային հաշիվ, որի համախառն հաշվեկշռային մնացորդը 0 է:

122. ***«Ընդհանուր կապիտալի հաշվարկում մասնակցող գումարը»*** սյունակում լրացվում է ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվող երկարաժամկետ ստորադաս փոխառության գումարը՝ համաձայն Կանոնակարգ 2-ի պահանջների:

123. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում վարկային գծերի և այլ ստացված միջոցների գծերի՝ հետհաշվեկշռում գրանցված մնացորդը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

124. ***«Պարտավորությունների քանակը»*** սյունակում լրացվում է պարտավորությունների քանակը:

1) Սյունակը չի լրացվում արժեթղթերի համար:
2) Համաֆինանսավորման և/կամ համատեղ մասնակցությամբ ստացված միջոցների դեպքում, որոնք հաշվետվությունում ներկայացվում են որպես առանձին պարտավորություններ, սույն սյունակը լրացվում է միայն մեկ պարտավորության համար, իսկ մյուսների համար լրացվում է «0»:

125. ***«Խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պարտավորությունների մնացորդը»*** սյունակում լրացվում է սույն կարգի **Error! Reference source not found.**-րդ կետով սահմանված պարտատեր հանդիսացող անձանց հետ փոխկապակցված անձանց հանդեպ բանկի ունեցած պարտքի ընդհանուր գումարը:

1) Այն դեպքում, երբ խոշոր պարտատիրոջ վերաբերյալ տեղեկատվությունը հաշվետվությունում ներկայացվում է մեկից ավելի անգամ, ապա սույն սյունակը լրացվում է միայն մեկ անգամ:
2) Սույն կետում նշված փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը և նրանց նկատմամբ պարտավորությունները ներկայացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության համապատասխան սյունակներում՝ անկախ սույն սյունակում ներկայացվելու հանգամանքից:

126. Այն դեպքում, երբ գործընկերոջ վերաբերյալ սույն կարգով սահմանված տեղեկատվությունը, 0-0-րդ (նաև 0-րդ կետով սահմանված սյունակներում «չի կիրառվում» լրացնելու դեպքում) կետերում ներկայացված սյունակներում պարտավորությունների տվյալները համընկնում են, ապա՝

1) սույն հաշվետվության 0-0-րդ կետերում ներկայացված սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող մասերի հանրագումարները,
2) 0-րդ կետով սահմանված սյունակներում արդյունավետ տոկոսադրույքները լրացվում են հետևյալ բանաձևով.

Մտ = (Պ1*Տ1+Պ2*Տ2+ ... + Պm*Տm) / (Պ1+Պ2+...+Պm), որտեղ Պ-ն ներգրավված միջոցների անվանական (մայր գումարի) մնացորդն է, Տ-ն՝ ներգրավված միջոցների տարեկան արդյունավետ տոկոսադրույքները, 1-m-ը՝ ներգրավված միջոցների քանակը:

ԳԼՈՒԽ 11. ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

127. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը», «Գործընկերոջ երկիրը», «Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը», «Խոշոր պարտատիրոջ անվանումը», «Խոշոր պարտատիրոջ նույնականացման տվյալները», «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը», «Գործընկերոջ իրավական կարգավիճակը», «Պարտավորության տեսակը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Մայր գումարի արժույթ», «Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը», «Պարտավորության քանակը», «Խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պարտավորությունների մնացորդը» սյունակները:

128. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Մայր գումարի արժույթ», «Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը», «Պարտավորության քանակը», «Խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պարտավորությունների մնացորդը» սյունակները լրացվում են՝ համաձայն «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» հաշվետվությամբ սահմանված սկզբունքների:

129. Սույն ենթահաշվետվության շրջանակներում գործընկերների ներկայացման համար նախատեսված սյունակները (դրանց մի մասը) լրացվում են՝ համաձայն սույն կարգում սահմանված պահանջների, եթե գործընկերը հանդիսանում է բանկի հաճախորդ կամ բանկը տիրապետում է գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին): Այն դեպքում, երբ գործընկերը չի հանդիսանում բանկի հաճախորդ և բանկը չի տիրապետում գործընկերոջ վերաբերյալ պահանջվող տեղեկատվությանը (դրա մի մասին), ապա սույն կետում նշված սյունակներում (դրանց մի մասում) լրացվում է ,հաճախորդ չէ» տարբերակը:

130. Սույն ենթահաշվետվության շրջանակներում ,Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Պարտավորության տեսակը» սյունակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝ «կրեդիտորական պարտք շահութահարկի գծով», «կրեդիտորական պարտքեր ԱԱՀ-ի գծով», «կրեդիտորական պարտք այլ հարկերի և տուրքերի գծով», «ածանցյալ գործիքի իրական արժեք» կամ «կրեդիտորական այլ պարտք»:

131. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվությունում ներկայացվող գործընկերոջ վերաբերյալ տվյալները, «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Մայր գումարի արժույթ», «Պարտավորության տեսակը» սյունակներում պարտավորությունների տվյալները համընկնում են, ապա «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդը», «Պարտավորության քանակը» սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 12. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

132. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության հետևյալ սյունակները՝ «Հաշվառման հաշվի համարը», «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը», «Գործընկերոջ երկիրը», «Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը», «Գործընկերոջ իրավական կարգավիճակը», «Գործընկերոջ կոդը», «Գործընկերոջ SWIFT կոդը», «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը», «Գործընկերոջ վարկանիշը», «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Պարտավորության տեսակը», «Տոկոսադրույքի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսագումարի արժույթը», «Անվանական տոկոսադրույք», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը», «Պարտավորության քանակը»:

133. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Պարտավորության քանակը» սյունակները լրացվում են՝ համաձայն սույն կարգի «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում սահմանված սկզբունքների:

134. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսագումարի արժույթը», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»,

«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը» սյունակները լրացվում են սույն կարգի 0-0-րդ կետերում սահմանված սկզբունքների համաձայն:

135. ***«Հաշվառման հաշվի համարը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով ապագայում վճարվելիք գումարների հաշվառման համար հաշվային պլանում նախատեսված հաշվի համարը:

136. ***«Պարտավորության տեսակը»*** սյունակում պարտավորության տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝

1) Ֆորվարդ,
2) Ֆյուչերս,
3) Օպցիոն,
4) Արժութային սվոպ,
5) Փոխարժեքային սվոպ,
6) Այլ սվոպ:

137. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում վճարվելիք գումարների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի:

138. ***«Տոկոսագումարի արժույթը»*** սյունակում լրացվում է՝

1) ածանցյալ գործիքների գծով վճարվելիք տոկոսների արժույթը՝ համաձայն ISO (ԻՍՕ) 4217 կոդերի,
2) «չի կիրառվում» տարբերակը, եթե տվյալ ածանցյալ գործիքի գծով տոկոսագումար չի նախատեսվում վճարել:

139. ***«Անվանական տոկոսադրույք»*** սյունակում լրացվում է՝

1) ածանցյալ գործիքի շրջանակներում ստացված գումարների գծով կիրառվող տոկոսադրույքը,
2) «չի կիրառվում», եթե ածանցյալ գործիքի գծով տոկոսադրույք սահմանված չէ:

140. ***«Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի գծով վճարվելիք գումարների գծով հետհաշվեկշռում գրանցված գումարը՝ ըստ մարմանը մնացած ժամկետների:

141. ***«Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը»*** սյունակում լրացվում են ածանցյալ գործիքների գծով հաշվարկված և հետհաշվեկշռում գրանցված վճարվելիք տոկոսագումարները առանց զուտացման:

1) Սյունակը չի լրացվում, եթե տվյալ ածանցյալ գործիքի գծով տոկոսագումար չի նախատեսվում վճարել:

142. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում են ածանցյալ գործիքների գծով հետհաշվեկշռում գրանցված՝ ապագայում վճարվելիք գումարները՝ առանց հաշվարկված տոկոսագումարների:

143. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվությունում ներկայացվող գործընկերոջ վերաբերյալ տվյալները, «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության տեսակը», «Տոկոսադրույքի տեսակը», «Մայր գումարի արժույթը», «Տոկոսագումարի արժույթը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Անվանական տոկոսադրույք», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը» սյունակներում ներկայացված պարտավորությունների տվյալները համընկնում են, ապա «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը», «Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարների մնացորդը», «Պարտավորության քանակը» սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

ԳԼՈՒԽ 13. ՀԵՏՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՆԹԱՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

144. Սույն ենթահաշվետվության շրջանակներում լրացվում են «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության հետևյալ սյունակները՝ «Հաշվառման հաշվի համարը», «Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը», «Գործընկերոջ երկիրը», «Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը», «Գործընկերոջ իրավական կարգավիճակը», «Գործընկերոջ կոդը», «Գործընկերոջ ՍՎԻՖԹ կոդը», «Գործընկերոջ՝ բանկի հետ կապվածությունը», «Գործընկերոջ վարկանիշը», «Գործընկերոջը վարկանշող կազմակերպությունը», «Պարտավորության տեսակը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Անվանական տոկոսադրույք», «Մայր գումարի արժույթը», «Դասակարգումը», «Պարտավորության մարմանը մնացած ժամկե-

տայնությունը», «Հնարավոր կորուստների պահուստ», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ», «Պարտավորության քանակը»:

145. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվության «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Անվանական տոկոսադրույք», «Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը» և «Պարտավորության քանակը» սյունակները լրացվում են՝ համաձայն սույն կարգի «Վարկային (ավանդային) պարտավորությունների և արժեթղթերի վերաբերյալ» ենթահաշվետվությունում սահմանված սկզբունքների:

146. Սույն ենթահաշվետվության շրջանակներում «Ծանոթագրություն պարտավորությունների» հաշվետվության «Պարտավորության տեսակը», «Դասակարգումը», «Մայր գումարի արժույթը», «Հնարավոր կորուստների պահուստ» և «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ» սյունակները լրացվում են համաձայն սույն կարգի 0-0-րդ կետերով սահմանված սկզբունքների:

147. ***«Պարտավորության տեսակը»*** սյունակում պարտավորության տեսակը լրացվում է ըստ հետևյալ տարբերակների՝

1) «տրված երաշխիք»,
2) «տրված երաշխավորություն»,
3) «տրված ակրեդիտիվ»,
4) «Այլ պայմանական պարտավորություն»:

148. ***«Դասակարգումը»*** սյունակում լրացվում է վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածի դասը՝ համաձայն դասակարգման կարգի:

149. ***«Մայր գումարի արժույթը»*** սյունակում լրացվում է հետհաշվեկշռային հոդվածի արժույթը:

150. ***«Հնարավոր կորուստների պահուստ»*** սյունակում լրացվում է հետհաշվեկշռային հոդվածի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մնացորդը՝ հաշվետու ժամանակահատվածի դրությամբ:

151. ***«Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդը»*** սյունակում լրացվում է տրված երաշխիքի, երաշխավորության, ակրեդիտիվի կամ այլ պայմանական պարտավորության հետհաշվեկշռային մնացորդը:

152. Այն դեպքում, երբ սույն ենթահաշվետվությունում ներկայացվող գործընկերոջ վերաբերյալ տվյալները, «Հաշվառման հաշվի համարը», «Պարտավորության տեսակը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը», «Պարտավորության երկարաձգման ժամկետը», «Պարտավորության պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո», «Տոկոսադրույքի տեսակը», «Անվանական տոկոսադրույք», «Մայր գումարի արժույթը», «Դասակարգումը» սյունակներում ներկայացված պարտավորությունների տվյալները համընկնում են, ապա «Հնարավոր կորուստների պահուստ», «Հետհաշվեկշռային հոդվածի մնացորդ», «Պարտավորության քանակը» սյունակներում լրացվում են այդ պարտավորությունների՝ սյունակներում պահանջվող գումարների հանրագումարները:

Հավելված 1

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սույն հավելվածում ներկայացվում են պետական կառավարման միավորների (պետական հատված) և տնտեսվարող սուբյեկտների (մասնավոր հատված) տեսակները և բացահայտման սկզբունքները:

1. Պետական կառավարման միավորների մեջ ընդգրկվում են.
   - Կենտրոնական (հանրապետական) կառավարման մարմինները,
   - Տեղական ինքնակառավարման մարմինները,
   - Սոցիալական ապահովության պետական հիմնադրամը:
2. Տնտեսվարող սուբյեկտների մեջ ընդգրկվում են.
   - ֆինանսական կազմակերպությունները,
   - ոչ ֆինանսական կազմակերպությունները,
   - տնային տնտեսությունները,
   - տնային տնտեսություններին սպասարկող՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

1.1. Պետական կառավարման միավորներ

Պետական կառավարման միավորները յուրահատուկ իրավական միավորներ են, որոնց առաջնային խնդիրը պետական գործառույթների իրականացումն է: Այս միավորները իրականացնում են հետևյալ հիմնական գործառույթները. արտադրում և հասարակությանը կամ առանձին տնային տնտեսություններին տրամադրում են որոշակի ապրանքներ և ընդհանրական ծառայություններ, վերաբաշխում են հասարակության եկամուտները կամ հարստությունը, արտադրում կամ մատուցում են ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ: Պետական կառավարման միավորները իրենց գործունեությունը ֆինանսավորում են տնտեսության այլ հատվածների ինստիտուցիոնալ միավորներից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստացված հարկերի կամ այլ վճարումների հաշվին:

- ***Կենտրոնական կառավարությունը*** բաղկացած է պետական կառավարման այն մարմիններից, որոնց իշխանությունը տարածվում է Հայաստանի ամբողջ տարածքի վրա, ինչպես նաև այդ մարմինների կողմից կառավարվող և ֆինանսավորվող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններից՝ ՊՈԱԿ-ներից: Ընդ որում, այստեղ ներառվում են այն շահույթ չհետապնդող ընկերությունները, որոնց գործառնական ծախսերի 50 և ավելի տոկոսը ֆինանսավորվում է պետական բյուջեի հաշվին:

Օրինակ՝

- «Նախագահի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ
- Հանրային գրադարան ՊՈԱԿ
- Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ (ՕԻԳ)
- Ավագ դպրոցներ

- ***Տեղական ինքնակառավարման մարմինների հատվածում*** ընդգրկվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված սուբյեկտները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կառավարվող և ֆինանսավորվող՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունները: Ընդ որում, այստեղ ներառվում են այն շահույթ չհետապնդող ընկերությունները, որոնց գործառնական ծախսերի 50 և ավելի տոկոսը ֆինանսավորվում է համայնքային բյուջեների հաշիվներից:

Օրինակ՝

- Համայնքների իշխանությունները
- Երևանի թիվ 21 նախադպրոցական ուսումնական հաստատություն (ՆՈՒՀ) ՊՈԱԿ
- Երևանի թիվ 195 հիմնական դպրոց ՊՈԱԿ

1.2. Ֆինանսական հատված

Ֆինանսական հատվածն ընդգրկում է այն կազմակերպությունները, որոնց հիմնական գործունեությունը ֆինանսական միջնորդությունն է կամ ֆինանսական միջնորդությանը նպաստող ծառայությունների մատուցումը (օժանդակ ֆինանսական ծառայություններ): Ֆինանսական միջնորդությունը այնպիսի գործունեություն է, որի դեպքում սուբյեկտն իր անունից պարտավորություններ է ներգրավում՝ ֆինանսական շուկայում գործառնությունների միջոցով ֆինանսական ակտիվներ ձեռք բերելու նպատակով:

Այսպիսով, ֆինանսական հատվածը կարելի է բաժանել 2 խոշոր հատվածների.

- ֆինանսական միջնորդ կազմակերպություններ,
- օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

Միջնորդ ֆինանսական կազմակերպություններ են հանդիսանում, օրինակ՝

1. բանկերը
2. վարկային կազմակերպությունները
3. ներդրումային ծառայություններ մատուցող անձինք (ներդրումային ընկերությունները)
4. ապահովագրական ընկերությունները (այդ թվում նաև «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն»)
5. կենսաթոշակային հիմնադրամները
6. գրավատները
7. զարգացման բանկը (օրինակ՝ Համահայկական բանկ)

Օժանդակ ֆինանսական ծառայություն մատուցող կազմակերպություններ են հանդիսանում, օրինակ՝

1. բրոքերները, այդ թվում նաև ապահովագրական բրոքերները,
2. բորսան, օրինակ՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ,
3. դեպոզիտարիան, օրինակ՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ,
4. փոխանակման կետերը,
5. վճարահաշվարկային կազմակերպությունները, այդ թվում՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ,
6. «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն,
7. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը»
8. «ՀՀ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը»
9. բանկերի միությունը, ապահովագրական ընկերությունների միությունը:

1.3. Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատված

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում ընդգրկվում են բոլոր այն ռեզիդենտ սուբյեկտները, որոնց հիմնական գործունեությունը շուկայական ապրանքների արտադրությունը և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցումն է: Ոչ ֆինանսական հատվածում կազմակերպության ներառվելը կախված չէ տվյալ սուբյեկտի սեփականատերերի հատվածային պատկանելությունից: Ըստ սահմանման՝ այս հատվածում են ընդգրկվում նաև շուկայական ապրանքներ և ծառայություններ արտադրող շահույթ չհետապնդող կազմակերպությունները:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածն ըստ սեփականատերերի բնույթի տարանջատվում է երկու ենթահատվածների՝ պետական և մասնավոր: Ընդ որում, ձեռնարկությունը համարվում է պետական, եթե կառավարվում է պետության կողմից, հետևյալ երկու դեպքերում. պետության բաժնեմասը տվյալ ձեռնարկությունում գերազանցում է 50%-ը կամ պետությունն օրենսդրորեն օժտված է այդ ձեռնարկությունը կառավարելու և ղեկավար անձանց նշանակելու հատուկ իրավասությամբ:

Ստորև ներկայացնում ենք մի շարք պետական ձեռնարկությունների օրինակներ՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ
2. «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ
3. «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ
4. «Բարձրավոլտ էլեկտրոնային ցանցեր» ՓԲԸ
5. «Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ
6. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ

1.4. Տնային տնտեսություններ

Տնային տնտեսությունների հատվածը ներառում է բոլոր տնային տնտեսությունները: Տնային տնտեսությունները ֆիզիկական անձինք կամ անձանց խմբեր են, որոնք՝

- ապրում են համատեղ,
- ունեն ընդհանուր ռեսուրսներ, եկամուտներ և հարստություն,
- համատեղ սպառում են ապրանքներ և ծառայություններ,
- կարող են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Այսպիսով, տնային տնտեսությունների շարքին են դասվում նաև այն ֆիզիկական անձինք, որոնք զբաղվում են ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ՝ սեփական սպառման կամ շուկայում իրացման նպատակով:

1.5. Տնային տնտեսություններին սպասարկող՝ շահույթ չհետապնդող կազմակերպություններ

Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպությունների հատվածում ընդգրկվում են ոչ առևտրային այն կազմակերպությունները, որոնք արտադրում են ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ, տրամադրում դրանք առանձին տնային տնտեսություններին կամ ամբողջ հասարակությանը՝ անհատույց կամ որոշակի ոչ շուկայական գներով: Այն կազմակերպությունները, որոնք ղեկավարվում և 50% և ավելին ֆինանսավորվում են պետական կառավարման մարմինների կողմից, այս հատվածում չեն ընդգրկվում, այլ ներառվում են պետական կառավարման հատվածում:

Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպություններից են՝ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական հիմնադրամները, եկեղեցիները և հավատքային կազմակերպությունները, պրոֆեսիոնալ և այլ տիպի միությունները (բացառությամբ ֆինանսական հատվածի), մշակութային կազմակերպությունները, որոշ կրթական և գիտահետազոտական կազմակերպություններ և այլն:

Օրինակ՝

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամ
2. «Հայ առաքելական եկեղեցի»
3. «ԱԲԳ» հասարակական կազմակերպություն

Հավելված 2

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Սույն հավելվածում ներկայացվում է տնտեսական գործունեության ճյուղային դասակարգումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2009 թվականի հունիսի 3-ի թիվ 372-Ն հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչի» (այսուհետ՝ Դասակարգիչ) երկրորդ խմբագրության (NACE rev.2):

2. Տնտեսական գործունեության տեսակները հաշվետվություններում ներկայացվում են ըստ հետևյալ խմբերի.

1) Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն. այս խումբն ընդգրկում է բուսական և կենդանական բնական պաշարների շահագործումը: Բաժինը ներառում է մշակաբույսերի աճեցումը, անասնաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղացիական տնտեսություններում կամ բույսերի հավաքումը և կենդանիների որսը բնական միջավայրում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. բուսաբուծություն
բ. անասնապահություն
գ. անտառային տնտեսություն և փայտամթերումներ
դ. ձկնորսություն և ձկնաբուծություն
ե. A-00 այլ:

2) Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում. այս խումբը ներառում է բնության մեջ հանդիպող պինդ ապարների և հանքանյութերի արդյունահանումը բոլոր եղանակներով: Այս խումբը տարանջատված է երկու ենթախմբերի՝ «մետաղական հանքաքարի արդյունահանում», որը համապատասխանում է Դասակարգչի երկրորդ խմբագրության 05 խմբում ներառվող գործունեության տեսակներին և «շինանյութերի արդյունահանում», որում ներառվում են դասակարգչի 08 խմբում նկարագրված գործունեության տեսակները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. մետաղական հանքաքարի արդյունահանում
բ. շինանյութի արդյունահանում:

3) Մշակող արդյունաբերություն. մշակող արդյունաբերության խմբում դասվող տնտեսական միավորներն իրականացնում են տնտեսության այլ ճյուղերի (գյուղատնտեսություն, հանքագործական արդյունաբերություն և այլն) կողմից արտադրվող արտադրանքի, նյութերի բաղադրիչների ձևափոխում, նորոգում, վերականգնում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. սննդի արդյունաբերություն
բ. մսի մշակում և պահածոյացում
գ. մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում
դ. կաթնամթերքի արտադրություն
ե. հացի և ալյուրե հրուշակեղենի արտադրություն
զ. խմիչքների արդյունաբերություն
է. ծխախոտի արդյունաբերություն
ը. մանածագործական արտադրատեսակների և հագուստի արտադրություն
թ. կաշվե արտադրատեսակների արտադրություն
ժ. փայտանյութի, թղթի, փայտե և թղթե արտադրատեսակների արտադրություն (բացի կահույքից)
ժա. պոլիգրաֆիական գործունեություն
ժբ. քիմիական նյութերի արտադրություն
ժգ. դեղագործական արտադրատեսակների արտադրություն
ժդ. ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
ժե. ոչ մետաղական արտադրատեսակների արտադրություն
ժզ. հիմնային մետաղների արտադրություն
ժէ. մետաղե պատրաստի արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորումներից
ժը. համակարգիչների, էլեկտրոնային, օպտիկական և էլեկտրական սարքավորումների արտադրություն
ժթ. կահույքի արտադրություն
ի. մեքենաների և սարքավորումների նորոգում և տեղակայում
իա. C-00 այլ:

4) Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում. տվյալ խմբում ներառվում է էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը արդյունաբերական կազմակերպություններին և բնակելի զանգվածներին: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. էլեկտրաէներգիայի արտադրություն, փոխանցում և բաշխում,
բ. D-00 այլ:

5) Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում. այս խումբը ներառում է ջրամատակարարումը, կոյուղու, ջրահեռացման, պինդ և ոչ պինդ թափոնների հավաքման և վերա-

մշակման հետ կապված գործունեությունը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակը՝

ա. ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում:

6) Շինարարություն. այս խմբում ներառվում են նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման հետ կապված աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից շենքերի և ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինհրապարակներում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն

բ. ճանապարհների և երկաթուղիների շինարարություն

գ. F-00 այլ:

7) Առևտուր. այս խմբում ներառվում են ցանկացած ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուրը (ապրանքի վաճառք առանց ձևափոխման) և ապրանքների վաճառքին բնորոշ ծառայությունների մատուցումը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. ավտոմեքենաների, մոտոցիկլետների և դրանց պահեստամասերի առևտուր և նորոգում

բ. մեծածախ առևտուր

գ. մանրածախ առևտուր

8) Փոխադրումներ և պահեստային տնտեսություն. այս խումբը ներառում է մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցների գործունեությունը, խողովակաշարերով փոխադրումները, ուղևորների և բեռների տերմինալների շահագործումը, բեռների մշակումը, պահպանումը, ինչպես նաև փոստային ծառայությունները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. տաքսու ծառայություններ

բ. ավտոճանապարհային բեռնափոխադրումներ և փոխադրման ծառայություններ

գ. օդային տրանսպորտի գործունեություն

դ. պահեստավորում և պահպանում

ե. H-00 այլ:

9) Կացության և հանրային սննդի կազմակերպում. այս խումբը ներառում է կարճաժամկետ բնակության համար հաճախորդներին բնակատեղերի տրամադրման և/կամ տեղում սպառման նպատակով սննդամթերքի ու խմիչքների պատրաստումը և վաճառքը (օրինակ՝ ռեստորաններ, սրճարաններ, հյուրանոցներ և այլն): Խմբում չեն ներառվում ամսական կամ տարեկան ժամկետներով բնակարանների վարձակալության տրամադրումը և կերակրատեսակների ու խմիչքների պատրաստումը և վաճառքը, որոնք նախատեսված չեն տեղում սպառման համար: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ

բ. հանրային սննդի կազմակերպում

գ. I-00 այլ:

10) Տեղեկատվություն և կապ. այս խումբը ներառում է տեղեկատվության փոխանցման հաղորդակցման ուղիների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի գործունեությունը, տվյալների կամ այլ տեղեկատվության մշակման ծառայությունները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. հրատարակչական գործ

բ. հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում

գ. հեռահաղորդակցություն

դ. համակարգչային ծրագրավորում և հարակից գործունեություն

ե. J-00 այլ:

11) Ֆինանսական և ապահովագրական գործունեություն. այս խմբում ներառվում են առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը (վճարահաշվարկային կազմակերպություններ, գրավատներ, արտարժույթի դիլերային-բրոքերային գործունեություն իրականացնողներ, այլ բրոքերային ու դիլերային գործունեություն իրականացնողներ, ապահովագրական միջնորդներ և այլն): Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. առևտրային բանկեր

բ. վարկային կազմակերպություններ

գ. ապահովագրական ընկերություններ

դ. ներդրումային ընկերություններ

ե. այլ ֆինանսական կազմակերպություններ:

12) Անշարժ գույքի հետ կապված գործունեություն. այս խումբը ներառում է անշարժ գույքի առքը և վաճառքը, վարձակալության տրամադրումը, գնահատումը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. սեփականություն հանդիսացող անշարժ գույքի առք և վաճառք

բ. L-00 այլ:

13) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն. այս խումբը ներառում է համապատասխան մասնագիտական որակավորման, գիտելիքների և հմտությունների օգնությամբ սպառողներին ծառայությունների մատուցումը, վերլուծական և հետազոտական աշխատանքների իրականացումը: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. իրավաբանական և հաշվապահական գործունեություն

բ. ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն

գ. գիտական հետազոտություններ և մշակումներ

դ. գովազդային գործունեություն

ե. M-00 այլ:

14) Կրթություն. այս խումբը ներառում է տարբեր մակարդակների կրթություն և ցանկացած մասնագիտական ուսուցում: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. բարձրագույն կրթություն

բ. P-00 այլ:

15) Առողջապահություն. այս խումբը ներառում է առողջապահական բնագավառում գործունեությունը և ծառայությունների մատուցումը:

16) Մշակույթ, զվարճություն, հանգիստ. այս խումբը ներառում է մշակույթի, սպորտի, հանգստի և զվարճությունների բնագավառում հասարակությանը մատուցվող ծառայությունները:

17) Տնտեսության այլ ճյուղեր. այս խմբում արտացոլվում են տնտեսության այն ճյուղերը և գործունեության տեսակները, որոնք ներառված չեն սույն կետի 1-16 ենթակետերում ներկայացված խմբերում, ինչպես նաև Դասակարգչի երկրորդ խմբագրության 32.1 և 79 բաժիններում ընդգրկված գործունեության տեսակները: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա.ոսկերչական արտադրատեսակների և զարդերի արտադրություն

բ. զբոսաշրջություն

գ. S-00 այլ:

3. Ֆիզիկական անձանց վարկավորման տեսակները հաշվետվությունում ներկայացվում են ըստ հետևյալ խմբերի.

1) Հիփոթեքային վարկեր. այս խմբում ներառվում են ֆիզիկական անձ հաճախորդներին տրամադրվող հիփոթեքային վարկերը՝ անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով, որոնք ապահովված են տվյալ անշարժ գույքով: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկեր

բ. անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկեր

գ. անշարժ գույքի կառուցապատման հիփոթեքային վարկեր:

2) Սպառողական և այլ վարկեր. այս խմբում ներառվում են ֆիզիկական անձանց տրամադրվող բոլոր վարկերը, բացառությամբ «Հիփոթեքային վարկեր» խմբում ընդգրկվող վարկերի: Սույն խմբի ներկայացման համար ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկը՝

ա. քարտային վարկեր

բ. ավտովարկեր

գ. կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկեր

դ. ոսկու գրավով վարկեր

ե. այլ վարկեր:

4. Վարկերի դասակարգումն ըստ գործունեության տեսակների անհրաժեշտ է իրականացնել ելնելով վարկի օգտագործման նպատակից՝ հաշվի առնելով հետևյալը.

1) եթե վարկը վերցվում է հիմնական գործունեությունից տարբեր համատեղվող գործունեության ուղղությամբ ծախսվելու նպատակով, վարկի գումարն անհրաժեշտ է ներառել համատեղվող գործունեության տեսակի տողում,

2) եթե վարկը վերցվում է վարկառուի կողմից իրականացվող օժանդակ գործունեության ուղղությամբ ծախսվելու նպատակով, վարկի գումարն անհրաժեշտ է ներառել վարկառուի հիմնական գործունեության տեսակի տողում:

3) եթե վարկի ծախսման ուղղությունները մեկից ավելի են, և հնարավոր չէ գումարը բաշխել ըստ առանձին գործունեության տեսակների, վարկի գումարն անհրաժեշտ է ներառել վարկառուի հիմնական գործունեության տեսակի տողում:
4) *Հիմնական գործունեության տեսակ* է համարվում կազմակերպության կողմից իրականացվող գործունեության այն տեսակը, որի ավելացված արժեքը գերազանցում է կազմակերպության շրջանակներում իրականացվող յուրաքանչյուր այլ գործունեության տեսակների ավելացված արժեքին և յուրացվում է կազմակերպությունից դուրս:
5) *Համատեղվող գործունեության տեսակ* է համարվում մեկ կազմակերպության շրջանակներում հիմնականից տարբեր իրականացվող գործունեություն, որի արդյունքները նույնպես յուրացվում են կազմակերպությունից դուրս:
6) *Օժանդակ գործունեության տեսակ* է համարվում հիմնական գործունեությանը նպաստող կամ օժանդակող գործունեություն, որի արդյունքները կազմակերպության շրջանակներից դուրս յուրացման ենթակա չեն:
7) ***Ավելացված արժեքը*** հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն: Ընդ որում, թողարկումն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակաշրջանում արտադրված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը, իսկ միջանկյալ սպառումը կազմված է այն ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են արտադրության ընթացքում: Միջանկյալ սպառման մեջ չի ներառվում հիմնական կապիտալի սպառումը:
8) ***Ավելացված արժեքի միջոցով*** գործունեության տեսակները որոշելու անհնարինության դեպքում կարող է կիրառվել երկու մոտեցում՝
   ա. ստեղծված արդյունքի՝ թողարկման կամ հասույթի,
   բ. ծախսերի՝ աշխատավարձի, աշխատողների թվաքանակի և ծախսված աշխատաժամանակի հիման վրա:

Հավելված 3

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1.	Հայաստանի Հանրապետությունում ունի մշտական բնակություն կամ Հայաստանի Հանրապետությունում բնակվում է 1 տարուց ավելի	
2.	Հայաստանի Հանրապետությունում բնակվում է 1 տարուց պակաս	
3.	Ունի սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունից դուրս, սակայն ծախսերի հիմնական մասն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում	
4.	Ունի սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունում, սակայն ծախսերի հիմնական մասն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունից դուրս	
5.	Ուսանում է կամ բուժման նպատակով գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, սակայն հանդիսանում է այլ երկրի քաղաքացի	

1. Գործընկերը ՀՀ **ռեզիդենտ** է համարվում, եթե համապատասխանում է սույն հավելվածի աղյուսակում սահմանված 1-ին կամ 3-րդ չափանիշին:

2. Գործընկերը **ոչ** ՀՀ **ռեզիդենտ** է համարվում, եթե համապատասխանում է սույն հավելվածի աղյուսակում սահմանված 2-րդ, 4-րդ կամ 5-րդ չափանիշին:

3. Սույն հավելվածի աղյուսակում սահմանված չափանիշների հիման վրա որոշվում է միայն ֆիզիկական անձ հանդիսացող գործընկերոջ ռեզիդենտությունը: Ընդ որում, աղյուսակում սահմանված չափանիշները կիրառվում են նաև այլ երկրների ռեզիդենտներին բացահայտման համար:

4. Ֆիզիկական անձ չհանդիսացող գործընկերների համար ռեզիդենտությունը որոշվում է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2007 թվականի հունվարի 11-ի թիվ 1/12Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկով» (2-րդ բաժին «Տնտեսության հատվածների նկարագիրը») սահմանված չափանիշների համաձայն:

Հավելված 4

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Սույն հավելվածի իմաստով՝ միջազգային կազմակերպություն է համարվում անդամ երկրների իշխանությունների և/կամ այլ միջազգային կազմակերպությունների ղեկավար անձանց միջև կնքված պաշտոնական համաձայնագրի հիման վրա գործող կազմակերպությունը, որի գոյությունը ճանաչվում է անդամ երկրների օրենսդրությամբ, և նշված պաշտոնական համաձայնագիրը հանդիսանում է միջազգային կազմակերպության կանոնադրությունը: Միջազգային կազմակերպությունը հանդիսանում է միջազգային իրավաբանական անձ և ենթակա է կարգավորման միջազգային օրենսդրությամբ:

2. Միջազգային կազմակերպությունները բաժանվում են երկու խմբի.

1) Միջազգային ֆինանսական կազմակերպություններ, որոնք իրականացնում են ֆինանսական միջնորդություն միջազգային մակարդակով, այսինքն՝ իրականացնում են միջոցների վերաբաշխում տարբեր տնտեսությունների վարկատուների և վարկառուների միջև (օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկի խմբի անդամ կազմակերպությունները, Ասիական զարգացման բանկը և այլն):
2) Այլ միջազգային կազմակերպություններ, որոնք տրամադրում են ոչ շուկայական բնույթի հասարակական ծառայություններ անդամ երկրներին, օրինակ՝ խաղաղապահության, կրթության, գիտության, տարատեսակ հետազոտությունների ոլորտներում (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն):

3. Միջազգային ֆինանսական կազմակերպությունները կարող են լինել տարածաշրջանային (օրինակ՝ Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ) կամ համաշխարհային (օրինակ Միջազգային ֆինանսական կորպորացիան):

4. Ի հակադրություն միջազգային կազմակերպությանը՝ երկու և ավելի երկրների կառավարությունների սեփականության տակ գտնվող առևտրային ընկերությունը չի հանդիսանում միջազգային կազմակերպություն: Միջազգային կազմակերպություն չի համարվում նաև միջազգային ֆինանսական ծառայություններ կամ օժանդակություն մատուցող կազմակերպությունը, որի միակ կամ հիմնական բաժնետեր է հանդիսանում մեկ երկրի կառավարությունը (օրինակ՝ KfW):

5. Ստորև ներկայացվում է նաև առավել հայտնի միջազգային ֆինանսական կազմակերպությունների ոչ ամբողջական ցանկը, իսկ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը պետք է իրականացվի վերը նշված չափանիշների հիման վրա:

1) African Development Bank
2) Asian Development Bank
3) Bank of International Settlements (BIS)
4) Black Sea Trade and Development Bank (BSTDB)
5) Caribbean Development Bank (CDB)
6) Central American Bank of Economic Integration (CABEI)
7) Corporation Andina de Fomento (CAF)
8) East African Development Bank (EADB)
9) European Bank for Reconstruction and Development (EBRD)
10) European Commission (EC)
11) European Investment Bank (EIB)
12) Inter-American Development Bank
13) International Fund for Agricultural Development (IFAD)
14) International Monetary Fund (IMF)
15) Islamic Development Bank (IDB)
16) Nordic Development Fund (NDF)
17) Nordic Investment Bank (NIB)
18) OPEC Fund for International Development (OPEC Fund)
19) Organization for Economic Co-operation and Development (OECD)
20) Organization of Petroleum-Exporting Countries (OPEC)
21) West African Development Bank (BOAD)
22) World Bank Group
23) International Bank for Reconstruction and Development (IBRD)
24) International Development Association (IDA)
25) International Finance Corporation (IFC)
26) Multinational Investment Guarantee Agency (MIGA)
27) International Centre for Settlement of Investment Disputes (ICSID)

Ձեռնարկությունների դասակարգումն ըստ չափերի

1. Սույն կարգի շրջանակներում ձեռնարկություններն ըստ չափի բաժանվում են հետևյալ խմբերի.
   1) Գերփոքր
   2) Փոքր
   3) Միջին
   4) Խոշոր

2. ***Գերփոքր ձեռնարկություն*** է համարվում այն ՀՀ ռեզիդենտ (այսուհետ՝ ռեզիդենտ) առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդը ներառյալ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը:

3. ***Փոքր ձեռնարկություն*** է համարվում այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդը ներառյալ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը:

4. ***Միջին ձեռնարկություն*** է համարվում այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդը ներառյալ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

5. ***Խոշոր ձեռնարկություն*** է համարվում այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը կամ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերը, որի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը գերազանցում է 250 մարդը և (կամ) նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է համապատասխանաբար 1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:

6. Ձեռնարկություններն ըստ չափերի դասակարգման ժամանակ ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար հիմք է ընդունվում նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը, իսկ արդյունաբերական և այլ արտադրական ոլորտում գործող կազմակերպությունների համար՝ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը:

7. Աշխատողների միջին ցուցակային թվաքանակի որոշման համար հիմք է ընդունվում նախորդ տարեվերջի դրությամբ աշխատողների թվաքանակը:

8. Այն դեպքում, երբ կազմակերպությունն իր գործունեությունը սկսել է տվյալ տարում, ապա ըստ չափի դասակարգման համար բանկը հիմք է ընդունում վարկի տրամադրման պահի դրությամբ առկա տեղեկատվությունը:

9. Դասակարգման համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվում է հաճախորդից՝ բանկի կողմից սահմանված՝ տեղեկատվության հավաքագրման և պահպանման սկզբունքների համաձայն:

10. Այն դեպքում, երբ կազմակերպությունը մատուցում է ծառայություններ և միաժամանակ գործում է արդյունաբերական և/կամ այլ արտադրական ոլորտում, ապա բանկը գնահատում է ծառայությունների ոլորտի և արտադրական ոլորտների կշիռներն ըստ շրջանառության ծավալների և դասակարգում ըստ չափի՝ հաշվի առնելով ամենամեծ կշիռ ունեցող ոլորտը:

Ձեռնարկության չափը	Աշխատողների քանակը	Ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ արտադրական կամ արդյունաբերական ձեռնարկությունների համար	Հասույթը՝ ծառայությունների ոլորտի ձեռնարկությունների համար
Գերփոքր	≤10	≤100մլն	≤100մլն
Փոքր	≤50	≤500մլն	≤500մլն
Միջին	≤250	≤1000մլն	≤1500մլն

Հավելված 6

Միջազգային վարկային ծրագրերի ցանկ

	Ծրագրի անվանումը
GAF/KfW/SME	Գերմանահայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող ՓՄՁ ոլորտի աջակցման ծրագիր
GAF/GOV/SME	Գերմանահայկական հիմնադրամի՝ ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ՓՄՁ ոլորտի աջակցման ծրագիր
GAF/WB/SME	Գերմանահայկական հիմնադրամի՝ Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ՓՄՁ համար Ֆինանսական միջոցների հասանելիության ծրագիր
GAF/ KfW /ENERGY	Գերմանահայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող Վերականգնվող էներգիայի աջակցման ծրագիր
GAF/KfW/ MORTGAGE	Գերմանահայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման ծրագիր
GAF/ GOV/ ECSTAB	Գերմանահայկական հիմնադրամի՝ ՀՀ Կառավարության կողմից Տնտեսության կայունացման վարկավորման ծրագիր
GAF/ KfW/ AGRO	Գերմանահայկական հիմնադրամի՝ KfW-ի կողմից ֆինանսավորվող Գյուղատնտեսության ոլորտի աջակցման ծրագիր
GAF/ ADB/ AGRO	Գերմանահայկական հիմնադրամի՝ Ասիական Զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Կանանց ՓՄՁ ոլորտի զարգացման ծրագիր
EBRD/MSME	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագիր
EBRD/CEEP	Զարգացման և Վերակառուցման Եվրոպական բանկ (ՎԶԵԲ) - Կովկասյան էներգաարդյունավետության ծրագիր
EBRD/COF	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի Համաֆինանսավորման ծրագիր
EBRD/MC	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի Միկրովարկավորման ծրագիր
EBRD/ MORTGAGE	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի Հիփոթեքային վարկավորման ծրագիր
EBRD/TFP	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի Առևտրի խթանման ծրագիր
EBRD/SL1	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի Սինդիկացված Վարկի առաջին ծրագիր
EBRD/SL2	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի Սինդիկացված Վարկի երկրորդ ծրագիր
ADB/RCA	Ասիական Զարգացման բանկի Վերականգնվող Վարկային Համաձայնագիր
AtlanticAG/EXPIMP	Ատլանտիկ Ֆորֆեյտինգ էյՋի ներմուծման/արտահանման վարկավորման ծրագիր
BS/SME1	Սևծովյան Առևտրի և Զարգացման բանկի Փոքր և Միջին Ձեռնարկությունների Վարկավորման առաջին ծրագիր
BS/SME2	Սևծովյան Առևտրի և Զարգացման բանկի Փոքր և Միջին Ձեռնարկությունների Վարկավորման երկրորդ ծրագիր
IFC/SME1	Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի Փոքր և Միջին Ձեռնարկությունների Վարկավորման առաջին ծրագիր
OFID/TFP	ՆԱԵԿ Առևտրի խթանման ծրագիր

Սույն հավելվածում որոշ ծրագրերի բացակայության դեպքում բանկն այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ ուղարկելով ծրագրի անվանումը (ներառյալ՝ անգլերեն տարբերակը)՝ աղյուսակում ներկայացված սկզբունքների համաձայն:

Հավելված 7

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգի «Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ» և «Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ» հաշվետվություններում ***«Տարեկան արդյունավետ տոկոսադրույք»*** սյունակներում լրացվող տեղաբաշխված և ներգրավված գումարների արդյունավետ տոկոսադրույքները հաշվարկվում են համաձայն հետևյալ սկզբունքների՝

1) Օվերդրաֆտների, վարկային գծերի և կանխատեսելի դրամական հոսքեր չունեցող գործիքների (բացառությամբ՝ ցպահանջ և անժամկետ միջոցների) արդյունավետ տոկոսադրույքների հաշվարկման համար կիրառվում է համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի (annualized agreed rate, AAR) բանաձևը՝

$$X = \left(1 + \frac{r_{ag}}{n}\right)^{n} - 1 \text{ (բանաձև 1)},$$

որտեղ՝

X - համաձայնեցված տարեկան տոկոսադրույքն է (ՀՏՏ),

r_{ag} - բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված պարզ տոկոսադրույքն է,

n - հաշվեգրված տոկոսների վճարումների կապիտալիզացիաների քանակն է մեկ տարվա ընթացքում:

2) Կանխատեսելի դրամական հոսքեր ունեցող ակտիվների և պարտավորությունների արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է մանրամասն սահմանված՝ էֆեկտիվ տոկոսադրույքի (narrowly defined effective rate, NDER) բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}} \text{ (բանաձև 2)},$$

որտեղ՝

i - մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքն է (ՄՄԷՏ),

K_n - դրամական միջոցների n հոսքեր՝ բանկի տեսանկյունից,

N - դրամական միջոցների հոսքերի քանակը՝ կապված տվյալ ֆինանսական գործիքի հետ,

A - ներգրավված կամ տրամադրված միջոցի սկզբնական գումարը,

D_n-ն-րդ դրամական հոսքի ստացման ժամանակահատվածը՝ արտահայտված առաջին հոսքից հետո անցած օրերի թվով (առաջին հոսք՝ միջոցի ներգրավման կամ տրամադրման ամսաթիվն է):

3) Ինչպես ՀՏՏ-ն, այնպես էլ ՄՄԷՏ-ն ներառում են տեղաբաշխված և ներգրավված միջոցների գծով բոլոր տոկոսային վճարները և չեն ներառում այլ վճարներ (միջնորդավճարներ և այլն): Նրանց տարբերությունը կայանում է վերջիններիս հաշվարկման հիմքում ընկած տոկոսադրույքների տարեկանացման մեթոդի մեջ: ՀՏՏ-ն կիրառելի է միայն այն դեպքերում, երբ տեղաբաշխված/ներգրավված/միջոցների գծով տոկոսների կապիտալիզացիան կատարվում է կանոնավոր (հավասար) ժամանակահատվածներում: ՄՄԷՏ-ն հանդիսանում է արդյունավետ մոտարկում և կարող է կիրառվել ցանկացած տեսակի տեղաբաշխված/ներգրավված միջոցի պարագայում:

4) Եթե պայմանագրում առկա են դրույթներ, որոնք թույլ են տալիս տոկոսների փոփոխություններ, ապա տարեկան արդյունավետ տոկոսադրույքը պետք է հաշվարկվի պայմանագրի կնքման պահին գործող չափանիշների հիման վրա՝ ենթադրելով, որ տոկոսները և/կամ հաճախորդի կողմից կատարվող կամ կատարվելիք ծախսերը մնալու են կայուն և կիրառվելու են մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

2. «Ծանոթագրություններ ակտիվների վերաբերյալ» հաշվետվությունում ***«Տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ գործընկերոջ տեսանկյունից (APRC)»*** սյունակում լրացվող տեղաբաշխված գումարների արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է թիվ 2 բանաձևով և նույն մեթոդաբանությամբ, ինչ ՄՄԷՏ-ն, սակայն ներառում է ինչպես բոլոր տոկոսները, այնպես էլ այլ վճարումները, որոնք միջոց ստացողը պարտավոր է վճարել տվյալ միջոցը ստանալու համար: Թիվ 2 բանաձևի տարրերը տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս ունեն հետևյալ նշանակությունները.

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է,

A - միջոց ստացողին տրամադրվող միջոցի սկզբնական գումարն է,

n - միջոցի մարմանն ուղղված վճարի հերթական համարն է,

Kn - միջոց ստացողի կողմից միջոցի ստացման պահին և (կամ) միջոցի գործողության ընթացքում կատարված հերթական n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ): Այն դեպքում, երբ միջոց տրամադրելու մասին պայմանագրով թույլատրվում են տոկոսների և (կամ) միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, ապա տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի ենթադրելով, որ տոկոսները և (կամ) միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև միջոց ստանալու պայմանագրի գործողության ավարտը,

D_n - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել միջոցի ստացման օրից մինչև միջոցի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ:

Օրինակ՝ վարկը տրամադրվել է սեպտեմբերի 15-ին, վարկի տրամադրման համար վարկի ստացման պահին նախատեսված են այլ վճարումներ, և վարկի առաջին մասնակի մարումը տեղի է ունենալու նույն տարվա հոկտեմբերի 15-ին: Այս դեպքում D_1=0, քանի որ այլ վճարումները կատարվելու են վարկի ստացման օրը, $D_2 = 30$, քանի որ վարկի տրամադրումից մինչև հերթական մարումն ընկած օրերի թիվը 30 է, իսկ D_3 -ից մինչև D_n ընկած օրերի թիվը հաշվարկվում է նույն սկզբունքով:

3. Միջոց ստացողի ընդհանուր ծախսի մեջ չեն ներառվում հետևյալ վճարները.

1) օրենքով և միջոց ստանալու պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները և այլ վճարները,
2) այն վճարները, որոնք միջոց ստացողի կողմից ենթակա են վճարման՝ անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումը տրամադրված միջոցով կամ առանց տրամադրված միջոցի կատարելու հանգամանքից,
3) կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե միջոցի ստացման պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից: Բացառություն են կազմում կազմակերպություններին, միություններին կամ այլ խմբերին անդամակցելու կամ բաժանորդագրվելու համար նախատեսված վճարները, եթե միջոց տրամադրողը այդ կազմակերպությունների, միությունների կամ այլ խմբերի հիմնադիրն է կամ մասնակիցը, և տրամադրվող միջոցի պայմանները կախված են նման անդամակցումից կամ բաժանորդագրումից: Օրինակ՝ բանկը հայտարարում է վարկային պայմանագրի կնքման արտոնյալ պայմաններ այն անձանց համար, ովքեր կհանդիսանան իր կողմից հիմնադրված միության անդամ: Անդամակցության համար պահանջվում է տարեկան անդամավճար: Տրամադրված միջոցի ժամկետի ընթացքում հաճախորդի կողմից վճարվելիք անդամավճարի (անդամավճարների) գումարը պետք է ներառվի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ,
4) ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները՝ ***բացառությամբ այն դեպքերի, երբ*** այդ ծառայություններից օգտվելը հանդիսանում է միջոց տրամադրելու պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման և

ա. այդ ծառայությունների շահառուն հանդիսանում է միջոց տրամադրողը, կամ

բ. միջոց տրամադրողը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ միջոց ստացողն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր: Օրինակ՝ ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվում են, երբ.

բ1. Բանկը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն,

բ2. Բանկը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքել ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,

բ3. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն,

բ4. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքելու ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,

բ5. Բանկը, որպես վարկային պայմանագիրը կնքելու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքելու ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր,

բ6. Բանկը, որպես գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման, պահանջում է գրավադրված գույքի ապահովագրություն, հանդիսանում է այդ պայմանագրի շահառուն, ինչպես նաև սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ հաճախորդն իրավունք ունի կնքելու ապահովագրական ծառայությունների մատուցման պայմանագիր:

5) միջոց ստանալու հետ կապված այլ վճարները, որոնք միջոց ստացողը պարտավոր չէ կատարել միջոց ստանալու համար (օրինակ՝ բիզնես պլանի մշակման, միջոց ստացողի կողմից միջոց ստանալու համար բանկ այցելության տրանսպորտային ծախսերը):

4. Այն դեպքում, երբ միջոց տրամադրելու պայմանագիրը պարունակում է դրույթներ, որոնք թույլատրում են տոկոսների և ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ կամ տատանումներ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, ապա տոկոսադրույքը պետք է հաշվարկվի՝ ենթադրելով, որ տոկոսները և/կամ ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև պայմանագրի գործողության ավարտը:

5. Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում ծախսերն ընդգրկելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքով. արդյո՞ք հաճախորդը պարտավոր է կատարել նշված ծախսերը վարկավորման համար, մասնավորապես.

1) քարտային հաշվի բացման և սպասարկման համար գանձվող վճարները մասնակցում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը, եթե դրանք կատարվել են վարկային գիծ ստանալու նպատակով: Այն դեպքում, երբ պլաստիկ քարտը եղել է հաճախորդի տրամադրության տակ մինչև վարկային գծի տրամադրումը, ապա արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը մասնակցում են միայն սպասարկման համար գանձվող վճարները:
2) վարկի գումարի կանխիկացման համար գանձվող միջնորդավճարը չի մասնակցում արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը, եթե վարկային գծի տրամադրման պայմանների համաձայն հաճախորդը հարկադրված չէ ստացած միջոցները կանխիկացնել:
3) առևտրային վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկմանը մասնակցում են բոլոր այն վճարները, որոնք կատարվել են տվյալ հաճախորդի կողմից տվյալ վարկը ստանալու նպատակով, այդ թվում՝ բանկում ընթացիկ հաշվի բացման համար գանձվող կոմիսիոն վճարը, եթե դա բացվել է անմիջապես վարկի տրամադրման համար:

6. Տոկոսադրույքները հաշվարկելիս անհրաժեշտության պարագայում գործում են հետևյալ սկզբունքները.

1) պայմանագրով տրամադրված միջոցի առավելագույն սահմանաչափ սահմանված չլինելու դեպքում տրամադրված միջոցի առավելագույն չափը մեկ միլիոն դրամն է,
2) եթե պայմանագրով նախատեսված է, որ հաճախորդը կարող է տրամադրված միջոցի գումարը ստանալ մաս առ մաս կամ կարող է ընտրել տրամադրված միջոցի գումարը ստանալու պահը, ապա համարվում է, որ տրամադրված միջոցի գումարը հաճախորդին փոխանցվել է ամբողջությամբ պայմանագիրը կնքելու պահին,
3) պայմանագրով տրամադրված միջոցի վերադարձման ժամանակացույց կամ պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ սահմանված չլինելու դեպքում տրամադրված միջոցի վերադարձման ժամկետը մեկ տարի է,
4) այն դեպքում, երբ պայմանագիրը սահմանում է տրամադրված միջոցի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա տրամադրված միջոցի վերադարձը կատարվում է պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

7. Արտարժութային վարկերի գծով արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ ՀՀ դրամով գանձվող կոմիսիոն բոլոր վճարները հաշվարկում ներառվում են պայմանագրի կնքման օրվա համար բանկի կողմից սահմանված վաճառքի փոխարժեքով:

Հավելված 8

Ծանոթագրություն ակտիվների վերաբերյալ

Բանկի անվանումը ____________________________

Ամսաթիվը ________________________

Հ/h	Հաշվառման հաշվի համարը	Գործընկերոջ հատվածային պատկանելիությունը	Գործընկերոջ երկիրը	Միջազգային կազմակերպություն հանդիսացող գործընկերը	Գործընկերոջ իրավական կարգավիճակը	Գործընկերոջ կոդը	Գործընկերոջ ՍՎԻՖԹ կոդը	Գործընկերոջ` բանկի հետ կապվածությունը	Գործընկերոջ մոտ պետական մասնակցությունը	Գործընկերոջ մոտ օտարերկրյա մասնակցությունը	Գործընկերոջ գործունեության նպատակը	Գործընկերոջ գործունեության մարզը	Գործընկերոջ վարկանշող կազմակերպությունը	Գործընկերոջ/Ակտիվի վարկանիշը	Գործընկերոջ` բանկի աշխատակից հանդիսանալը	Գործընկերոջ չափը	Ակտիվի տեսակը	Միջազգային (զարգացման) վարկային ծրագրեր	Վարկավորման բնագավառը	Ակտիվի իրականացման մարզը	Ակտիվի ապահովվածությունը	Մայր գումարի արժույթը	Տոկոսագումարի, զեղչի կամ շահութաբաժնի արժույթը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23
1																							
2																							
3																							
4																							
5																							
…																							

Դասակարգում	Ակտիվի պայմանագրային գումարը	Ակտիվի պայմանագրային ժամկետը	Ակտիվի երկարաձգման ժամկետը	Ակտիվի պայմանագրային ժամկետը երկարաձգումից հետո	Տոկոսադրույքի տեսակը	Լողացող/փոփոխվող տոկոսադրույքի ինդեքսը (դրույքը)	Տոկոսադրույքի փոփոխմանը մնացած ժամկետը	Անվանական տոկոսադրույք/մասնաբաժինը	Հետհաշվեկշռային հոդվածի տոկոսադրույքը	Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը	Տարեկան արդյունավետ տոկոսադրույքը` բանկի տեսանկյունից	Տարեկան փաստացի տոկոսադրույքը գործընկերոջ տեսանկյունից (APRC)
24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36

Ակտիվի մարմանը մնացած ժամկետայնությունը													Հնարավոր կորուստների պահուստը	Հնարավոր կորուստների պահուստը հետհաշվեկշռային հոդվածի գծով	Լրացուցիչ պահուստը	Սառեցված և դեպոնացված միջոցների արժեքը	Տոկոսագումարի/զեղչի/շահաբաժնի մնացորդը	Տույժի/տուգանքի մնացորդը	Ակտիվի մայր գումարի մնացորդը	Հետհաշվեկշռային հոդվածի գծով տոկոսագումարի մնացորդը	Ակտիվի համախառն հաշվեկշռային մնացորդը	Հետհաշվեկշռային հոդվածների մնացորդը	Անշարժ գույք հանդիսացող ապահովվածության արժեքը	Շարժական գույք հանդիսացող ապահովվածության արժեքը	Այլ ապահովվածության արժեքը	Ակտիվների քանակը
ժամկետանց	ժամկետային	մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91-ից 120 օր	121-ից 150 օր	151-ից 180 օր	181 օրից 1 տարի	1 տարուց 3 տարի	3-ից 5 տարի	5-ից 15 տարի	15 տարուց ավելի														
37.1	37.2	37.3	37.4	37.5	37.6	37.7	37.8	37.9	37.10	37.11	37.12	37.13	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51

Ծանոթագրություն պարտավորությունների վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____

հ/հ	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)	Ստացող վիճակագրական տեղեկատվության տրամադրման ենթակա անձի (ընդհանրացված տվյալներ)
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
…																				

Տրոհման վերաբերյալ տեղեկատվություն	Փոխանակման գործարքների վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր շուկայական ռիսկի դիրքերի վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր շուկայական ռիսկի դիրքերի վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր շուկայական ռիսկի դիրքերի վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր շուկայական ռիսկի դիրքերի վերաբերյալ տեղեկատվություն	Միջոցներ վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր վերաբերյալ տեղեկատվություն (ընդհանուր)	Ընդհանուր ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր վերաբերյալ տեղեկատվություն	Ընդհանուր վերաբերյալ տեղեկատվություն
21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33

Տոկոսադրվի մեծացումը	Հեռախոսային ծառայությունների մատուցումը	Տուժ/տուժողի վճարունակ մեծացումը	Պատասխանատվության ապահովագրության մեծացումը	Պատասխանատվության ապահովագրության նվազեցում	Ընտրության իրավունքի կիրառման կարգի փոփոխում	Հեռուստահաղորդումների մատուցում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Հեռուստահաղորդումների մատուցում	Տուժողի մեծացումը	Հեռուստահաղորդումների մատուցում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Ընտրական ցուցակում ներառման կարգի փոփոխում	Տուժ/տուժողի վճարունակ մեծացումը
35	36	37	38	39	40	41	42	43	44	45	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	35	36	37

Տոկոսադրվի վճարման ժամկետ	Փոխանցվող պատասխանատվություն	Ամորտ գծով վճարում	Պատասխանատվության ապահովագրում	Պատասխանատվության ապահովագրության ժամկետի երկարացում	Պատասխանատվության ապահովագրության ժամկետի կրճատում	Տոկոսադրվի վերանայում	Լուսացույց/փոխադրամիջոցի կանգառում (դադար)	Տնտեսադրվի վերադարձման ժամկետ	Անվճարունակության ապացուցում	Հեռախոսային կապի ապահովում	Տարեկան տեխզննում	Տարեկան տեխզննման ժամկետի երկարացում	Պարտավորության մարմանը մնացած ժամկետայնությունը											
													ժամկետանց	ժամկետային	մինչև 30 օր	31-ից 60 օր	61-ից 90 օր	91-ից 120 օր	121-ից 150 օր	151-ից 180 օր	181 օրից 1 տարի	1 տարուց 3 տարի	3-ից 5 տարի	5-ից 15 տարի	15 տարուց ավելի
21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34.1	34.2	34.3	34.4	34.5	34.6	34.7	34.8	34.9	34.10	34.11	34.12	34.13

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և իրավասու մարմնի կողմից տրված դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ունեցող կազմակերպությունները կարող են իրականացնել էլեկտրոնային փողի թողարկում, սպասարկում և իրացում (տարածում) միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով և համապատասխան թույլտվության հիման վրա,

նպատակ ունենալով

ստեղծել առավել բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողով վճարումների կատարման և զարգացման համար,

բարձրացնել հանրության վստահությունը վիրտուալ միջավայրում էլեկտրոնային փողով վճարումներ իրականացնելու նկատմամբ՝ միաժամանակ սահմանելով Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողի միջավայրում առաջացող հնարավոր ռիսկերի կանխարգելման և վերահսկման մեխանիզմներ,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը և 19-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 16/1) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) «Կանոնակարգ 16/1-ի 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) սույն կարգում օգտագործվող լիցքավորման քարտերի վաճառք (իրացում), էլեկտրոնային փողի թողարկում/հաշվառման հաշվի համալրում (լիցքավորում), մեկանգամյա օգտագործման չլիցքավորվող էլեկտրոնային քսակների վաճառք (իրացում), էլեկտրոնային փողով վճարման իրականացում, էլեկտրոնային փողի մարում, էլեկտրոնային փողի փոխարկում Փոխարկողի միջոցով, էլեկտրոնային փողի փոխարկում, էլեկտրոնային փողի փոխանցում հասկացությունները կիրառվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի էլեկտրոնային փողի թողարկման ու սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները սահմանող նորմատիվ իրավական ակտով կիրառվող նշանակության:»,

2) ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 16/1-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը,

3) Կանոնակարգ 16/1-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) դիմողի կողմից էլեկտրոնային փող թողարկելու գործունեություն իրականացնելու համար կիրառվող սարքավորումները, ապարատածրագրային համալիրները և անվտանգությանը ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն Կենտրոնական բանկի իրավական ակտով սահմանված տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջներին:»,

4) ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 16/1 5-րդ կետի 4-րդ ենթակետը,

5) Կանոնակարգ 16/1-ի 5-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) դիմողի իրավասու մարմնի կողմից հաստատված գործունեության կանոնակարգ, որը բավարարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի էլեկտրոնային փողի թողարկման ու սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները սահմանող նորմատիվ իրավական ակտով սահմանված պահանջները»,

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հունվարի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

6) Կանոնակարգ 16/1-ի 5-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) ներքին հսկողության իրականացման մեխանիզմների և անվտանգության ռիսկերի կառավարման ընթացակարգերի նկարագրություն, որը բավարարում է Կենտրոնական բանկի իրավական ակտով սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պահանջները»,

7) Կանոնակարգ 16/1-ը լրացնել նոր 13.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«13.1. Թողարկողն իր կողմից սահմանված և կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված գործունեության կանոնակարգում փոփոխություններ կամ լրացումներ կատարելուց առաջ համապատասխան փոփոխությունները ներկայացնում է Կենտրոնական բանկ՝ համաձայնեցման: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիտողություն կամ առաջարկություն չներկայացնելու դեպքում փոփոխությունները և (կամ) լրացումները համարվում են համաձայնեցված:»,

8) ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 16/1-ի 24-րդ, 25-րդ և 26-րդ կետերը,

9) Կանոնակարգ 16/1-ի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27. Էլեկտրոնային փող թողարկող դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպության կողմից կարող են մատուցվել էլեկտրոնային փող թողարկելու հետ կապված հետևյալ թողարկման և սպասարկման ծառայությունները՝

1) լիցքավորման քարտերի վաճառք (իրացում),
2) էլեկտրոնային փողի թողարկում/Հաշվառման Հաշվի համալրում (լիցքավորում),
3) մեկանգամյա օգտագործման չլիցքավորվող էլեկտրոնային քսակների վաճառք (իրացում),
4) էլեկտրոնային փողով վճարման իրականացում,
5) էլեկտրոնային փողի մարում,
6) էլեկտրոնային փողի փոխարկում Փոխարկողի միջոցով,
7) էլեկտրոնային փողի փոխարկում,
8) էլեկտրոնային փողի փոխանցում:»,

10) Կանոնակարգ 16/1-ի 28-րդ կետի «փոխառություն տրամադրել օգտագործողին» բառերը փոխարինել «փոխառություն տրամադրել Հաճախորդներին» բառերով,

11) Կանոնակարգ 16/1-ի 29-րդ կետի «միջոցների դիմաց օգտագործողին» բառերը փոխարինել «միջոցների դիմաց Հաճախորդներին» բառերով,

12) Կանոնակարգ 16/1-ը 32-րդ կետից հետո լրացնել նոր 33-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«33. Էլեկտրոնային փող թողարկող կազմակերպության կողմից թողարկված 1 միավոր էլեկտրոնային փողը հավասար է 1 ՀՀ դրամի:»,

13) Կանոնակարգ 16/1-ի Հավելված 3-ի երկրորդ պարբերության «Կանոնակարգ 16/2-ի 6-րդ գլխով սահմանված պահանջներին» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի էլեկտրոնային փողի թողարկման ու սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, տեղեկատվական անվտանգության ապահովման և բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պահանջները սահմանող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 հունվարի 2015 թ., N 1-Ն

«Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 73-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և իրավասու մարմնի կողմից տրված դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ունեցող կազմակերպությունները կարող են իրականացնել էլեկտրոնային փողի թողարկում, սպասարկում և իրացում (տարածում) միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով և համապատասխան թույլտվության հիման վրա,

նպատակ ունենալով

հստակեցնել էլեկտրոնային փողով վճարումների իրականացումը կարգավորող իրավական դաշտը, ինչպես նաև ստեղծել առավել բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողով վճարումների կատարման և զարգացման համար,

բարձրացնել հանրության վստահությունը վիրտուալ միջավայրում էլեկտրոնային փողով վճարումներ իրականացնելու նկատմամբ,

կանխարգելել և վերահսկել այն բոլոր ռիսկերը, որոնք կարող են առաջանալ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային փողով ծառայությունների մատուցման ժամանակ,

հիմք ընդունելով

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 55-րդ հոդվածները, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, 19.1 հոդվածի 7-րդ մասը և 25-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի ««էլեկտրոնային փողերի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողերով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16/2-ը հաստատելու մասին» թիվ 73-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 հունվարի 2015 թ., N 2-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հունվարի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.02.2015 թ. (ՀՀԳՏ N5 (517)[1], 16.02.2015):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 16.02

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ (ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ) ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության), էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջներին համապատասխանելու և պարտավորությունները մարելու, թողարկողների կողմից հաշվետվությունների լրացման և տրամադրման կարգն ու պայմանները, ինչպես նաև էլեկտրոնային փող թողարկողների՝ սույն կարգով սահմանված գործառույթների պատվիրակման պայմանները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է սույն կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված էլեկտրոնային փող թողարկողների վրա: Սույն կանոնակարգի պահանջները չեն տարածվում Հավելված 1-ով սահմանված ծառայությունների վրա:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. Սույն կանոնակարգում կիրառվող հիմնական հասկացությունները են.

1) ***էլեկտրոնային փող***՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի «իա» կետով սահմանված նշանակության,

2) ***էլեկտրոնային փող թողարկող*** (այսուհետ՝ ***Թողարկող***)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի կողմից դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած կազմակերպություն, որը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ստացել է նաև էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ կամ օտարերկրյա առևտրային բանկի մասնաճյուղ կամ այլ կազմակերպություն, որը Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում կարող է իրականացնել էլեկտրոնային փողի թողարկում,

3) ***էլեկտրոնային փողով հաշվարկների իրականացման համակարգ*** (այսուհետ՝ ***Համակարգ***)՝ Թողարկողների կամ Գործակալների (այսուհետ՝ Մասնակիցներ), ինչպես նաև էլեկտրոնային փողի թողարկումը և սպասարկումը ապահովող կարգերի, կանոնների, ապարատածրագրային համալիրի կիրառումը ապահովող գործընթացների ամբողջություն,

4) ***Համակարգի կանոններ***՝ Համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված կանոններ, համաձայն որոնց սահմանվում է Համակարգում մասնակցության պայմանների, էլեկտրոնային փողի թողարկման, օգտագործման, սպասարկման և Համակարգում մատուցվող ծառայությունների, քլիրինգի, պրոցեսինգի իրականացման և վերջնահաշվարկի կատարման հետ կապված ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների կիրառման կարգն ու պայմանները,

5) ***Համակարգի օպերատոր***՝ Համակարգի այն մասնակիցը, որը պատասխանատու է Համակարգի գործունեության համար, և որը Համակարգի այլ մասնակիցների կողմից լիազորված է իրականացնելու քլիրինգ և (կամ) վերջնահաշվարկ,

6) ***Օգտագործող***՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն ստանում է իրավունք թողարկողի կողմից նախապես հայտարարված և սահմանված պայմանների ու կանոնների համաձայն իր կողմից ձեռքբերված էլեկտրոնային փողն օգտագործել Համակարգում մատուցվող ծառայություններում,

7) ***Հաշվառման Հաշիվ***՝ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում կամ միկրոպրոցեսորում (չիպում) Օգտագործողի, Ծառայություն մատուցողի, Գործակալի, Տարածողի կամ Փոխարկողի (այսուհետ՝ Հաճախորդ) նկատմամբ Թողարկողի դրամական պարտավորության հաշվառման վերաբերյալ գրառումների ամբողջություն,

8) ***էլեկտրոնային փողի սպասարկում***՝ էլեկտրոնային փողով գործառնությունների (ծառայությունների մատուցման) և դրանց հետ կապված հաշվարկների իրականացման ապահովում, որի արդյունքում Օգտագործողը հնարավորություն է ստանում համալրել Հաշվառման Հաշիվը և (կամ) կանխիկացնել (ներկայացնել մարման) Հաշվառման Հաշվին առկա էլեկտրոնային փողը, փոխանցել էլեկտրոնային փողը Համակարգում գրանցված այլ Օգտագործողներին և (կամ) վճարել Ծառայություն մատուցող անձանց՝ մատուցված ծառայության, վաճառված ապրանքի դիմաց,

9) ***էլեկտրոնային փողի փոխարկում***՝ Թողարկողի գործառույթ, որի արդյունքում իրականացվում է ցանկացած էլեկտրոնային փող թողարկողի կողմից թողարկված էլեկտրոնային փողի փոխանակում մեկ այլ համակարգի կողմից թողարկված էլեկտրոնային փողով (այսուհետ՝ Փոխարկում): Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված փոխարկման գործառույթը Թողարկողի կողմից կարող է պատվիրակվել այլ անձի (այսուհետ՝ Փոխարկող)՝ համաձայն սույն կարգի 5-րդ գլխով սահմանված պայմանների,

10) ***էլեկտրոնային փողով կատարված գործառնությունների անդորրագիր***՝ Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվային իրավական ակտով սահմանված ձևով կազմված էլեկտրոնային փողով գործառնության կատարումը հավաստող ձևավորված վճարահաշվարկային փաստաթուղթ,

11) ***լիցքավորման քարտ***՝ Թողարկողի կողմից սահմանված անվանական արժեք պարունակող կոդ, որը կարող լինել քարտի տեսքով և հնարավորություն է տալիս Օգտագործողին իր կողմից վճարված համարժեք դրամական միջոցների դիմաց համալրել Հաշվառման Հաշիվը,

12) ***լիցքավորման քարտի հետգնում (վերադարձ)***՝ Թողարկողի չակտիվացված լիցքավորման քարտերի պարտադիր հետգնում թողարկողի կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քարտի վնասվածության պատճառով հնարավոր չէ պարզել լիցքավորման քարտի իսկությունը կամ դրա օգտագործված լինելու փաստը,

13) ***Ծառայություն մատուցող անձ***՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը թողարկողի հետ կնքված պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն համաձայնել է թողարկված էլեկտրոնային փողը, որպես վճարամիջոց, ընդունել իր կողմից մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքների կամ կատարվող աշխատանքների դիմաց,

14) ***Գործակալ***՝ Թողարկողից տարբերվող սույն կետի 15-րդ ենթակետում նշված ֆինանսական կազմակերպություն, որը թողարկողի հետ կնքված պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն իրականացնում է էլեկտրոնային փողի մարում և (կամ) Օգտագործողի Հաշվառման Հաշվի համալրում (լիցքավորում), ինչպես նաև լիցքավորման քարտերի և մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային քսակների վաճառք,

15) ***ֆինանսական կազմակերպություն***՝ դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած կազմակերպություն կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղ,

16) ***Տարածող***՝ Թողարկողից տարբերվող անձ, որը Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն իրականացնում է լիցքավորման քարտերի և (կամ) մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային քսակների վաճառք:

4. Թողարկողը, կախված կիրառվող տեխնոլոգիայից, կարող է թողարկել էլեկտրոնային փողի հետևյալ տեսակներ.

1) ***քարտի հիման վրա թողարկված էլեկտրոնային փող (այսուհետ՝ էլեկտրոնային քսակ)***՝ քարտի կամ այլ սարքավորման մեջ տեղադրված միկրոպրոցեսորում (չիպում) պարունակող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որը թույլ է տալիս Օգտագործողին համապատասխան ենթակառուցվածքի միջոցով այն օգտագործել Համակարգում մատուցվող ծառայություններում՝ Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն, և որի օգտագործման ժամանակ միկրոպրոցեսորում (չիպում) պարունակվող դրամական արժեքը պակասեցվում կամ ավելացվում է իրական ժամանակում: Միևնույն ժամանակ գործառնության վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է Թողարկողին,

2) ***համակարգչային համակարգի հիման վրա թողարկված էլեկտրոնային փող*** (այսուհետ՝ ***վիրտուալ/ցանցային փող***)՝ Թողարկողի համակարգչի կամ այլ էլեկտրոնային սարքի վրա կառուցված օպերացիոն համակարգում կամ հատուկ ծրագրային ապահովման միջոցով (Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում) հաշվառված դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որը թույլ է տալիս Օգտագործողին համապատասխան ցանցի կամ ինտերնետի միջոցով այն օգտագործել Համակարգում մատուցվող ծառայություններում՝ Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն:

5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված էլեկտրոնային փողն իր հերթին կարող է լինել.

1) վերալիցքավորվող էլեկտրոնային փող՝ միկրոպրոցեսորում (չիպում) կամ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որը հնարավոր է վերալիցքավորել (ավելացնել),

2) մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փող՝ միկրոպրոցեսորում (չիպում) կամ Թողարկողի տվյալների կենտրոնացված շտեմարանում պահվող դրամական արժեք (կանխավճարված էլեկտրոնային արժեք), որը հնարավոր չէ վերալիցքավորել:

6. Թողարկողը պետք է ապահովի, որպեսզի սույն կանոնակարգի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում սահմանված էլեկտրոնային փողի շրջանառությունը իրականացվի էլեկտրոնային փողի շրջանառության փակ մոդելով: Վերջինս նշանակում է, որ Համակարգը պետք է կառուցված լինի այնպես, որ բացառի էլեկտրոնային փողի կրկնակի օգտագործումը, այսինքն՝ Համակարգում գրանցված Ծառայություն մատուցողի կողմից մատուցված ծառայության/վաճառված ապրանքի դիմաց ստացված էլեկտրոնային փողը պարտադիր պետք է ներկայացվի Թողարկողին մարման՝ համարժեք դրամական միջոցները Ծառայություն մատուցողին վճարելու միջոցով:

7. Սույն կանոնակարգի իմաստով էլեկտրոնային փողի հետ կապված կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները (գործառնությունները).

1) ***լիցքավորման քարտերի վաճառք (իրացում)***՝ գործառույթ, որի արդյունքում կանխիկ կամ անկանխիկ եղանակով վճարված դրամական միջոցների դիմաց տրամադրվում է անվանական արժեքով թողարկված էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշիվը համալրելու լիցքավորման քարտ,
2) ***էլեկտրոնային փողի թողարկում/Հաշվառման Հաշվի համալրում (լիցքավորում)***՝ գործառույթ, որի արդյունքում Թողարկողն ավելացնում է Համակարգում գրանցված Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա էլեկտրոնային փողը՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով վճարված լիցքավորման ենթակա գումարի չափով՝ ձեռքբերելով դրամական պարտավորություն Օգտագործողի նկատմամբ,
3) ***մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային քսակների վաճառք (իրացում)***՝ գործառույթ, որի արդյունքում կանխիկ կամ անկանխիկ եղանակով վճարված դրամական միջոցների դիմաց տրամադրվում է ձեռքբերման պահին վճարված դրամական արժեք պարունակող, մեկանգամյա օգտագործման և չվերալիցքավորվող էլեկտրոնային քսակ,
4) ***էլեկտրոնային փողով վճարման իրականացում***՝գործառույթ, որի արդյունքում Ծառայություններ մատուցողի կողմից մատուցված ծառայության, վաճառված ապրանքի դիմաց վճարումը կատարվում է էլեկտրոնային փողով՝ պակասեցնելով Համակարգում գրանցված վճարում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա էլեկտրոնային փողը վճարման ենթակա գումարի չափով՝ Համակարգում գրանցված Ծառայություն մատուցողի Հաշվառման Հաշիվը ավելացնելու միջոցով,
5) ***էլեկտրոնային փողի մարում***՝ գործառույթ, որի արդյունքում Թողարկողը պակասեցնում է Համակարգում գրանցված Հաճախորդի Հաշվառման Հաշվում առկա էլեկտրոնային փողը մարման ենթակա հրահանգված գումարի չափով՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով վերջիններիս վճարելու միջոցով՝ պակասեցնելով իր դրամական պարտավորության չափը Հաճախորդի նկատմամբ,
6) ***էլեկտրոնային փողի փոխարկում***՝ գործառույթ, որի արդյունքում Թողարկողի մոտ առաջանում է պարտավորություն՝ ապահովել փոխարկվող էլեկտրոնային փողի առկայությունը էլեկտրոնային փող թողարկող այլ համակարգում Օգտագործողի էլեկտրոնային փողի հաշվին: Միաժամանակ, պակասեցնելով Համակարգում գրանցված փոխարկում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա էլեկտրոնային փողը՝ փոխարկման ենթակա էլեկտրոնային փողի չափով: Ընդ որում, Թողարկողի պարտավորությունն Օգտագործողի նկատմամբ համարվում է կատարված՝ Թողարկողի կողմից սահմանված կարգով էլեկտրոնային փող թողարկող այլ համակարգում էլեկտրոնային փողի առկայության հաստատումը Օգտագործողից ստանալուց հետո: Փոխարկման արդյունքում էլեկտրոնային փողի առկայությունը էլեկտրոնային փող թողարկող այլ համակարգում Օգտագործողի էլեկտրոնային փողի հաշվին առկա չլինելու դեպքում Թողարկողը պարտավոր է վերադարձնել գումարը Օգտագործողին,
7) ***էլեկտրոնային փողի փոխարկում Փոխարկողի միջոցով***՝ գործառույթ, որի արդյունքում Թողարկողի մոտ առաջանում է պարտավորություն՝ ապահովել փոխարկվող էլեկտրոնային փողի առկայությունը էլեկտրոնային փող թողարկող այլ համակարգում Օգտագործողի էլեկտրոնային փողի հաշվին: Միաժամանակ, պակասեցնելով Համակարգում գրանցված փոխարկում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա էլեկտրոնային փողը փոխարկման ենթակա էլեկտրոնային փողի չափով և ավելացնելով Համակարգում գրանցված Փոխարկողի Հաշվառման Հաշիվը համարժեք գումարի չափով: Ընդ որում, Թողարկողի պարտավորությունն Օգտագործողի նկատմամբ համարվում է կատարված՝ Թողարկողի կողմից սահմանված կարգով էլեկտրոնային փող թողարկող այլ համակարգում էլեկտրոնային փողի առկայության հաստատումն Օգտագործողից ստանալուց հետո: Փոխարկման արդյունքում էլեկտրոնային փողի առկայությունն էլեկտրոնային փող թողարկող այլ համակարգում Օգտագործողի էլեկտրոնային փողի հաշվին առկա չլինելու դեպքում Թողարկողը պարտավոր է վերադարձնել գումարն Օգտագործողին,

8) *էլեկտրոնային փողի փոխանցում*՝ գործառույթ, որի արդյունքում Թողարկողի մոտ առաջանում է պարտավորություն պակասեցնել Համակարգում գրանցված փոխանցում նախաձեռնող Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա էլեկտրոնային փողը փոխանցման ենթակա գումարի չափով՝ ավելացնելով Համակարգում գրանցված փոխանցման ստացող մեկ այլ Օգտագործողի Հաշվառման Հաշիվը համարժեք գումարի չափով:

ԳԼՈՒԽ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ/ՍԽԵՄԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Թողարկողը պետք է ունենա սահմանված և կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված աշխատանքի կանոնակարգ, որն առնվազն ներառում է.

1) Թողարկողի կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, ինչպես նաև դրանց մատուցման կարգը, պայմանները և ժամկետները,
2) Հաճախորդների կողմից կատարված գործառնությունների արդյունքում առաջացած դրամական պարտավորությունների և (կամ) պահանջների վերջնահաշվարկի կատարման ժամկետները, կարգն ու պայմանները,
3) Թողարկողի և Հաճախորդի միջև առաջացող ռիսկերի կառավարման մեխանիզմների նկարագրությունը,
4) էլեկտրոնային փող թողարկելու արդյունքում ձեռք բերված պարտավորությունների կատարման հստակ ընթացակարգը, որում նկարագրված կլինեն թողարկված էլեկտրոնային փողի մարման կարգն ու պայմանները,
5) էլեկտրոնային փողի գործողության առավելագույն ժամկետ սահմանված լինելու դեպքում ժամկետը լրանալուց հետո Օգտագործողի մոտ առկա էլեկտրոնային փողին համարժեք դրամական միջոցները վերադարձնելու կարգն ու պայմանները,
6) էլեկտրոնային փողով կատարված գործառնությունները հավաստող անդորրագրերի պահպանման, կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածքի տրամադրման առավելագույն ժամկետները, կարգը և պայմանները,
7) Մասնակիցների միջև իրավասությունների և պարտավորությունների, ինչպես նաև պատասխանատվության բաշխման կարգն ու պայմանները,
8) Օգտագործողների կողմից ներկայացված բողոքների քննության, դրա արդյունքներով բողոքներն ընդունելու կամ մերժելու ժամկետները, կարգն ու պայմանները,
9) Համակարգում գրանցված յուրաքանչյուր Հաճախորդի նույնականացման ընթացակարգերի նկարագրությունը՝ ներառյալ ծածկագրերի, կոդերի կիրառման կարգն ու պայմանները,
10) Համակարգի կողմից թողարկված էլեկտրոնային փողի և լիցքավորման քարտերի նույնականացման ընթացակարգերի նկարագրությունը՝ ներառյալ ծածկագրերի, կոդերի կիրառման կարգն ու պայմանները,
11) տպած լիցքավորման քարտերի հաշվառման և պահպանման կարգն ու պայմանները,
12) վաճառված լիցքավորման քարտերի (այդ թվում՝ տարածողների և (կամ) գործակալների միջոցով) հաշվառման և պահպանման, ինչպես նաև տարածողների և (կամ) գործակալների հետ փոխհաշվարկների իրականացման կարգն ու պայմանները,
13) վաճառված մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային քսակների (այդ թվում՝ տարածողների և գործակալների միջոցով) հաշվառման և պահպանման, ինչպես նաև տարածողների և գործակալների հետ փոխհաշվարկների իրականացման կարգն ու պայմանները,
14) թողարկված էլեկտրոնային փողի դիմաց ստանձնած պարտավորությունների հաշվառման կարգն ու պայմանները,
15) մարված էլեկտրոնային փողի (այդ թվում՝ գործակալների միջոցով) հաշվառման կարգն ու պայմանները,
16) հետ գնված լիցքավորման քարտերի հաշվառման կարգն ու պայմանները,
17) էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման հետ կապված յուրաքանչյուր գործառնության փաստաթղթավորման և փաստաթղթերի պահպանման կարգն ու պայմանները,
18) Համակարգին անդամակցող նոր Հաճախորդի նկատմամբ սահմանված պահանջները,
19) էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացումը ապահովող սարքավորումներին ներկայացվող պահանջները, սպասարկման իրականացման կարգն ու պայմանները:

9. Էլեկտրոնային փողի տրամադրման ժամանակ Թողարկողի և Օգտագործողի միջև կնքվում է էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման համար Հաշվառման Հաշվի բացման և համալրման պայմանագիր (այսուհետ՝ էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման պայմանագիր), որն առնվազն ներառում է համապատասխան դրույթներ.

1) Օգտագործողի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ,
2) Թողարկողի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ,
3) Համակարգում էլեկտրոնային փողով մատուցվող ծառայությունների տեսակների վերաբերյալ,
4) էլեկտրոնային փողի սպասարկման ձևի, կիրառվող ցանցի, սակագների գանձման պայմանների, օգտագործմանը ներկայացվող պահանջների, իսկ եթե դրանք կարող են փոփոխվել, ապա՝ փոփոխության մասին Օգտագործողին տեղեկացնելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,
5) Թողարկողի կողմից կիրառվող միջնորդավճարների վերաբերյալ,
6) էլեկտրոնային փողի մարման (այդ թվում՝ գործողության ժամկետը լրանալուց հետո), Հաշվառման Հաշվի համալրման (լիցքավորման) կարգի, պայմանների, ժամկետների և ձևերի վերաբերյալ,
7) համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների կամ այլ խնդիրների դեպքում Թողարկողի պատասխանատվության չափի, կատարվող գործողությունների կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,
8) համակարգում առաջացած կեղծիքների, չարտոնված գործառնությունների, տեխնիկական սխալների կամ այլ խնդիրների դեպքում Օգտագործողի կողմից թողարկողին անհապաղ տեղեկացնելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,
9) այն դեպքերի և պայմանների մասին, երբ Օգտագործողի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել այլ անձանց,
10) Օգտագործողի կողմից անհամաձայնություններ ունենալու դեպքում վեճերի լուծման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ:

10. էլեկտրոնային փողը, որպես վճարամիջոց ընդունելուն համաձայնություն տված և Համակարգում գրանցված Ծառայություն մատուցող անձի և Թողարկողի միջև կնքվում է պայմանագիր մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքի դիմաց էլեկտրոնային փողը, որպես վճարամիջոց ընդունելու վերաբերյալ (այսուհետ՝ Ծառայությունների մատուցման պայմանագիր), որն առնվազն ներառում է դրույթներ.

1) Ծառայություն մատուցող անձի իրավունքների, պարտավորությունների, ինչպես նաև պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ (թերի) կատարելու համար պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,
2) Ծառայություն մատուցող անձի կողմից մատուցվող ծառայությունների տեսակների, կիրառվող սակագների և այլ պայմանների, դրանց փոփոխությունների մասին Թողարկողին իրազեկելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,
3) Թողարկողի կողմից կիրառվող միջնորդավճարների վերաբերյալ,
4) Համակարգում ծառայությունների մատուցման արդյունքում առաջացած պարտավորությունների գծով հաշվարկների իրականացման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,
5) Ծառայություն մատուցող անձի կողմից վաճառված ապրանքի (մատուցված ծառայության) դիմաց ստացված գումարը վերադարձնելու (refund (րիֆանդ)) արդյունքում (այդ թվում՝ գործառնությունն անվավեր ճանաչելու դեպքում) առաջացած պարտավորությունների գծով Թողարկողի և Ծառայություն մատուցողի միջև հաշվարկների իրականացման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ:

11. Լիցքավորման քարտերի վաճառքը Տարածողի կամ Գործակալի միջոցով իրականացնելու դեպքում Թողարկողի հետ կնքված պայմանագիրն առնվազն ներառում է Տարածողի կամ Գործակալի և Թողարկողի միջև փոխհաշվարկների իրականացման կարգի, պայմանների և ժամկետների, ինչպես նաև կողմերի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ դրույթներ:

12. Թողարկողի կողմից լիցքավորման քարտի հետգնումը բացառող վնասվածության աստիճանը սահմանող կարգն ու պայմանները Թողարկողի կողմից սահմանվում է ինքնուրույն և տրամադրվում Օգտագործողին նախապես:

13. Մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային քսակների վաճառքը Տարածողի կամ Գործակալի միջոցով իրականացնելու դեպքում Թողարկողի հետ կնքված պայմանագիրն առնվազն ներառում է Տարածողի կամ Գործակալի և Թողարկողի միջև փոխհաշվարկների իրականացման կարգի, պայմանների և ժամկետների, ինչպես նաև կողմերի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ դրույթներ:

14. էլեկտրոնային փողի մարումը և (կամ) համալրումը Գործակալի միջոցով իրականացնելու դեպքում Թողարկողի հետ կնքված պայմանագիրն առնվազն ներառում է դրույթներ Գործակալի և Թողարկողի միջև փոխհաշվարկների իրականացման, Օգտագործողների առաջին իսկ պահանջով էլեկտրոնային փողի մարման կարգի, պայմանների և ժամկետների, ինչպես նաև էլեկտրոնային փողի մարումն ու համալրումն իրականացնելու ժամանակ կողմերի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ:

15. Գործակալի կողմից էլեկտրոնային փողի մարումն ու համալրումը իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվում է Թողարկողին՝ Թողարկողի հետ կնքած պայմանագրով և Համակարգի կանոններով սահմանված ժամկետում և ձևաչափով:

16. Թողարկողը մշակում է իր կողմից թողարկված էլեկտրոնային փողի շրջանառությունը կարգավորող համակարգի կանոններ, որոնք սահմանում են Հաճախորդների իրավասությունների և պարտավորությունների շրջանակը, այդ թվում՝ Համակարգում տեղի ունեցած միջադեպի կամ խնդրի առաջացման կամ զեղծարարության արդյունքում վնասների բաշխման մեխանիզմների և սահմանված ժամկետների կարգը, Հաճախորդներին ներկայացվող պահանջներն ու էլեկտրոնային փողի շրջանառության սխեման, որոնք հաստատվում են կառավարման իրավասու մարմնի կողմից:

17. Թողարկողի կողմից էլեկտրոնային փողով գործառնությունների կատարումն ապահովող ներքին կարգերի, կանոնների և պայմանների յուրաքանչյուր փոփոխություն գրառվում, փաստաթղթավորվում և հաստատվում է Թողարկողի կառավարման իրավասու մարմնի կողմից:

ԳԼՈՒԽ 4. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

18. Էլեկտրոնային փողով գործառնությունները իրականացվում են Հաճախորդի և Թողարկողի միջև կնքված պայմանագրերի և Համակարգի կանոնների համաձայն:

19. Թողարկողի կողմից թողարկված՝ յուրաքանչյուր Օգտագործողին նույնականացնող Հաշվառման Հաշվում (Հաշիվներում) պահվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 1000000 ՀՀ դրամի համարժեքը՝ անկախ յուրաքանչյուր Օգտագործողի անունով բացված հաշիվների քանակից՝ բացառությամբ սույն կանոնակարգի 20-րդ կետում սահմանված դեպքի:

20. Թողարկողի կողմից թողարկված՝ յուրաքանչյուր Օգտագործողի Հաշվառման Հաշվում պահվող մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողը յուրաքանչյուր պահի չի կարող գերազանցել 200000 ՀՀ դրամի համարժեքը:

21. Բացառությամբ սույն կանոնակարգի 22-րդ կետով սահմանված դեպքի՝ Թողարկողը պետք է սահմանի Հաճախորդի նույնականացման պատշաճ ուսումնասիրության ընթացակարգ՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտի միջոցով նույնականացման ընթացակարգ՝ բացառությամբ Ֆինանսական Միջոցառումների Աշխատանքային Խմբի (FATF) կողմից հրապարակված բարձր ռիսկային երկրների առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի:

22. Սույն կանոնակարգի 21-րդ կետում սահմանված Օգտագործողի նույնականացման պարտադիր պահանջը կարող է չսահմանվել մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փողի համար, եթե տվյալ էլեկտրոնային փողի օգտագործման շրջանակը սահմանափակված է բացառապես հետևյալ գործառնություններով՝

1) վճարումներ՝ ուղղված համակարգում գրանցված Ծառայություն մատուցողներին (C2B, P2B),
2) վճարումներ՝ ուղղված պետությանը (C2G, P2G), որոնց համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չեն վճարողին նույնականացնելու պահանջ,
3) վճարումներ պետության կողմից (G2C, G2P):

23. Սույն կանոնակարգի 22-րդ կետում նշված մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային փող Օգտագործողին չնույնականացնող Հաշվառման Հաշվում առկա միջոցները ենթակա չեն կանխիկացման կամ փոխանցման այլ Օգտագործողի:

24. Լիցքավորման քարտերի և (կամ) մեկանգամյա օգտագործման չվերալիցքավորվող էլեկտրոնային քսակների վաճառք կարող է իրականացնել Թողարկողն անձամբ, ինչպես նաև Գործակալի և (կամ) Տարածողի միջոցով, որոնք Թողարկողի հետ կնքել են ծառայությունների մատուցման պայմանագիր և գործում են Համակարգի կանոնների համաձայն:

25. Լիցքավորման քարտերի հետգնումն իրականացնում է Թողարկողն անձամբ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից են վաճառվել լիցքավորման քարտերը:

26. էլեկտրոնային փողի մարում և (կամ) համալրում կարող է իրականացնել Թողարկողն անձամբ և (կամ) Գործակալի միջոցով՝ Թողարկողի հետ կնքած ծառայությունների մատուցման պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն:

27. Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա միջոցները Օգտագործողի առաջին իսկ պահանջով ենթակա են Թողարկողի կողմից մարման (կանխիկացման)՝ անձամբ և (կամ) Գործակալի միջոցով: Անկախ ցանկացած հանգամանքից, Թողարկողն ապահովում է Օգտագործողի Հաշվառման Հաշվում առկա միջոցների կանխիկացումն (մարումը) իր կողմից՝ բացառությամբ սույն կանոնակարգի 23-րդ կետով սահմանված դեպքի:

28. Ծառայություն մատուցողի Հաշվառման Հաշվում առկա միջոցները Ծառայություն մատուցողի առաջին իսկ պահանջով ենթակա են Թողարկողի կողմից մարման՝ Ծառայություն մատուցողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով՝ անձամբ կամ Գործակալի միջոցով: Անկախ ցանկացած հանգամանքից,

Թողարկողն ապահովում է Ծառայություն մատուցողի Հաշվառման Հաշվում առկա միջոցների կանխիկացումը (մարումը) իր կողմից:

29. Համակարգում գրանցված Ծառայություն մատուցող հանդիսացող անձինք չեն կարող իրենց Հաշվառման Հաշվին առկա էլեկտրոնային փողը փոխանցել իրենց անունով Համակարգում գրանցված Օգտագործողի Հաշվառման Հաշվին կամ հակառակը՝ Օգտագործողի Հաշվառման Հաշվից փոխանցել իր անունով Համակարգում գրանցված Ծառայություն մատուցողի Հաշվառման Հաշվին:

30. Թողարկողն ապահովում է իր կողմից թողարկված և Օգտագործողի կողմից ձեռք բերված էլեկտրոնային փողի սպասարկումը՝ կրելով դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Օգտագործողի մոտ վնասների առաջացման ռիսկը:

31. Թողարկողը պարտավոր է ապահովել, որպեսզի Օգտագործողը հնարավորություն ունենա էլեկտրոնային փողն օգտագործել Թողարկողի հետ կնքված պայմանագրին համապատասխան՝ անկախ Թողարկողի և Գործակալի միջև կնքված պայմանագրի դրույթներից:

32. Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողի թողարկումն ու մարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

ԳԼՈՒԽ 5. ՓՈԽԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

33. Սույն կարգով սահմանված Փոխարկման գործառույթը Թողարկողի կողմից կարող է պատվիրակվել այն դեպքում՝

1) եթե բավարարված են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.1-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմանները,
2) եթե Փոխարկողն իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր է և Թողարկողի Համակարգում իրականացնում է բացառապես Փոխարկում,
3) եթե Փոխարկողը ներկայացնում է որևէ իրավական փաստաթուղթ (համակարգի կանոն, պայմանագիր և այլ), որում սահմանված է վերջինիս իրավասությունը կամ լիազորությունը իրականացնելու որևէ էլեկտրոնային փողի համակարգի կողմից թողարկված էլեկտրոնային փողի փոխարկում, այդ թվում՝ կնքել պայմանագրեր այլ անձանց համար տվյալ էլեկտրոնային փողի համակարգի կողմից թողարկված էլեկտրոնային փողի փոխարկման համար,
4) եթե Թողարկողի և Փոխարկողի միջև կնքված է փոխարկման գործառույթի պատվիրակման պայմանագիր, որն առնվազն ներառում է համապատասխան դրույթներ.

ա. Փոխարկողի իրավունքների, պարտավորությունների, ինչպես նաև պարտականությունները չկատարելու կամ թերի կատարելու համար պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,

բ. Փոխարկողի կողմից մատուցվող փոխարկման ծառայությունների, կիրառվող սակագների, սակագների գանձման և այլ պայմանների, դրանց փոփոխությունների մասին իրազեկելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,

գ. Թողարկողի կողմից կիրառվող միջնորդավճարների վերաբերյալ,

դ. Փոխարկողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով հաշվարկների իրականացման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,

ե. Փոխարկողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացված գումարի վերադարձման արդյունքում (այդ թվում՝ գործառնությունն անվավեր ճանաչելու դեպքում) առաջացած պարտավորությունների գծով Թողարկողի և Փոխարկողի միջև հաշվարկների իրականացման կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ,

զ. Փոխարկողին պատվիրակված ծառայության հետ կապված պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Օգտագործողի առջև Թողարկողի պատասխանատվություն կրելու վերաբերյալ դրույթներ,

է. պատվիրակված գործառույթների իրականացման մասով՝ Փոխարկողի նկատմամբ Օրենքով սահմանված կարգով վերահսկողության իրականացման վերաբերյալ դրույթներ,

ը. փոխարկման գործառույթի պատվիրակման արդյունքում հնարավոր ռիսկերի կառավարմանն ուղղված մեխանիզմների վերաբերյալ դրույթներ:

34. Սույն կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պայմանագրի նախագիծը նախքան փոխարկման գործառույթը պատվիրակելը ներկայացվում է Կենտրոնական բանկ: Ընդ որում՝ արդեն կնքված պատվիրակման պայմանագրի դրույթները չեն կարող տարբերվել Կենտրոնական բանկ ներկայացված պայմանագրի նախագծով նախատեսված դրույթներից:

35. Փոխարկման պատվիրակումը չպետք է հանգեցնի Թողարկողի ներքին հսկողության որակի կամ վերջինիս՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության նկատմամբ Թողարկողի իրավասու մարմնի կողմից իրականացվող մոնիթորինգի կարողության վատթարացմանը:

ԳԼՈՒԽ 6. ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

36. Սույն կանոնակարգով սահմանված թիվ 11 հաշվետվությունը ներկայացվում է բացառապես էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան՝ համաձայն Հավելված 2-ի: Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունը ներկայացվում է մագնիսական կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացվում Կենտրոնական բանկի հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից Թողարկողին ուղարկված պաշտպանված ֆայլով («Մայքրոսոֆթ օֆիս 97» կամ դրա կատարելագործված տարբերակով), որի փոփոխումն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

37. Հաշվետվությունում նշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը: Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով օր. ամիս. տարի (օրինակ 31/01/2014):

38. Թիվ 11 (ամսական) հաշվետվությունը բաղկացած է հինգ աղյուսակից: Հաշվետվության մեջ ընդգրկվում են տվյալներ՝ կապված էլեկտրոնային փողի, լիցքավորման քարտերի թողարկման, սպասարկման և մարման, ինչպես նաև էլեկտրոնային փողով կատարված գործառնությունների տեսակների և թողարկողի կողմից վարվող Հաշվառման Հաշիվների հետ:

39. Հաշվետվության առաջին՝ «Թողարկված և մարված էլեկտրոնային փողի վերաբերյալ» աղյուսակում լրացվում են հաշվետու ամսվա ընթացքում Թողարկողի, Գործակալի կամ Տարածողի միջոցով լիցքավորված և (կամ) մարված էլեկտրոնային փողերի գումարի և քանակի վերաբերյալ տվյալներ: Ընդ որում.

1) «Էլեկտրոնային փողի տեսակ» սյունակում ներկայացվում է Թողարկողի կողմից թողարկված էլեկտրոնային փողի տեսակը, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ «Էլեկտրոնային քսակ» կամ «Վիրտուալ փող»:
2) «Էլեկտրոնային փողի ձև» սյունակում ներկայացվում է Թողարկողի կողմից թողարկված էլեկտրոնային փողի ձևը, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ «մեկանգամյա» կամ «վերալիցքավորվող»:
3) «Ում կողմից սպասարկված» սյունակում ներկայացվում է Թողարկողի կողմից բացված էլեկտրոնային փողի Հաշվառման Հաշվի լիցքավորում և (կամ) մարումն ապահովողին, որտեղ նշվում է՝

ա. «Թողարկող», եթե էլեկտրոնային փողի լիցքավորումը կամ մարումը իրականացվել է Թողարկողի կողմից,

բ. «Գործակալ», եթե էլեկտրոնային փողի լիցքավորումը կամ մարումը իրականացվել է Գործակալի կողմից,

գ. «Տարածող», եթե մեկանգամյա էլեկտրոնային քսակի վաճառքն իրականացվել է Տարածողի միջոցով:

4) «Գործառնության տեսակ» սյունակում ներկայացվում է էլեկտրոնային փողով իրականացված գործառնության տեսակը, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ «լիցքավորում» կամ «մարում»:
5) «Հաշվառման Հաշիվներ» սյունակում ներկայացվում են Համակարգում գրանցված Հաշվառման Հաշիվներով կատարված գործառնությունները, որտեղ նշվում է՝

ա. «Ծառայություն մատուցող», եթե Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումն իրականացվել է Համակարգում գրանցված Ծառայություն մատուցողի համար,

բ. «Օգտագործող ֆիզիկական անձ», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումը կամ Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումը իրականացվել է ֆիզիկական անձ Օգտագործողի համար,

գ. «Օգտագործող իրավ. անձ», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումը կամ Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումը իրականացվել է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր անձ Օգտագործողի համար,

դ. «Փոխարկող», եթե Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումն իրականացվել է Համակարգում գրանցված Փոխարկողի համար,

6) «Լիցքավորման կամ մարման եղանակը» սյունակում ներկայացվում է Համակարգում գրանցված Հաշվառման Հաշվի լիցքավորման կամ մարման եղանակները, որտեղ նշվում է.

ա. «կանխիկ միջոցներով/միջոցներից», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումը կամ Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումը իրականացվել է կանխիկ միջոցներով,

բ. «բանկային հաշվից/հաշվին», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումն իրականացվել է բանկային հաշվից փոխանցում կատարելու միջոցով կամ Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումը իրականացվել է բանկային հաշվին փոխանցելու միջոցով,

գ. «վճարային քարտից/քարտին», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումն իրականացվել է վճարային քարտից փոխանցում կատարելու միջոցով կամ Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումը իրականացվել է վճարային քարտին փոխանցելու միջոցով,

դ. «տերմինալի միջոցով», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումը իրականացվել է տերմինալի միջոցով,

ե. «այլ էլեկտրոնային փողի միջոցով», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումն իրականացվել է այլ էլեկտրոնային փողի հաշվից փոխանցում կատարելու միջոցով, կամ Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումն իրականացվել է այլ էլեկտրոնային փողի հաշվին փոխանցելու միջոցով,

զ. «լիցքավորման քարտի միջոցով», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումն իրականացվել է լիցքավորման քարտի միջոցով,

է. «այլ սարքավորման միջոցով», եթե Հաշվառման Հաշվի լիցքավորումը կամ Հաշվառման Հաշվից էլեկտրոնային փողի մարումը իրականացվել է այլ սարքի (ՊՈՍ, բանկոմատ և այլ) միջոցով:

40. Հաշվետվության երկրորդ՝ «Տպված, վաճառված կամ հետ գնված լիցքավորման քարտերի վերաբերյալ, ըստ անվանական արժեքի» աղյուսակում լրացվում են հաշվետու ամսվա ընթացքում տպված, վաճառված կամ հետ գնված լիցքավորման քարտերի գումարի և քանակի վերաբերյալ տվյալները, որտեղ նշվում է՝

1) «Լիցքավորման քարտեր, ըստ անվանական արժեքի» սյունակում ներկայացվում են Թողարկողի կողմից տպված լիցքավորման քարտերը, ըստ անվանական արժեքի՝ ընտրել ցանկից համապատասխանաբար:
2) «Ում կողմից» սյունակում ներկայացվում են Թողարկողի կողմից տպված լիցքավորման քարտերի վաճառքը կամ հետգնումը իրականացնողների վերաբերյալ տվյալներ, որտեղ նշվում է՝

ա. «Թողարկող», եթե լիցքավորման քարտերի վաճառքը կամ հետգնումը իրականացվել է Թողարկողի կողմից,

բ. «Գործակալ», եթե լիցքավորման քարտերի վաճառքը իրականացվել է Գործակալի կողմից,

գ. «Տարածող», եթե լիցքավորման քարտերի վաճառքը իրականացվել է Տարածողի կողմից:

3) «Գործառնություն» սյունակում ներկայացվում են տպված, վաճառված կամ հետգնված լիցքավորման քարտերի վերաբերյալ տվյալներ, որտեղ նշվում է՝

ա. «տպված», եթե Թողարկողը տպել է համապատասխան անվանական արժեքով լիցքավորման քարտեր,

բ. «վաճառված», եթե Թողարկողը, Գործակալը կամ Տարածողը վաճառել են համապատասխան անվանական արժեքով լիցքավորման քարտեր,

գ. «հետ գնված», եթե Թողարկողը հետ է գնել համապատասխան անվանական արժեքով լիցքավորման քարտեր:

41. Հաշվետվության երրորդ՝ «Էլեկտրոնային փողով կատարված գործառնությունների վերաբերյալ» աղյուսակում նշվում է հաշվետու ամսվա ընթացքում էլեկտրոնային փողով կատարված գործառույթների գումարի և քանակի վերաբերյալ տեղեկատվություն տարանջատված ըստ ծառայությունների տեսակների և Ծառայություններ մատուցողների, որտեղ նշվում է՝

1) «Էլեկտրոնային փողի տեսակ» սյունակում ներկայացվում է մատուցված ծառայությունների կամ վաճառված ապրանքի դիմաց կիրառվող էլեկտրոնային փողի տեսակը՝ «էլեկտրոնային քսակ», եթե մատուցված ծառայության կամ վաճառված ապրանքի դիմաց վճարումը կատարվել է էլեկտրոնային քսակով կամ «վիրտուալ փող», եթե մատուցված ծառայության կամ վաճառված ապրանքի դիմաց վճարումը կատարվել է վիրտուալ փողով:
2) «Էլեկտրոնային փողի ձև» սյունակում ներկայացվում է մատուցված ծառայությունների կամ վաճառված ապրանքի դիմաց կիրառվող էլեկտրոնային փողի ձևը՝ «մեկանգամյա», եթե մատուցված ծառայության կամ վաճառված ապրանքի դիմաց վճարումը կատարվել է մեկանգամյա չվերալիցքավորվող էլեկտրոնային փողով, կամ «վերալիցքավորվող», եթե մատուցված ծառայության կամ վաճառված ապրանքի դիմաց վճարումը կատարվել է վերալիցքավորվող էլեկտրոնային փողով:
3) «Գործառնության տեսակ» սյունակում ներկայացվում են Համակարգում իրականացված գործառնությունների տեսակները, որտեղ նշվում է՝

ա. «վճարում», եթե էլեկտրոնային փողով կատարվել է վճարում, օրինակ՝ կոմունալ ծառայությունների, վարկի մարման կամ ապահովագրություն դիմաց, դասակարգված ըստ համապատասխան տողերի՝ «1. Ջուր», «2. Գազ», «3. էլեկտրաէներգիա», «4. Բջջային կապի ծառայություններ» կամ «5. Ֆիքսված հեռախոսակապի դիմաց վճարումներ» և այլ,

բ. «փոխարկում Փոխարկողի միջոցով», եթե Օգտագործողների կողմից իրականացվել է Համակարգում գրանցված Փոխարկողի միջոցով էլեկտրոնային փողի փոխարկում այլ էլեկտրոնային փողի կամ հակառակը, դասակարգված ըստ համապատասխան տողերի՝ «այլ էլեկտրոնային փողի ձեռքբերում» կամ «այլ էլեկտրոնային փողի վաճառք»,

գ. «փոխարկում», եթե Օգտագործողների կողմից իրականացվել է Համակարգում թողարկված էլեկտրոնային փողի փոխարկում այլ էլեկտրոնային փողի կամ հակառակը, դասակարգված ըստ համապատասխան տողերի՝ «այլ էլեկտրոնային փողի ձեռքբերում» կամ «այլ էլեկտրոնային փողի վաճառք»,

դ. «փոխանցում», եթե իրականացվել է Համակարգում գրանցված Օգտագործողների միջև Հաշվառման Հաշիվներով էլեկտրոնային փողի փոխանցում՝ ընտրելով «Հաշվառման Հաշվից փոխանցում Հաշվառման Հաշվին» տողը:

4) «Ծառայության տեսակ» սյունակում ներկայացվում են Համակարգում մատուցված ծառայությունները, որոնց դիմաց վճարումը իրականացվել է էլեկտրոնային փողով, որտեղ նշվում է՝

ա. «ապրանքի ձեռքբերում», եթե էլեկտրոնային փողով վճարումը կատարվել է ապրանքի ձեռքբերման նպատակով,

բ. «կոմունալ ծառայություններ», եթե էլեկտրոնային փողով վճարումը իրականացվել է կոմունալ ծառայությունների՝ ջրի, գազի, էլեկտրաէներգիայի, ֆիքս. հեռախոսի կամ բջջ. հեռախոսի համար մատուցված ծառայության դիմաց համապատասխանաբար,

գ. «ԱՊՊԱ», եթե էլեկտրոնային փողով իրականացվել է ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրման դիմաց վճարում,

դ. «ապահովագրություն», եթե էլեկտրոնային փողով իրականացվել է ապահովագրության դիմաց վճարում,

ե. «Հաշվառման Հաշվից փոխանցում Հաշվառման Հաշվին», եթե էլեկտրոնային փողով իրականացվել է փոխանցում Համակարգում գրանցված մեկ Հաշվառման Հաշվից մեկ այլ Հաշվառման Հաշվին,

զ. «հարկեր», «տուրքեր» կամ «տուգանքներ», եթե էլեկտրոնային փողով իրականացվել են Գանձապետարանին ուղղված վճարումներ,

է. «վարկի մարում», եթե էլեկտրոնային փողով իրականացվել է վարկի մարում,

ը. «այլ էլեկտրոնային փողի ձեռքբերում» կամ «այլ էլեկտրոնային փողի վաճառք», եթե իրականացվել է այլ էլեկտրոնային փող թողարկողի կողմից թողարկված էլեկտրոնային փողի ձեռքբերում կամ էլեկտրոնային փողի վաճառք համապատասխանաբար,

թ. «այլ», եթե էլեկտրոնային փողով իրականացվել են վճարումներ վերը նշված ցանկում չնշված ծառայությունների դիմաց:

5) «Վճարման շահառու» սյունակում ներկայացվում է էլեկտրոնային փողով կատարված վճարման շահառուն, որտեղ նշվում է՝

ա. «Ծառայություն մատուցող», եթե էլեկտրոնային փողով վճարման ստացողը Ծառայություն մատուցողն է,

բ. «Գանձապետարան», եթե էլեկտրոնային փողով վճարման ստացողը Գանձապետարանն է,

գ. «ՀայՋրմուղ-Կոյուղի», «Հայռուսգազարդ» կամ «Հայաստանի էլեկտրական Ցանցեր», եթե էլեկտրոնային փողով վճարման ստացողը «ՀայՋրմուղ-Կոյուղի» ՓԲԸ-ն է, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն կամ «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ն՝ համապատասխանաբար,

դ. «Վիվասել» ՄՏՍ, «Բիլայն», «Օրանժ Արմենիա», «Ռոստելեկոմ» կամ «Յուքոմ», եթե էլեկտրոնային փողով վճարման ստացողը «Վիվասել» ՄՏՍ, «Բիլայն», «Օրանժ Արմենիա», «Ռոստելեկոմ» կամ «Յուքոմ» հեռահաղորդակցման կապի օպերատորն է՝ համապատասխանաբար,

ե. «Վեբմանի» կամ «Յանդեքսդենգի», եթե էլեկտրոնային փողով վճարման ստացողը «Վեբմանի» կամ «Յանդեքսդենգի» արտասահմանյան էլեկտրոնային փողի համակարգն է,

զ. «Օգտագործող», եթե էլեկտրոնային փողով կատարված փոխանցման ստացողը համակարգում գրանցված մեկ այլ Օգտագործողն է,

է. «ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպություններ», ընդ որում՝ «Առևտրային բանկեր», «Ապահովագրական ընկերություններ», «Վարկային կազմակերպություններ» կամ «Վճարահաշվարկային կազմակերպություն»՝ ընտրել ցանկից համապատասխանաբար, եթե էլեկտրոնային փողով վճարման ստացողը բանկ է կամ ապահովագրական կազմակերպություն կամ վարկային կազմակերպություն կամ վճարահաշվարկային կազմակերպություն՝ համապատասխանաբար,

ը. «այլ», եթե էլեկտրոնային փողով վճարման ստացողը վերը նշված ցանկում նշված կազմակերպություն չէ:

42. Հաշվետվության չորրորդ՝ «Թողարկողի մոտ վարվող Հաշվառման Հաշիվների վերաբերյալ» աղյուսակում նշվում են հաշվետու ամսվա դրությամբ Թողարկողի կողմից բացված Հաշվառման Հաշիվներին առկա գումարների և հաշիվների քանակի վերաբերյալ տեղեկատվություն, ընդ որում.

1) «Կազմակերպություններ/Մասնակիցներ» սյունակում ներկայացվում է Համակարգում գրանցված Հաշվառման Հաշիվների վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝

ա. «Ծառայություն մատուցող», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է Ծառայություն մատուցողի համար,

բ. «Փոխարկող», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է Փոխարկողի համար,

գ. «Օգտագործող ֆիզիկական անձ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է ֆիզիկական անձ Օգտագործողի համար,

դ. «Օգտագործող իրավ. անձ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր անձ Օգտագործողի համար,

ե. «այլ էլ. փողի համակարգ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է այլ էլ. փողի համակարգի համար,

զ. «Գործակալ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է Գործակալի համար,

է. «Տարածող», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է Տարածողի համար:

2) «Հաշվառման Հաշվի կարգավիճակ» սյունակում ներկայացվում է Համակարգում գրանցված Հաշվառման Հաշիվների կարգավիճակի վերաբերյալ, որտեղ նշվում է՝

ա. «ակտիվ», եթե Համակարգում գրանցված Հաշվառման Հաշվով վերջին մեկ տարվա ընթացքում իրականացվել է առնվազն 1 գործարք,

բ. «պասիվ», եթե Համակարգում գրանցված Հաշվառման Հաշվով վերջին մեկ տարվա ընթացքում չի իրականացվել ոչ մի գործարք:

43. Հաշվետվության հինգերորդ «Թողարկողի մոտ բացված կամ փակված Հաշվառման Հաշիվների վերաբերյալ» աղյուսակում նշվում են հաշվետու ամսվա ընթացքում Թողարկողի կողմից բացված կամ փակված Հաշվառման Հաշիվների քանակի վերաբերյալ տեղեկատվություն, ընդ որում.

1) «Կազմակերպություններ/Մասնակիցներ» սյունակում ներկայացվում է Համակարգում բացված կամ փակված Հաշվառման Հաշիվների վերաբերյալ տեղեկատվություն, որտեղ նշվում է՝

ա. «Ծառայություն մատուցող», եթե Հաշվառման Հաշիվը բացվել կամ փակվել է Ծառայություն մատուցողի համար,

բ. «Փոխանակող», եթե Հաշվառման Հաշիվը բացվել կամ փակվել է Փոխանակողի համար,

գ. «Օգտագործող ֆիզիկական անձ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել կամ փակվել է ֆիզիկական անձ Օգտագործողի համար,

դ. «Օգտագործող իրավաբանական անձ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել կամ փակվել է իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր անձ Օգտագործողի համար,

ե. «այլ էլ. փողի համակարգ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել կամ փակվել է այլ էլ. փողի համակարգի համար,

զ. «Գործակալ», եթե Հաշվառման Հաշիվը բացվել կամ փակվել է Գործակալի համար,

է. «Տարածող», եթե Հաշվառման Հաշիվը բացվել կամ փակվել է Տարածողի համար:

2) «Հաշվառման Հաշվի կարգավիճակ» սյունակում ներկայացվում է Համակարգում գրանցված Հաշվառման Հաշվի կարգավիճակի վերաբերյալ, որտեղ նշվում է՝

ա. «բացված», եթե Հաշվառման Հաշիվը բացվել է հաշվետու ամսվա ընթացքում,

բ. «փակված», եթե Հաշվառման Հաշիվը փակվել է հաշվետու ամսվա ընթացքում:

Հավելված 1
«Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» կանոնակարգ 16.02-ի

ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Սույն կանոնակարգը չի տարածվում այն ծառայությունների վրա, որոնց մատուցումն իրականացվում է կանխավճարված դրամական արժեքների միջոցով և որոնք կարող են օգտագործվել միայն սահմանափակ ցանցում, որը հանդիսանում է մեկ կազմակերպության տարածման ցանց (օրինակ՝ հանրային տրանսպորտից օգտվելու քարտեր, բենզինի քարտեր, առևտրային քարտեր, անդամակցության քարտեր):

2. Սույն կանոնակարգը չի տարածվում այն կանխավճարված արժեքների վրա (air time (էյռ թայմ)՝ խոսելաժամանակ), որոնք օգտագործվում են թվային ապրանք կամ ծառայություն ձեռք բերելու համար և կարող են մատուցվել բացառապես բջջային կապի օպերատորի կողմից, եթե.

1) այդ ապրանքի (ծառայության) բնույթից բխում է, որ բջջային կապի օպերատորն ավելացնում է դրա արժեքը՝ հասանելիության, որոնման կամ տարածման ծառայություններ մատուցելու արդյունքում, և

2) այդ ապրանքը (ծառայությունը) կարող է օգտագործվել բացառապես թվային սարքերի միջոցով (օրինակ՝ բջջային հեռախոս, պլանշետ կամ այլ նմանատիպ սարքավորում), և բջջային կապի օպերատորը չի հանդիսանում բացառապես միջնորդ բաժանորդի և ծառայություն մատուցողի միջև և համապատասխան կանխավճարված արժեքի դիմաց բաժանորդին տրամադրում է թվային ապրանքը կամ ծառայությունը:

Հավելված 2

Հաշվետվություն
«Թողարկված էլեկտրոնային փողի, լիցքավորման քարտերի, էլեկտրոնային փողի սպասարկման և մարման վերաբերյալ»

Թիվ 11 (ամսական)

Կազմակերպության անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ.*

1. Թողարկված և մարված էլեկտրոնային փողերի վերաբերյալ

Էլեկտրոնային փողի տեսակ	Էլեկտրոնային փողի ձև	Ում կողմից սպա-սարկված	Գործառնու-թյան տեսակ	Հաշվառման Հաշիվներ	Լիցքավորման կամ մարման եղանակը	Գումար (հզ. ՀՀ դրամ)	Քանակ
1	2	3	4	5	6	7	8
էլեկտրոնային քսակ	մեկանգամյա	Թողարկող	լիցքավորում	Ծառայություն մատուցող	կանխիկ միջոցներով/ միջոցներից		
վիրտուալ փող	վերալիցքա-վորվող	Գործակալ	մարում	Օգտագործող ֆիզիկական անձ	բանկային հաշվից/հաշվին		
		Տարածող	վաճառք	Օգտագործող իրավաբ. անձ	վճարային քարտից/ քարտին		
				Փոխարկող	տերմինալի միջոցով		
					այլ էլ. փողի միջոցով		
					լիցքավորման քարտի միջոցով		
					այլ սարքավորման միջոցով		

Թողարկողի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Կ.Տ. *Գլխավոր հաշվապահ* _____

2. Տպված, վաճառված կամ հետ գնված լիցքավորման քարտերի վերաբերյալ՝ ըստ անվանական արժեքի

Լիցքավորման քարտեր ըստ անվանական արժեքի	Ում կողմից	Գործառնություն	Գումար (հզ. ՀՀ դրամ)	Քանակ
1	2	3	4	5
1000-ից 5000	Թողարկող	տպված		
5000-ից 10000	Գործակալ	վաճառված		
10000-ից 20000	Տարածող	հետ գնված		
20000-ից և ավելի				

Թողարկողի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Կ.Տ. *Գլխավոր հաշվապահ* _____

3. Էլեկտրոնային փողով կատարված գործառնությունների վերաբերյալ

Էլեկտրոնային փողի տեսակ	Էլեկտրոնային փողի ձև	Գործառնության տեսակ	Ծառայության տեսակ	Վճարման շահառու	Գումար (հզ. ՀՀ դրամ)	Քանակ
1	2	3	4	5	6	7
էլեկտրոնային քսակ	մեկանգամյա	վճարում	ապրանքի ձեռքբերում	Ծառայություն մատուցող		
վիրտուալ փող	վերալիցքավորվող	փոխարկում Փոխարկողի միջոցով	կոմունալ ծառայություններ	Գանձապետարան		
		փոխարկում	ԱՊՊԱ	«Հայջրմուղկոյուղի»		
		փոխանցում	ապահովագրություն	Հայռուսգազարդ		
			հարկեր	էլեկտրացանց		
			տուրքեր	«Վիվասել» ՍՍՍ		
			տուգանքներ	«Բիլայն»		
			վարկի մարում	«Դ-տելեկոմ»		
			այլ էլեկտրոնային փողերի ձեռքբերում	«Օրանժ Արմենիա»		
			այլ էլեկտրոնային փողերի վաճառք	«Ռոստելեկոմ»		
			Հաշվառման Հաշվից փոխանցում Հաշվառման Հաշվին	«Յուքոմ»		
			այլ	«Վեբմանի»		
				«Յանդեքսդենգի»		
				Օգտագործող		
				ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպություններ		
				այլ		

Թողարկողի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Կ.Տ. *Գլխավոր հաշվապահ* _____

4. Թողարկողի մոտ վարվող Հաշվառման Հաշիվների վերաբերյալ

Կազմակերպություններ/Մասնակիցներ	Հաշվառման Հաշվի կարգավիճակ	Գումար (հզ. ՀՀ դրամ)	Քանակ
1	2	3	4
Ծառայություն մատուցող	ակտիվ		
Փոխարկող	պասիվ		
Օգտագործող իրավաբանական անձ			
Օգտագործող Ֆիզիկական անձ			
այլ էլեկտրոնային փողի համակարգ			
Գործակալ			
Տարածող			

Թողարկողի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Կ.Տ. *Գլխավոր հաշվապահ* _____

5. Թողարկողի մոտ բացված կամ փակված Հաշվառման Հաշիվների վերաբերյալ

Կազմակերպություններ/Մասնակիցներ	Հաշվառման Հաշվի կարգավիճակ	Քանակ
1	2	3
Ծառայություն մատուցող	բացված	
Փոխարկող	փակված	
Օգտագործող իրավաբանական անձ		
Օգտագործող ֆիզիկական անձ		
այլ էլեկտրոնային փողի համակարգ		
Գործակալ		
Տարածող		

Թողարկողի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Կ.Տ. *Գլխավոր հաշվապահ* _____

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին[*]

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը և իրավասու մարմնի կողմից տրված դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ունեցող կազմակերպությունները կարող են իրականացնել էլեկտրոնային փողի թողարկում, սպասարկում և իրացում (տարածում) միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով և համապատասխան թույլտվության հիման վրա,

նպատակ ունենալով

ստեղծել առավել բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողով վճարումների կատարման և զարգացման համար,

բարձրացնել հանրության վստահությունը վիրտուալ միջավայրում էլեկտրոնային փողով վճարումներ իրականացնելու նկատմամբ՝ միաժամանակ սահմանելով Հայաստանի Հանրապետության տարածքում էլեկտրոնային փողի միջավայրում առաջացող հնարավոր ռիսկերի կանխարգելման և վերահսկման մեխանիզմներ,

հիմք ընդունելով

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 17/02) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգ 17/02-ի 4-րդ կետը «մասի 70 տոկոսը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն ստացած վճարահաշվարկային կազմակերպությունների, որոնց բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև հարաբերակցությունը (Ն2 նորմատիվը)՝ յուրաքանչյուր պահի պետք է կազմի 100 տոկոս» բառերով,

2) Կանոնակարգ 17/02-ը 9-րդ կետից հետո լրացնել նոր 9.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1. Վճարահաշվարկային կազմակերպության հիմնական կապիտալի մեծությունը նվազեցվում է տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով:»,

3) Կանոնակարգ 17/02-ը 14-րդ կետից հետո լրացնել նոր 14.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14.1. Սույն կարգի իմաստով էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն ստացած վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ներգրավված պարտավորությունների՝ վերջիններիս հաճախորդների հաշվառման հաշիվներին առկա միջոցները համարվում են ցպահանջ պարտավորություններ՝ անկախ այն հանգամանքից, որ էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն ստացած վճարահաշվարկային կազմակերպությունն ինքնուրույն սահմանել է դրանց մարման ժամկետ:»,

4) Կանոնակարգ 17/02-ի 18-րդ կետում «օգտագործել» բառը փոխարինել «կիրառել» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 հունվարի 2015 թ., Ն 3-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հունվարի 13-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.02.2015 թ. (ՀՀԳՏ Ն5 (517)[1], 16.02.2015):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ գործիքների կիրառման արդյունավետությունը, համապատասխանեցնել կապիտալի պահանջները բանկերի կողմից ստանձնած ռիսկերի մակարդակին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 16.1 կետում «2018» թիվը փոխարինել «2020» թվով,

2) Կանոնակարգ 2-ի 24-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպություններից, Գերմանահայկական հիմնադրամից, Եվրասիական զարգացման բանկից Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված այն միջոցների դիմաց, որոնց մինչև մարումը մնացած ժամկետը 2 տարի և ավելի է, Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 1 տոկոսի չափով:»,

3) Կանոնակարգ 2-ի 24.1 կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում, սույն կանոնակարգի հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6-րդ կետով սահմանված կազմակերպություններից, Գերմանահայկական հիմնադրամից, Եվրասիական զարգացման բանկից արտարժույթով, ինչպես նաև մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների դիմաց, որոնց մինչև մարումը մնացած ժամկետը 2 տարի և ավելի է, Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 6 տոկոսի չափով, որն ամբողջությամբ իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:»,

4) Կանոնակարգ 2-ի 28-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդ որում, հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է 2015 թ. հունվարի 1-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 50 տոկոսի չափով, 2018 թ. հունվարի 1-ից մինչև 2018 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 40 տոկոսի չափով, 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 30 տոկոսի չափով, իսկ 2020 թ. հունվարի 1-ից՝ առավելագույնը հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 28.1-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) 20 տոկոսի չափով:»,

5) Կանոնակարգ 2-ի 53.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53.1. Եթե սույն կանոնակարգի 24-րդ և 24.1-րդ կետերի երկրորդ պարբերություններով սահմանված պահանջները բավարարող ներգրավված միջոցները մասնակի կամ ամբողջությամբ մարվում են վաղաժամկետ՝ մինչև դրանց մարմանը 2 տարի մնալը, և եթե սույն կանոնակարգի 53-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված պահանջները բավարարող պարտատոմսերի գծով իրականացվում է վաղա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հունվարի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.02.2015 թ. (ՀՀՊՏ N5 (517)[1], 16.02.2015):

ժամկետ մարում, ապա բանկը վաղաժամկետ մարված գումարի գծով իրականացնում է պահուստավորում հետևյալ կարգով.

1) Պահուստավորումն իրականացվում է սկսած ներգրավված միջոցի վաղաժամկետ մարման օրվան հաջորդող օրվանից այն ժամկետի ընթացքում, որի չափով ներգրավված միջոցը պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում ընդգրկվել էր նվազեցված դրույքաչափով, բայց ոչ ավելի, քան 730 օր,
2) Պարտադիր պահուստավորման չափը որոշվում է որպես ներգրավված միջոցի միջին կշռված գումար՝ կիրառելով սույն կանոնակարգի 24-րդ և 24.1-րդ կետերի առաջին պարբերություններով համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների համար սահմանված այն դրույքաչափը, որը կիրառվում էր ներգրավված միջոցի՝ պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված դրույքաչափով ընդգրկվելու ժամանակահատվածում, իսկ սույն կանոնակարգի 53-րդ կետի 8-րդ ենթակետով սահմանված պահանջները բավարարող պարտատոմսերի դեպքում պարտադիր պահուստավորման չափը որոշվում է սույն ենթակետով սահմանված կարգով՝ կիրառելով սույն ենթակետում նշված դրույքաչափերի 1.5-ապատիկը: Ընդ որում՝ վաղաժամկետ մարված միջոցի միջին կշռված մեծության հաշվարկում չի ներառվում ներգրավված միջոցի վաղաժամկետ մարման օրը,
3) Պահուստավորումն իրականացվում է սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված գումարը Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների մեծությանը գումարելու միջոցով սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի ընթացքում:»,

6) Կանոնակարգ 2-ի 53.3 կետից հետո լրացնել նոր՝ 53.4 կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«53.4. Սույն կանոնակարգի 24-րդ և 24.1 կետերի երկրորդ պարբերություններով սահմանված ներգրավված միջոցների նկատմամբ բանկը կարող է կիրառել սույն կանոնակարգի 24-րդ և 24.1-րդ կետերի առաջին պարբերություններով սահմանված դրույքաչափերը, որի դեպքում բանկի վրա չեն տարածվի սույն կանոնակարգի 53.1 կետով սահմանված պահանջները՝ ներգրավված միջոցների մասնակի կամ ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում:»,

7) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 6.6 կետում «և Եվրոպական զարգացման բանկի խորհրդի» բառերը փոխարինել «, Եվրոպական զարգացման բանկի խորհրդի, Նիդերլանդների զարգացման բանկի (ԷՖԷմՕ) և Առևտրի և զարգացման սևծովյան բանկի» բառերով,
8) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ը 7-րդ կետից հետո լրացնել նոր 7.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1. Այն դեպքում, երբ պարտապանի նկատմամբ բանկի պահանջը միաժամանակ բավարարում է սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջները, պարտապանին տրամադրված արտարժութային ակտիվների նկատմամբ կիրառվում են համապատասխան դրամային ակտիվների համար սահմանված ռիսկի կշիռները.

1) պարտապանը հանդիսանում է իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,
2) պարտապանի՝ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դրամական ներհոսքը ստացվում է ապրանքների և (կամ) ծառայությունների արտահանումից,
3) պարտապանի՝ վարկի արժույթով արտահայտված դրամական ներհոսքերը՝ բացառությամբ ներգրավված վարկերի, վերջին մեկ տարվա ընթացքում գերազանցել են նույն արտարժույթով արտահայտված դրամական արտահոսքերը՝ ներառյալ վարկերի մարումները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն որոշման 1-ին կետի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված դրույթները տարածվում են 2015 թվականի մարտի 1-ից հետո ներգրավված միջոցների վրա և վերաբերում են պարտադիր պահուստավորման 2015 թվականի մարտի 1-ից սկսվող և հաջորդող հաշվետու ժամանակահատվածներին: Ընդ որում, բանկը չի կարող կիրառել Կանոնակարգ 2-ի 24-րդ և 24.1-րդ կետերի երկրորդ պարբերություններով սահմանված դրույքաչափերը մինչև 2015 թվականի մարտի 1-ը ներգրավված այն միջոցների նկատմամբ, որոնք վաղաժամկետ մարվել և վերակնքվել են 2015 թվականի մարտի 1-ից հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 հունվարի 2015 թ., N 6-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերից ստացվող հաշվետվությունը համապատասխանեցնել նորմատիվային դաշտի փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 2-րդ կետի աղյուսակը լրացնել նոր՝ 33-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

33	Հաշվետվություն դրամային ակտիվների ռիսկի կշիռներով կշռվող արտարժութային ակտիվների վերաբերյալ	37	ամսական (առկայության դեպքում)

2) Կանոնակարգ 3-ի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ,7. Թիվ 4 հաշվետվությունը բաղկացած է երկու էջից:

Հաշվետվության 1-ին էջում ներկայացվում են բոլոր արժույթներով ներգրավված միջոցները (անվանական գումարների (մայր գումարների) մնացորդները) դրամական արտահայտությամբ՝ հազար դրամներով, առանց տասնորդական միավորների: Ներգրավված միջոցների խմբավորումը կատարվում է ըստ հետևյալ խմբերի՝ «ՀՀ դրամ», «ԱՄՆ դոլար», «Եվրո» և «Այլ արտարժույթ»: Հաշվետվության 1-ին էջի 2-ից 29-րդ սյունակների տողերում ներկայացվում է պարտադիր պահուստավորման ենթակա ներգրավված միջոցների հաշվարկը: Ընդ որում՝ 2-24 բոլոր զույգ համարներով «Բարձր դրույքով» սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 24-րդ և 24.1-րդ կետերի 1-ին պարբերությունների պահանջներին բավարարող ներգրավված միջոցները, իսկ 3-25-րդ բոլոր կենտ համարներով «Ցածր դրույքով» սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 24-րդ և 24.1-րդ կետերի 2-րդ պարբերությունների պահանջները բավարարող ներգրավված միջոցները: 30-ից 33-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 53.1-րդ կետով սահմանված կարգով վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները՝ ըստ արժույթների: 34-րդ, 35-րդ և 36-րդ սյունակների տողերում ներկայացվում է փաստացի պահուստավորված միջոցների հաշվարկը: Ընդ որում, 34-րդ, 35-րդ և 36-րդ սյունակների տողերը լրացնելիս հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված հաշվետու բանկի թղթակցային հաշիվների տվյալ օրվա մնացորդն արտացոլող քաղվածքները: 37-ից 40-րդ և 41-ից 44-րդ սյունակների տողերում ներկայացվում են հաշվետու բանկի կողմից ներգրավված այն միջոցները, որոնք համաձայն Կանոնակարգ 2-ի 53-րդ կետի համապատասխանաբար 7-րդ և 8-րդ ենթակետերի ենթակա չեն պարտադիր պահուստավորման:

Հաշվետվության 2-րդ էջը լրացվում է այն դեպքում, երբ 1-ին էջի 3-ից 25-րդ կենտ համարով «Ցածր դրույքով» և 41-ից 44-րդ սյունակներից որևէ մեկում լրացված են տվյալներ: 2-րդ էջում լրացվում են Կանոնակարգ 2-ի 24-րդ և 24.1-րդ կետերի 2-րդ պարբերությունների պահանջները բավարարող ներգրավված միջոցների և Կանոնակարգ 2-ի 53-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջները բավարարող պարտատոմսերի վերաբերյալ տվյալները: 1-ին սյունակում լրացվում են ներգրավված միջոցի պայմանագրի, պարտատոմսերի թողարկման համարը կամ որևէ այլ տվյալ, որը կիրառվում է բանկի կողմից տվյալ ներ-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հունվարի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.02.2015 թ. (ՀՀՊՏ N6 (518), 2.03.2015):

գրավված միջոցի նույնականացման համար: 2-րդ սյունակում լրացվում է փոխատուի լրիվ անվանումը, իսկ պարտատոմսերով ներգրավված միջոցների դեպքում չի լրացվում: Ներգրավված միջոցը, մեկից ավելի անձանց կողմից ֆինանսավորված լինելու դեպքում, հաշվետվության մեջ ներկայացվում է առանձին տողերում, իսկ գումարները բաշխվում են ֆինանսավորման մասնաբաժինների համամասնությամբ: 3-րդ սյունակում լրացվում է ներգրավված միջոցի տեսակը, մասնավորապես՝ «վարկ», «վերականգնվող վարկային գիծ», «չվերականգնվող վարկային գիծ», «այլ վարկային գիծ», «ավանդ», «երկարաժամկետ ստորադաս փոխառություն», «փոխառություն», «տոկոսային պարտատոմս», «ոչ տոկոսային պարտատոմս» կամ «այլ»: 4-ից 6-րդ սյունակները լրացվում են հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ՝ դրամական արտահայտությամբ, հազար դրամներով: 7-րդ սյունակում լրացվում է ներգրավված միջոցի արժույթի ISO կոդը: 8-րդ սյունակում լրացվում է ներգրավված միջոցի պայմանագրով մարման ամսաթիվը, իսկ մասնակի մարումներ նախատեսված լինելու դեպքում՝ առաջիկա մարման ամսաթիվը: 10-րդ և 11-րդ սյունակներում լրացվում են պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ներգրավված միջոցի՝ նվազեցված դրույքաչափով ընդգրկվելու ժամանակահատվածի սկզբի և ավարտի ամսաթվերը:»:

3) Կանոնակարգ 3-ի 19-րդ կետը 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված և վերջիններիս տրամադրված միջոցները սույն հաշվետվության 1-ին և 2-րդ էջերում արտացոլվում են համապատասխանաբար «Այլ ֆինանսական կազմակերպություններից» և «Այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված» տողերում:»:

4) Կանոնակարգ 3-ը լրացնել նոր 33.3 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«33.3. Թիվ 37 հաշվետվությունը ներկայացվում է Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 7.1 կետով սահմանված պահանջները բավարարող, դրամային ակտիվների ռիսկի կշիռներով կշռվող արտարժութային ակտիվների առկայության դեպքում: Հաշվետվությունը լրացվում է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ: Հաշվետվության 2-րդ սյունակում լրացվում է իրավաբանական անձ պարտապանի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանունը: 5-րդ սյունակում լրացվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ ներառյալ հետհաշվեկշռում հաշվառվող գումարների՝ վարկային ռիսկի փոխարկման գործոններով վերահաշվարկված մեծությունը: 5-րդ և 6-րդ սյունակները լրացվում են դրամական արտահայտությամբ, հազար դրամներով: 7-րդ սյունակում լրացվում է ակտիվի արժույթի ISO կոդը»:

5) Կանոնակարգ 3-ի Ձև թիվ 4 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի (կցվում է):

6) Կանոնակարգ 3-ի Ձև թիվ 17 հաշվետվական ձևի 1-ին էջը լրացնել նոր՝ 1.5.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

1.5.1. Այլ ֆինանսական կազմակերպություններից
Հայաստանի Հանրապետության դրամ
ԱՄՆ դոլար
Եվրո
ՌԴ ռուբլի
այլ արժույթներ

7) Կանոնակարգ 3-ի Ձև թիվ 17 հաշվետվական ձևի 2-րդ էջը լրացնել նոր՝ 2.6.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

2.6.1. Այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված
Հայաստանի Հանրապետության դրամ
ԱՄՆ դոլար
Եվրո
ՌԴ ռուբլի
այլ արժույթներ

8) Կանոնակարգ 3-ը լրացնել նոր՝ Ձև թիվ 37 հաշվետվական ձևով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 11-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 փետրվարի 2015 թ., N 10-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի փետրվարի 10-ի թիվ 10-Ն որոշմամբ

«ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձև թիվ 4

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

Ամսաթիվ	Ռեզիդենտներից ներգրավված միջոցներ								Ոչ ռեզիդենտներից ներգրավված միջոցներ															
									Ընդամենը								Այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերից							
	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		Այլ արտարժույթ		ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		Այլ արտարժույթ		ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		Այլ արտարժույթ	
	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով	Բարձր դրույքով	Ցածր դրույքով
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
Միջինը	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ենթակա է պահուս-տավորման	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

(հազար դրամ)

Ընդամենը ներգրավված միջոցներ				Վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները				ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի մնացորդը			Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման՝ բացառությամբ ԿԲ-ից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների				Պարտատոմսերով ներգրավված միջոցներ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման			
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0															
0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
0	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x

Պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված (զրոյական) դրույքաչափով ընդգրկվող ներգրավված միջոցներ

(հազար դրամ)

Ներգրավված միջոցի մարման ամսաթիվը ըստ պայմանագրի	Պայմանագրի համարը	Ներգրավված միջոցի տեսակը	Ներգրավված միջոցի դիմաց վճարվող տոկոսադրույքը (տոկոսագումարը)	Ներգրավված միջոցի ստացման ամսաթիվը	Ցածր (զրոյական) դրույքաչափով ընդգրկվող գումարը	Արժույթը	Մարման ժամկետը	Պահուստավորման ենթակա	Ցածր (զրոյական) դրույքաչափով ընդգրկման ժամանակահատվածը	
									Սկիզբ	Ավարտ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Գլխավոր հաշվապահ _____ »

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի փետրվարի 10-ի թիվ 10-Ն որոշմամբ

«ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամային ակտիվների ռիսկի կշիռներով կշռվող արտարժութային ակտիվների վերաբերյալ

Ձև թիվ 37

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

Հ/Հ	Պարտապանի անվանումը	Աննշագիր	ՀՎՀՀ/ՀԾՀ	Ակտիվի հաշվեկշռային արժեք	Ակտիվի ճշգրիչների կորուստների պահուստ	Ակտիվի տեսակ	Տվյալ ակտիվի գծով ռիսկի կշիռ		Ռիսկով կշռվելիք գումարի չափը
							ըստ մոդելի	ըստ օրենքի	
1	2	3	4	5	6	7	8	9	10
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0
									0

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Գլխավոր հաշվապահ _____ »

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 534-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել գրավատների կողմից ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվությունը,

հիմք ընդունելով «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը» հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 փետրվարի 2015 թ., N 11-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի փետրվարի 10-ի թիվ 11-Ն որոշմամբ

«Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 534-Ն որոշմամբ

ԳՐԱՎԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Գ Լ ՈՒ Խ Ի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գրավատների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման կարգը:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. փետրվարի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.02.2015 թ. (ՀՀԳՏ N6 (518), 2.03.2015):

Գ Լ ՈՒ Խ II

ԳՐԱՎԱՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Գրավատները Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների հետևյալ ձևերը նշված պարբերականությամբ.

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	Վարկային միջոցների ընդհանուր ծավալի, տեղաբաշխված վարկերի, գրավի առարկաների և ի պահ ընդունված գույքի գնահատված արժեքի, ներգրավված միջոցների՝ յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ մնացորդի վերաբերյալ	1	ամսական
2	Տեղաբաշխված վարկերի և այլ ակտիվների, սեփական ու ներգրավված միջոցների և այլ պարտավորությունների, ինչպես նաև գրավի առարկաների վերաբերյալ	2	եռամսյակային

Գ Լ ՈՒ Խ III

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Գրավատնային գործունեություն իրականացնող անձինք սույն կարգով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում էլեկտրոնային տարբերակով՝ Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերով, որոնք փոփոխելն արգելվում է, ընդ որում՝ Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերը պետք է վավերացված լինեն Կենտրոնական բանկի կողմից տրամադրված գրավատան էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները ներկայացվում են Կենտրոնական բանկ ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Սույն կետում նշվածից բացի այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ ամսական և եռամսյակային հաշվետվություններում նշվում է ամսվա վերջին օրվա ամսաթիվը): Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր/ամիս/տարի (օրինակ՝ 31/01/2006): Եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը համընկնում է գրավատան ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվությունների կազմման համար հիմք են ընդունվում այդ օրվան նախորդող վերջին աշխատանքային օրվա տվյալները:

Հաշվետվությունների մեջ դրամական միավորները արտահայտվում են հազար դրամով:

Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:

4. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները հնարավոր է ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, և նրանք չունեն ծրագրային կամ տեխնիկական թերություններ: Սույն կետի պահանջը չի տարածվում գրավատների վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում: «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ զուգահեռաբար հաշվետվությունների փոփոխման (ճշգրտման) վերաբերյալ գրավոր տեղեկացնելով Կենտրոնական բանկի նախագահին: Ճշգրտված հաշվետվության էլեկտրոնային տարբերակների և գրավոր տեղեկանքի առկայության դեպքում միայն փոփոխված հաշվետվությունները համարվում են Կենտրոնական բանկ ներկայացված:

5. Կենտրոնական բանկի գրավատների վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման համապատասխան վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական նպատակներից ելնելով՝ ծանուցման միջոցով գրավատներից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

Հաշվի առնելով գրավատան գտնվելու վայրը՝ գրավատանը ծանուցումը կարող է տրվել նաև հեռախոսի (հեռախոսագրի) միջոցով:

Գրավատունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում (եթե ծանուցման մեջ այլ ժամկետ նշված չէ) ծանուցմամբ պահանջվող պարզաբանումները և (կամ) այլ տեղեկատվությունը ներկայացնել Կենտրոնական բանկ:

6. Հաշվետվությունները մագնիսական կրիչներով կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են:

Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

Գրավատնային գործունեություն իրականացնող անձի կոդը	գծիկ	հաշվետվության համարը	կետ	հապավումը
↓	↓	↓	↓	↓
XXXXX-XX	-	XX	.	xls

Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

7. Չև թիվ 1 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կերպ՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի.

Հաշվետվությունը կազմվում է օրվա վերջի դրությամբ գրավատանն առկա տվյալների համաձայն:

1-ին սյունակում լրացված է ամսվա հերթական օրը:

2-րդ սյունակում լրացվում է գրավատան տրամադրած վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների գնահատված արժեքի մնացորդը՝ օրվա վերջի դրությամբ (Գր.օր.մն.) (այդ թվում՝ նաև իրացման ենթակա գրավի առարկաների արժեքը), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Գր.օր.մն.=Գր.նախ.օր.մն.+Գր.ստ.օր-Գր.վեր.օր.,

որտեղ՝

Գր.նախ.օր.մն.-ը գրավատան կողմից տրամադրված վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների մնացորդն է՝ նախորդ օրվա վերջի դրությամբ:

Գր.ստ.օր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում տրամադրված վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների գնահատված արժեքն է:

Գր.վեր.օր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում մարված վարկերի դիմաց վերադարձված գրավի առարկաների և տվյալ օրվա ընթացքում վաճառված գրավի արժեքների հանրագումարն է:

3-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից տրամադրված վարկերի մնացորդը՝ տվյալ օրվա վերջի դրությամբ (Վրկ.օր.մն.), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Վրկ.օր.մն. = Վրկ.նախ.օր.մն. + Վրկ.օր.տր- Վրկ.օր.մար.,

որտեղ՝

Վրկ.նախ.օր.մն.-ը գրավատան կողմից տրամադրված ընդհանուր վարկերի մնացորդն է նախորդ օրվա վերջի դրությամբ:

Վրկ.օր.տր.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում տրամադրված վարկերի հանրագումարի չափն է:

Վրկ.օր.մար.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում կատարված վարկերի մարումների (ներառյալ՝ գրավի իրացման ճանապարհով մարված վարկերի, ինչպես նաև գրավատան կողմից ներված կամ զիջված վարկերի) հանրագումարն է:

4-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից ի պահ ընդունված արժեքների մնացորդը օրվա վերջի դրությամբ (Պ.օր.մն.) (այդ թվում՝ նաև իրացման ենթակա ի պահ ընդունված արժեքները), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Պ.օր.մն. = Պ.նախ.օր.մն. + Պ.ստ.օր - Պ.վեր.օր.,

որտեղ՝

Պ.նախ.օր.մն.*-ը գրավատան կողմից ի պահ ընդունված արժեքների մնացորդն է՝ նախորդ օրվա վերջի դրությամբ:*

Պ.ստ.օր*.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում ի պահ ընդունված առարկաների արժեքն է:*

Պ.վեր.օր*.-ը գրավատան կողմից տվյալ օրվա ընթացքում վերադարձված և վաճառված ի պահ ընդունված արժեքների հանրագումարն է:*

5-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից գրավ ընդունված գույքի և ի պահ ընդունված գույքի ապահովագրական գումարի չափը՝ տվյալ օրվա վերջի դրությամբ (բացառությամբ՝ բեռնափոխադրումների ապահովագրության գումարի):

6-րդ սյունակում լրացվում է գրավատան դրամական միջոցների ընդհանուր գումարը՝ տվյալ օրվա վերջի դրությամբ, որը գրավատան կանխիկ դրամական միջոցների և բանկային հաշիվների հանրագումարն է:

7-րդ սյունակում լրացվում է գրավատան կողմից ներգրավված դրամական միջոցների ընդհանուր գումարը տվյալ օրվա վերջի դրությամբ:

Եթե գրավատունը միջոցներ է ներգրավել արտարժույթով, ապա հաշվետվությունում ներգրավված միջոցներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված տվյալ օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հայտարարած համապատասխան արտարժույթի փոխարժեքով:

Եթե գրավատան կողմից վարկառուի պարտավորությունները չկատարելու դեպքում գրավադրված (պահատվության հանձնված) իրացման ենթակա գույքի վաճառքի ամսաթիվը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, գրավատունը 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակներում փոփոխությունն իրականացնում է գրավադրված (պահատվության հանձնված) գույքը սահմանված կարգով իրացնելու դեպքում գույքի իրացումից (վաճառքից) գոյացած և գրավատան օգտին գանձման ենթակա գումարները գրավատան դրամարկղ մուտքագրելու ամսաթվին:

8. Չև թիվ 2 հաշվետվությունը բաղկացած է երկու էջից (ֆայլով՝ երկու շիթից), որոնք լրացվում են հետևյալ կերպ՝ համաձայն սույն կարգի Հավելված 2-ի.

Հաշվետվության առաջին էջի աղյուսակը կազմվում է հաշվետու և նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ՝ գրավատանն առկա տվյալների համաձայն:

Առաջին էջի աղյուսակի 3-րդ և 4-րդ սյունակների.

1-ին տողում լրացվում է 2, 3, 4, 5, 6 տողերի հանրագումարը:

2-րդ տողում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գրավատան կողմից տրամադրված գործող վարկերի մնացորդները (գործող են համարվում այն վարկերը, որոնք մարված չեն, և որոնց ապահովվածություն հանդիսացող գրավը իրացված չէ):

2.1 տողում լրացվում են բոլոր երկարաձգված վարկերը, որոնք գործել են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ (երկարաձգված են համարվում այն վարկերը, որոնց գծով իրականացվող մարումների ժամկետները երկարաձգվել են): Ընդ որում՝ երկարաձգված վարկը ժամկետանց դառնալու դեպքում վարկի գումարն արտացոլվում է միայն 2.2 տողում:

2.2 տողում լրացվում է գրավատան ժամկետանց վարկերի ընդհանուր գումարը (ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնք պայմանագրով սահմանված ժամկետում չեն մարվել կամ երկարաձգվել):

3-րդ տողում լրացվում են գրավատան կողմից տրամադրված վարկերի դիմաց հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված և դեռևս չստացված տոկոսները:

3.1 տողում լրացվում են գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված վարկերի դիմաց հաշվեգրված և չստացված տոկոսները:

4-րդ տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գրավատան դրամարկղի մնացորդը:

5-րդ տողում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գրավատան բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդները:

6-րդ տողում լրացվում է գրավատան բոլոր այն ակտիվների գումարը, որոնք չեն ընդգրկվել 2, 2.1, 2.2, 3, 3.1, 4, 5 տողերում:

7-րդ տողում լրացվում է գրավատան և քաղաքացիների միջև կնքված հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող վարկային պայմանագրերի թիվը (այդ թվում՝ նաև ժամկետանց պայմանագրերը):

7.1 տողում լրացվում է գրավատան և քաղաքացիների միջև կնքված երկարաձգված վարկային պայմանագրերի թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ: Ընդ որում՝ այն վարկային պայմանագրերը, որոնք երկարաձգվելուց հետո դառնում են ժամկետանց, արտացոլվում են միայն 7.2 տողում:

7.2 տողում լրացվում է գրավատան և քաղաքացիների միջև կնքված ժամկետանց վարկային պայմանագրերի թիվը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

8-րդ տողում լրացվում է 9, 10, 11 տողերի հանրագումարը:

9-րդ տողում լրացվում է 9.1, 9.2 և 9.3 տողերի հանրագումարը:

9.1 տողում լրացվում են բանկերից և վարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների մնացորդները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

9.2 տողում լրացվում են գրավատան մասնակիցներից ներգրավված միջոցների մնացորդները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

9.3 տողում լրացվում են այլ կազմակերպություններից ներգրավված միջոցների մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

Եթե գրավատունը միջոցներ է ներգրավել արտարժույթով, ապա հաշվետվությունում ներգրավված միջոցներն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հայտարարած համապատասխան արտարժույթի փոխարժեքով:

10-րդ տողում լրացվում են գրավատան կողմից ներգրավված միջոցների դիմաց հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված և դեռևս չվճարված տոկոսները:

10.1 տողում լրացվում են գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ներգրավված միջոցների դիմաց հաշվեգրված և դեռևս չվճարված տոկոսները:

11-րդ տողում լրացվում են գրավատան այն պարտավորությունները, որոնք չեն ընդգրկվել 9-րդ և 10-րդ տողերում:

12-րդ տողում լրացվում է 12.1, 12.2, 12.3, 12.4 տողերի հանրագումարը:

12.1 տողում լրացվում է գրավատան կանոնադրական կապիտալի մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

12.2 տողում լրացվում է գրավատան շահույթը (վնասը) հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ: Լրացվում է աճողական կարգով՝ ֆինանսական տարվա սկզբից:

12.2.1 տողում լրացվում է գրավատան՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված շահույթը:

12.3 տողում լրացվում է գրավատան գլխավոր պահուստ մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

12.4 տողում լրացվում են սեփական կապիտալի այլ (որոնք չեն ընդգրկվել 12.1, 12.2, 12.3 տողերի մեջ) տարրերը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

13-րդ տողում լրացվում է գրավատան կողմից տրամադրված վարկերի դիմաց ընդունված գրավի առարկաների գնահատված ընդհանուր արժեքը (բացառությամբ իրացման ենթակա գրավի արժեքի) հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (13.1 տող), փոխադրամիջոցների (13.2 տող), կենցաղային տեխնիկայի (13.3 տող) և այլ շարժական գույքի (13.4 տող) արժեքների հանրագումարը:

14-րդ տողում լրացվում է գրավատան կողմից ի պահ ընդունված գույքի ընդհանուր արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ (բացառությամբ իրացման ենթակա ի պահ ընդունված գույքի ընդհանուր արժեքի), որը ներառում է՝ ոսկերչական իրերի (14.1 տող), փոխադրամիջոցների (14.2 տող), կենցաղային տեխնիկայի (14.3 տող) և այլ շարժական գույքի (14.4 տող) արժեքների հանրագումարը:

15-րդ տողում լրացվում է գրավատան իրացման ենթակա գրավի առարկաների գնահատված ընդհանուր արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (15.1 տող), փոխադրամիջոցների (15.2 տող), կենցաղային տեխնիկայի (15.3 տող) և այլ շարժական գույքի (15.4 տողի 4-րդ սյունակ) արժեքների հանրագումարը:

16-րդ տողում լրացվում է գրավատան իրացման ենթակա ի պահ ընդունված գույքի ընդհանուր արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (16.1 տող), փոխադրամիջոցների (16.2 տող), կենցաղային տեխնիկայի (16.3 տող) և այլ շարժական գույքի (16.4 տող) արժեքների հանրագումարը:

Սույն կարգի իմաստով՝ իրացման ենթակա գրավ է համարվում գրավի այն առարկան, որի բռնագանձման մասին պարտապանը ծանուցվել է:

Հաշվետվության երկրորդ էջի աղյուսակը կազմվում է հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների դրությամբ գրավատանն առկա տվյալների համաձայն:

Երկրորդ էջի աղյուսակի 3-րդ և 4-րդ սյունակների.

1-ին տողում լրացվում է գրավատան կողմից մեկ վարկային պայմանագրով տրամադրված գործող վարկի առավելագույն գումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

2-րդ տողում լրացվում է գրավատան կողմից մեկ վարկային պայմանագրով տրամադրված գործող վարկի նվազագույն գումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

3-րդ տողում լրացվում է գրավատան կողմից տրամադրված գործող վարկերի առավելագույն տարեկան տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

4-րդ տողում լրացվում է գրավատան կողմից տրամադրված գործող վարկերի նվազագույն տարեկան տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

5-րդ տողում լրացվում է գրավատան կողմից տրամադրված գործող վարկերի առավելագույն պայմանագրային ժամկետը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ արտահայտված օրերով (եթե հաշվետու ժամանակաշրջանում տեղի է ունեցել վարկային պայմանագրերի երկարաձգում, որոնց երկարաձգման ժամկետներն ավելի երկար են, քան տվյալ պահին գործող առավելագույն ժամկետով պայմանագիրը, ապա լրացվում է երկարաձգված վարկի ժամկետը):

6-րդ տողում լրացվում է գրավատան կողմից տրամադրված գործող վարկերի նվազագույն պայմանագրային ժամկետը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ արտահայտված օրերով:

7-րդ տողում լրացվում է գրավատան կողմից գործող ներգրավված դրամական միջոցների, այդ թվում՝ վարկային գծի օգտագործված մասի առավելագույն տարեկան տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

8-րդ տողում լրացվում է գրավատան կողմից գործող ներգրավված դրամական միջոցների, այդ թվում՝ վարկային գծի օգտագործված մասի նվազագույն տարեկան տոկոսադրույքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:

9-րդ տողում լրացվում է գրավատան կողմից գործող ներգրավված միջոցների, այդ թվում՝ վարկային գծի օգտագործված մասի առավելագույն ժամկետը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրու-

թյամբ՝ արտահայտված օրերով: Եթե գրավատունը միջոցները ներգրավել է անժամկետ, ապա հաշվետվությունում լրացվում է «անժամկետ» բառը:

10-րդ տողում լրացվում է գրավատան կողմից գործող ներգրավված միջոցների, այդ թվում՝ վարկային գծի օգտագործված մասի նվազագույն ժամկետը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ արտահայտված օրերով: Եթե գրավատունը միջոցները ներգրավվել է անժամկետ, ապա հաշվետվությունում լրացվում է «անժամկետ» բառը:

11-րդ տողում լրացվում է գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գրավի առարկաների իրացումից ստացված հասույթը, որը ներառում է՝ ոսկերչական իրերի (11.1 տող), փոխադրամիջոցների (11.2 տող), կենցաղային տեխնիկայի (11.3 տող) և այլ շարժական գույքի (11.4 տող) իրացումից ստացված հասույթների հանրագումարը:

12-րդ տողում լրացվում է գրավի առարկաների իրացումից ստացված հասույթի և վարկերի (ներառյալ՝ տոկոսագումարները և տույժերը) մարմանն ուղղված գումարների դրական կամ բացասական տարբերությունը:

13-րդ տողում լրացվում են գրավատան կողմից հաշվետու ժամանակաշրջանում վարկերի դիմաց փաստացի ստացված տոկոսները, որոնք մուտքագրվել են դրամարկղ կամ բանկային հաշվին:

14-րդ տողում լրացվում են գրավատան կողմից ներգրավված միջոցների, այդ թվում՝ վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվետու ժամանակաշրջանում փաստացի վճարված տոկոսները, որոնք ելքագրվել են դրամարկղից կամ բանկային հաշվից:

Հավելված 1
«Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը»

Ձև թիվ 1
(ամսական)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԻ, ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ, ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ Ի ՊԱՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔԻ, ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՕՐՎԱ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՄՆԱՑՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրավատան անվանումը _____
Ամսաթիվը _____ *թ.*

(հազար դրամ)

Հաշվետու ամսվա հերթական օրը	Գրավի առարկաների գնահատված արժեքը	Տրամադրված վարկերի ընդհանուր գումարը	Ի պահ ընդունված առարկաների արժեքը	Ապահովագրական գումարի չափը	Դրամական միջոցների ընդհանուր ծավալը	Ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը
1	2	3	4	5	6	7
1						
2						
3						
4						
5						
6						
7						
8						
9						
10						
11						
12						
13						
14						
15						
16						
17						
18						
19						
20						
21						
22						
23						
24						
25						
26						
27						
28						
29						
30						
31						

Հանձնման ամսաթիվ _____ *թ.*

Գրավատան տնօրեն _____
Կ.Տ. *Գլխավոր հաշվապահ* _____

Հավելված 2
«Գրավատնային գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը և լրացման կարգը»

Ձև թիվ 2
(եռամսյակային)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐԻ, ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԱՐՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրավատան անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ.*

(հազար դրամ)

Հ/հ	Ցուցանիշների անվանումը	Նախորդ ժամանա-կաշրջանում	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ
1	2	3	4
1	Ընդհանուր ակտիվներ		
2	Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալ, այդ թվում՝		
2.1	Երկարաձգված վարկերի ընդհանուր ծավալ		
2.2	Ժամկետանց վարկերի ընդհանուր ծավալ		
3	Տրամադրված վարկերի դիմաց հաշվեգրված տոկոսներ, այդ թվում՝		
3.1	Հաշվետու ժամանակաշրջանում տրամադրված վարկերի դիմաց հաշվեգրված տոկոսներ		
4	Դրամարկղի մնացորդ		
5	Բանկային հաշիվներում դրամական միջոցների գումար		
6	Այլ ակտիվներ		
7	Վարկային պայմանագրերի ընդհանուր թիվը, այդ թվում՝		
7.1	Երկարաձգված վարկային պայմանագրերի թիվը		
7.2	Ժամկետանց վարկային պայմանագրերի թիվը		
8	Ընդհանուր պարտավորություններ		
9	Ներգրավված դրամական միջոցների ընդհանուր գումար, այդ թվում՝		
9.1	Բանկերից/վարկային կազմակերպություններից ներգրավված միջոցներ		
9.2	Մասնակիցներից ներգրավված միջոցներ		
9.3	Այլ կազմակերպություններից ներգրավված միջոցներ		
10	Ներգրավված միջոցների դիմաց հաշվեգրված տոկոսներ, այդ թվում՝		
10.1	Հաշվետու ժամանակաշրջանում ներգրավված միջոցների դիմաց հաշվեգրված տոկոսներ		
11	Այլ պարտավորություններ		
12	Սեփական կապիտալ, այդ թվում՝		
12.1	Կանոնադրական կապիտալ		
12.2	Շահույթ/վնաս, այդ թվում՝		
12.2.1	Հաշվետու ժամանակաշրջանում ստացված շահույթ		
12.3	Գլխավոր պահուստ		
12.4	Սեփական կապիտալի այլ տարրեր		
13	Գրավ ընդունված առարկաների ընդհանուր արժեք, այդ թվում՝		
13.1	ոսկերչական իրեր		
13.2	փոխադրամիջոցներ		
13.3	կենցաղային տեխնիկա		
13.4	այլ շարժական գույք		
14	Ի պահ ընդունված առարկաների ընդհանուր արժեք, այդ թվում՝		
14.1	ոսկերչական իրեր		
14.2	փոխադրամիջոցներ		
14.3	կենցաղային տեխնիկա		
14.4	այլ շարժական գույք		
15	Իրացման ենթակա գրավի առարկաների ընդհանուր արժեք, այդ թվում՝		
15.1	ոսկերչական իրեր		
15.2	փոխադրամիջոցներ		
15.3	կենցաղային տեխնիկա		
15.4	այլ շարժական գույք		
16	Իրացման ենթակա ի պահ ընդունված գույքի ընդհանուր արժեք, այդ թվում՝		
16.1	ոսկերչական իրեր		
16.2	փոխադրամիջոցներ		
16.3	կենցաղային տեխնիկա		
16.4	այլ շարժական գույք		

Հանձնման ամսաթիվ _____ *թ.*

Գրավատան տնօրեն _____

Կ.Տ. *Գլխավոր հաշվապահ* _____

Ձև թիվ 2
(շարունակություն)

(հազար դրամ)

Հ/հ	Ցուցանիշների անվանումը	Նախորդ ժամանակա-շրջանում	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ
1	2	3	4
1	Մեկ վարկային պայմանագրով տրամադրված վարկի առավելագույն ծավալ		
2	Մեկ վարկային պայմանագրով տրամադրված վարկի նվազագույն ծավալ		
3	Տրամադրված վարկերի առավելագույն տարեկան տոկոսադրույք		
4	Տրամադրված վարկերի նվազագույն տարեկան տոկոսադրույք		
5	Տրամադրված վարկերի առավելագույն ժամկետ		
6	Տրամադրված վարկերի նվազագույն ժամկետ		
7	Ներգրավված դրամական միջոցների առավելագույն տարեկան տոկոսադրույք		
8	Ներգրավված դրամական միջոցների նվազագույն տարեկան տոկոսադրույք		
9	Ներգրավված դրամական միջոցների առավելագույն ժամկետ		
10	Ներգրավված դրամական միջոցների նվազագույն ժամկետ		
11	Գրավի առարկաների իրացումից ստացված հասույթ,այդ թվում՝		
11.1	ոսկերչական իրեր		
11.2	փոխադրամիջոցներ		
11.3	կենցաղային տեխնիկա		
11.4	այլ շարժական գույք		
12	Գրավի առարկաների իրացումից ստացված հասույթի և վարկերի (ներառյալ՝ տոկոսագումարները և տույժերը) մարմանն ուղղված գումարների դրական և բացասական տարբերությունը		
13	Տրամադրված վարկերի դիմաց փաստացի ստացված տոկոսները		
14	Ներգրավված դրամական միջոցների դիմաց փաստացի վճարված տոկոսները		

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել ապահովագրական ընկերությունների գործունեության նկատմամբ վերլուծական և վիճակագրության հավաքագրման գործընթացների արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե», «իա» կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/04) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/04-ի 4-րդ կետի աղյուսակի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

6	Հաշվետվություն ապահովագրական ծառայություններ սպառող ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ	6	եռամսյակային

2) Կանոնակարգ 3/04-ի Գլուխ 6-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՊԱՌՈՂ ՌԵԶԻԴԵՆՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ և ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

98. Թիվ 6 հաշվետվությունը բաղկացած է 4 աղյուսակից: Սույն հաշվետվության աղյուսակներում արտացոլվում են ապահովագրական ծառայություններ սպառող ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց գծով հաշվեգրած ապահովագրավճարների, վաստակած ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների և ապահովագրական գումարների մեծություններն ըստ ապահովագրության յուրաքանչյուր դասի:

99. Իրավաբանական անձ ապահովադիրների համար վերոնշյալ մեծությունները որոշվում են՝ կախված, թե տվյալ իրավաբանական անձ ապահովադիրը տնտեսության որ ճյուղում է իրականացնում իր գործունեությունը և լրացվում են համապատասխան սյունակում:

100. Ֆիզիկական անձ ապահովադիրների համար վերոնշյալ մեծությունները լրացվում են (ֆիզիկական անձ) սյունակում:

101. Թիվ 6 հաշվետվության 1-ին աղյուսակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրած ապահովագրավճարների և հաշվեգրած վերաապահովագրավճարների մեծությունները:

101.1. Թիվ 6 հաշվետվության 1.1 աղյուսակում լրացվում են ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությունները, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՎԱ=Ա-Դ-ՉԱՊ_{փոփ}$$

Որտեղ՝

ՎԱ - հաշվետու եռամսյակի ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությունն է՝ ապահովագրության տվյալ դասի գծով

Ա - ապահովագրության տվյալ դասի գծով հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների և հաշվեգրված ապահովագրավճարներում վերաապահովագրողի մասնաբաժնի տարբերությունն է

Դ - հաշվետու եռամսյակի ընթացքում դադարեցված պայմանագրերի գծով վերադարձվող ապահովագրավճարների և այդ գումարներում վերաապահովագրողի մասնաբաժնի տարբերությունն է

$ՉԱՊ_{փոփ}$ չվաստակած ապահովագրավճարների պահուստի (նվազեցված պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով) փոփոխությունն է հաշվետու եռամսյակի ընթացքում, որը հավասար է հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ և հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ սույն կանոնակարգի համաձայն հաշվարկված չվաստակած ապահովագրավճարների պահուստի տարբերությանը՝ նվազեցված այդ պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. փետրվարի 10-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.02.2015 թ. (ՀՀԳՏ N7 (519), 16.03.2015):

101.2. Թիվ 6 հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրած ապահովագրական հատուցումների և վերաապահովագրողների մասնակցության չափը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումներում:

101.3. Թիվ 6 հաշվետվության 3-րդ աղյուսակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների և հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներում վերաապահովագրողների մասնակցության չափի մեծությունները (վերաապահովագրական գումարները):

101.4. Իրավաբանական անձ ապահովադիրների տնտեսական գործունեության ճյուղային դասակարգումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 874-Ն հրամանով հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի»: Հաշվետվության մեջ օգտագործված գործունեության հիմնական խմբերը համապատասխանում են դասակարգչում օգտագործված խմբերին և ներկայացվում են հետևյալ կերպ.

1) ***Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն.*** Այս խումբն ընդգրկում է բուսական և կենդանական բնական պաշարների շահագործումը: Բաժինը ներառում է մշակաբույսերի աճեցումը, անասնաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղացիական տնտեսություններում կամ բույսերի հավաքումը և կենդանիների որսը բնական միջավայրում:
2) ***Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում.*** Այս խումբը ներառում է բնության մեջ հանդիպող պինդ ապարների և հանքանյութերի արդյունահանումը բոլոր եղանակներով:
3) ***Մշակող արդյունաբերություն.*** Մշակող արդյունաբերության խմբում դասվող տնտեսական միավորներն իրականացնում են տնտեսության այլ ճյուղերի (գյուղատնտեսություն, հանքագործական արդյունաբերություն և այլն) կողմից արտադրվող արտադրանքի, նյութերի բաղադրիչների ձևափոխում, նորոգում, վերականգնում:
4) ***Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում.*** Տվյալ խմբում ներառվում է էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը արդյունաբերական կազմակերպություններին և բնակելի զանգվածներին:
5) ***Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում.*** Այս խումբը ներառում է ջրամատակարարումը, կոյուղու, ջրահեռացման և պինդ ու ոչ պինդ թափոնների հավաքման և վերամշակման հետ կապված գործունեությունը:
6) ***Շինարարություն.*** Այս խմբում ներառվում են նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման հետ կապված աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից շենքերի և ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինհրապարակներում:
7) ***Մեծածախ և մանրածախ առևտուր.*** Ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում: Այս խմբում ներառվում են ցանկացած ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուրը (ապրանքի վաճառք առանց ձևափոխման) և ապրանքների վաճառքին բնորոշ ծառայությունների մատուցումը:
8) ***Փոխադրումներ և պահեստային տնտեսություն.*** Այս խումբը ներառում է մարդատար և բեռնատար տրանսպորտային միջոցների գործունեությունը, խողովակաշարերով փոխադրումները, ուղևորների և բեռների տերմինալների շահագործումը, բեռների մշակումը, պահպանումը, ինչպես նաև փոստային ծառայությունները:
9) ***Կացության և հանրային սննդի կազմակերպում.*** Այս խումբը ներառում է կարճաժամկետ բնակության համար հաճախորդներին բնակատեղերի տրամադրման և/կամ տեղում սպառման նպատակով սննդամթերքի և խմիչքների պատրաստումը և վաճառքը (օրինակ՝ ռեստորաններ, սրճարաններ, հյուրանոցներ և այլն): Խմբում չեն ներառվում ամսական կամ տարեկան ժամկետներով բնակարանների վարձակալության տրամադրումը և կերակրատեսակների ու խմիչքների պատրաստումը և վաճառքը, որոնք նախատեսված չեն տեղում սպառման համար:
10) ***Տեղեկատվություն և կապ.*** Այս խումբը ներառում է տեղեկատվության փոխանցման հաղորդակցման ուղիների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի գործունեությունը, տվյալների կամ այլ տեղեկատվության մշակման ծառայությունները:
11) **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն.** Այս խմբում ներառվում է առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը (վճարահաշվարկային կազմակերպություններ, գրավատներ, արտարժույթի դիլերային-բրոքերային

գործունեություն իրականացնողներ, այլ բրոքերային ու դիլերային գործունեություն իրականացնողներ, ապահովագրական միջնորդներ և այլն): Այս բաժնում չեն ներառվում Կենտրոնական բանկի հետ իրականացված գործառնությունները:

12) ***Անշարժ գույքի հետ կապված գործունեություն.*** Այս խումբը ներառում է անշարժ գույքի առք և վաճառքը, վարձակալության տրամադրումը, գնահատումը:
13) ***Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն.*** Այս խումբը ներառում է համապատասխան մասնագիտական որակավորման, գիտելիքների և հմտությունների օգնությամբ սպառողներին ծառայությունների մատուցումը, վերլուծական և հետազոտական աշխատանքների իրականացումը:
14) ***Վարչարարական և օժանդակ գործունեություն.*** Այս խումբը ներառում է գործունեության բոլոր այն տեսակները, որոնք օժանդակում են հիմնական տնտեսական գործունեությանը: Նախորդ խմբից այս խումբը տարբերվում է նրանով, որ այս խմբի գործունեության հիմնական նպատակը մասնագիտական գիտելիքի փոխանցումը չէ: Այս խմբում ներառվում են վարձույթը և լիզինգը, զբոսաշրջային գործակալությունների գործունեությունը և այլն:
15) ***Պետական կառավարում և պաշտպանություն.*** Պարտադիր սոցիալական ապահովություն: Այս հատվածը ներառում է պետական կառավարման բնագավառում գործունեությունը: Ներառվում է պետական կենտրոնական, մարզային և համայնքային կառույցներում ներգրավված կազմակերպությունների գործունեությունը: Այն ներառում է ընդհանուր պետական կառավարման և սոցիալական ու տնտեսական քաղաքականության ոլորտների հսկումը, պաշտպանության, արդարադատության, ոստիկանության, հարկադրման, միջազգային հարաբերությունների ոլորտներում կառավարական ծրագրերի կառավարումը:
16) ***Կրթություն.*** Այս խումբը ներառում է տարբեր մակարդակների կրթություն և ցանկացած մասնագիտական ուսուցում:
17) ***Առողջապահություն.*** Այս խումբը ներառում է առողջապահական բնագավառում գործունեությունը և ծառայությունների մատուցումը:
18) ***Մշակույթ, զվարճություն, հանգիստ.*** Այս խումբը ներառում է մշակույթի, սպորտի, հանգստի և զվարճությունների բնագավառում հասարակությանը մատուցվող ծառայությունները:
19) ***Սպասարկման այլ ծառայություններ.*** Այս բաժինը ներառում է անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեությունը, համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգումը և ուրիշ խմբավորումներում չներառված այլ անհատական ծառայությունների մատուցումը:»:

3) Կանոնակարգ 3/04-ի Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մայիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
12 փետրվարի 2015 թ., N 12-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի փետրվարի 10-ի թիվ 12-Ն որոշմամբ

«Հավելված 6
«Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04 հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՊԱՌՈՂ ՌԵԶԻԴԵՆՏ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եռամսյակային

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ

Ապահովագրական ընկերության անվանումը _____
Ամսաթիվը _____ *թ.*

Ապահովագրության դաս		Կյանքի ապահովագրություն, բացառությամբ ներդրումային ապահովագրության		Ներդրումային ապահովագրության		Նպաստների վճարում		Ռիսկային ապահովագրություն, որտեղ ապահովագրողը չի հանդիսանում վճարունակության լուծարման գործընթացի մասնակից		Ներդրումային ապահովագրության, որտեղ ապահովագրողը վճարունակության լուծարման գործընթացի մասնակից		Համակցված	
		Ապահովագրության պայմանագրերի քանակը	Ապահովագրավճարների գումարը, հազ. դրամ	Ապահովագրության պայմանագրերի քանակը	Ապահովագրավճարների գումարը, հազ. դրամ	Ապահովագրության պայմանագրերի քանակը	Ապահովագրավճարների գումարը, հազ. դրամ	Ապահովագրության պայմանագրերի քանակը	Ապահովագրավճարների գումարը, հազ. դրամ	Ապահովագրության պայմանագրերի քանակը	Ապահովագրավճարների գումարը, հազ. դրամ	Ապահովագրության պայմանագրերի քանակը	Ապահովագրավճարների գումարը, հազ. դրամ
1		*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*
1	**Ոչ կյանքի ապահովագրություն, այդ թվում՝**												
1.1	Դժբախտ պատահարներից ապահովագրություն												
1.2	Առողջության ապահովագրություն												
1.3	Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն												
1.4	Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն												
1.5	Օդանավերի ապահովագրություն												
1.6	Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն												
1.7	Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն												
1.8	Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն												
1.9	Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն												
1.9.1	այդ թվում՝ *բազմաբնակարան շենքերի բնակարանների և առանձնատների ապահովագրություն*												
1.10	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն												
1.11	Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն												
1.12	Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն												

1.13	Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն												
1.14	Վարկի ապահովագրություն												
1.15	Երաշխիքի տրամադրում												
1.16	Ֆինանսական վնասների ապահովագրություն												
1.17	Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն												
1.18	Աջակցության ապահովագրություն												
1.19	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն												
2	***Կյանքի ապահովագրություն, այդ թվում՝***												
2.1	Կյանքի ապահովագրություն												
2.2	Ամուսնության, ծննդի ապահովագրություն												
2.3	Ներդրումային ակտիվներին կապվող ապահովագրություն												
2.4	Տոնտին ապահովագրություն												
2.5	Կապիտալի հատուցման ապահովագրություն												
2.6	Կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարում												
3	***ԸՆԴԱՄԵՆԸ***												

Ապահովագրական ընկերության վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____
Գլխավոր հաշվապահ _____ »

Մեծածախ և մանրածախ առևտուր: Ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում		Փոխադրումներ և պահեստային տնտեսություն		Կեցության և հանգստի կազմակերպման ծառայություններ		Տեղեկատվություն և կապ		Ֆինանսական և ապահովագրական գործունեություն		Անշարժ գույքի հետ կապված գործունեություն		Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	
ապահովագրություն	սեփական պահումներին վերաբերող մասը, դրվել է մյուս	ապահովագրություն	սեփական պահումներին վերաբերող մասը, դրվել է մյուս	ապահովագրություն	սեփական պահումներին վերաբերող մասը, դրվել է մյուս	ապահովագրություն	սեփական պահումներին վերաբերող մասը, դրվել է մյուս	ապահովագրություն	սեփական պահումներին վերաբերող մասը, դրվել է մյուս	ապահովագրություն	սեփական պահումներին վերաբերող մասը, դրվել է մյուս	ապահովագրություն	սեփական պահումներին վերաբերող մասը, դրվել է մյուս
14	*15*	*16*	*17*	*18*	*19*	*20*	*21*	*22*	*23*	*24*	*25*	*26*	*27*

(հազար դրամ)

Վարչական և օժանդակ գործունեություն		Պետական կառավարում և պաշտպանություն		Կրթություն		Առողջապահություն		Մշակույթ, զվարճություն, հանգիստ		Սպասարկման այլ ծառայություններ		Ֆիզիկական անձինք		Ընդամենը	
ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝	ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝	ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝	ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝	ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝	ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝	ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝	ապահովագրավճարներ	վերաապահովագրավճարներ այդ թվում՝
28	*29*	*30*	*31*	*32*	*33*	*34*	*35*	*36*	*37*	*38*	*39*	*40*	*41*	*42*	*43*

ԱՂՅՈՒՍԱԿ 1.1. ՎԱՍՏԱԿԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐ

	Ապահովագրության դաս	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	Մշակող արդյունաբերություն	Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	Շինարարություն	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլետների նորոգում	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
	1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	**Ոչ կյանքի ապահովագրություն, այդ թվում՝**								
1.1	Դժբախտ պատահարներից ապահովագրություն								
1.2	Առողջության ապահովագրություն								
1.3	Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն								
1.4	Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն								
1.5	Օդանավերի ապահովագրություն								
1.6	Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն								
1.7	Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն								
1.8	Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն								
1.9	Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն								

1.9.1	այդ թվում՝ *բազմաբնակարան շենքերի բնակարանների և առանձնատների ապահովագրություն*								
1.10	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն								
1.11	Օդանավերի (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն								
1.12	Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն								
1.13	Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն								
1.14	Վարկի ապահովագրություն								
1.15	Երաշխիքի տրամադրում								
1.16	Ֆինանսական վնասների ապահովագրություն								
1.17	Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն								
1.18	Աջակցության ապահովագրություն								
1.19	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն								
2	**Կյանքի ապահովագրություն, այդ թվում՝**								
2.1	Կյանքի ապահովագրություն								
2.2	Ամուսնության, ծննդի ապահովագրություն								
2.3	Ներդրումային ակտիվներին կապված ապահովագրություն								
2.4	Տոնտին ապահովագրություն								
2.5	Կապիտալի հատուցման ապահովագրություն								
2.6	Կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարում								
3	*ԸՆԴԱՄԵՆԸ*								

(հազար դրամ)

Կեցության և հանրային սննդի կազմակերպում	Տեղեկատվություն և կապ	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	Մասնագիտական,գիտական և տեխնիկական գործունեություն	Վարչական և օժանդակ գործունեություն	Պետական կառավարում և պաշտպանություն	Կրթություն	Առողջապահություն	Մշակույթ, զվարճություն, հանգիստ	Սպասարկման այլ ծառայություն	Ֆիզիկական անձինք	Ընդամենը
10	*11*	*12*	*13*	*14*	*15*	*16*	*17*	*18*	*19*	*20*	*21*	*22*

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ԳԾՈՎ

Ապահովագրության դաս		Կյանքի ապահովագրություն, բացառությամբ ներդրումային ակտիվներին կապված կյանքի ապահովագրության և տոնտինի		Հիվանդության կամ հաշմանդամության դեպքում կրած վնասի ապահովագրություն		Աշխատանքային վնասվածքի ապահովագրություն		Էներգետիկ, տրանսպորտային և այլ ռիսկերի ապահովագրություն		Տեխնիկական, ինչպես նաև ֆինանսական ռիսկերի ապահովագրություն	
		ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափի մասնաբաժինը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափի մասնաբաժինը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափի մասնաբաժինը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափի մասնաբաժինը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափը	ընդհանուր սեփական կապիտալի մեջ սեփական միջոցների չափի մասնաբաժինը
1		*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*
1	**Ոչ կյանքի ապահովագրություն, այդ թվում՝**										
1.1	Դժբախտ պատահարներից ապահովագրություն										
1.2	Առողջության ապահովագրություն										
1.3	Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն										
1.4	Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն										
1.5	Օդանավերի ապահովագրություն										
1.6	Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն										
1.7	Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն										
1.8	Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն										
1.9	Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն										
1.9.1	այդ թվում՝ *բազմաբնակարան շենքերի բնակարանների և առանձնատների ապահովագրություն*										
1.10	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն										
1.11	Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն										
1.12	Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն										
1.13	Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն										
1.14	Վարկի ապահովագրություն										
1.15	Երաշխիքի տրամադրում										
1.16	Ֆինանսական վնասների ապահովագրություն										
1.17	Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն										
1.18	Աջակցության ապահովագրություն										
1.19	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն										
2	***Կյանքի ապահովագրություն, այդ թվում՝***										
2.1	Կյանքի ապահովագրություն										
2.2	Ամուսնության, ծննդի ապահովագրություն										
2.3	Ներդրումային ակտիվներին կապվող ապահովագրություն										
2.4	Տոնտին ապահովագրություն										
2.5	Կապիտալի հատուցման ապահովագրություն										
2.6	Կուտակային կենսաթոշակային միջոցների կառավարում										
3	***ԸՆԴԱՄԵՆԸ***										

27	26	25	24	23	22	21	20	19	18	17	16	15	14	13	12
Ծրագրավորման լեզուներ և ծրագրային միջավայրեր	Ծրագրավորման լեզուներ	Տվյալների կառուցվածքներ և ալգորիթմներ	Տվյալների կառուցվածքներ	Ծրագրային ապահովման նախագծում և ինժեներական մեթոդներ	Ծրագրային ապահովման նախագծում	Տեղեկատվական համակարգեր և տվյալների բազաներ	Տվյալների բազաներ	Համակարգչային ցանցեր և տվյալների փոխանցման տեխնոլոգիաներ	Համակարգչային ցանցեր	Օպերացիոն համակարգեր և համակարգչային սարքավորումների կառուցվածք	Օպերացիոն համակարգեր	Համակարգչային գրաֆիկա և մուլտիմեդիա	Համակարգչային գրաֆիկա	Ալգորիթմների տեսություն և մաթեմատիկական մոդելավորում	Ալգորիթմների տեսություն

43	42	41	40	39	38	37	36	35	34	33	32	31	30	29	28
Ընդհանուր	Օպերացիոն համակարգեր	Համակարգչային ցանցեր և տվյալների փոխանցման տեխնոլոգիաներ	Համակարգչային գրաֆիկա	Ծրագրային ապահովման նախագծում և ինժեներական մեթոդներ	Ծրագրավորման լեզուներ	Տեղեկատվական համակարգեր և տվյալների բազաներ	Տվյալների բազաներ	Ալգորիթմների տեսություն, ծրագրավորման մեթոդներ	Ալգորիթմների տեսություն	Ծրագրավորում	Օպերացիոն համակարգեր	Համակարգչային ցանցեր և տվյալների փոխանցման տեխնոլոգիաներ	Համակարգչային գրաֆիկա և մուլտիմեդիա	Ծրագրավորման լեզուներ և ծրագրային միջավայրեր	Ընդհանուր

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ

Ապահովագրության դաս		Կյանքի ապահովագրություն, որտեղ ներդրումային ռիսկը կրում է ապահովագրողը		Հիվանդության կամ մարմնական վնասվածքների հետևանքով կրած վնասի հատուցում		Կենսաթոշակային ապահովագրություն		Էլեկտրոնային միջոցների, գործի գուշակության և այլ կոմպիուտերային համակարգերի ապահովագրություն		Ճանապարհային տրանսպորտային միջոցների վթարների հետևանքով կրած վնասի հատուցում	
		Կենդանական	Միավորված ներդրումային գումարներ	Կենդանական	Միավորված ներդրումային գումարներ	Կենդանական	Միավորված ներդրումային գումարներ	Կենդանական	Միավորված ներդրումային գումարներ	Կենդանական	Միավորված ներդրումային գումարներ
1		*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*
1	**Ոչ կյանքի ապահովագրություն, այդ թվում՝**										
1.1	Դժբախտ պատահարներից ապահովագրություն										
1.2	Առողջության ապահովագրություն										
1.3	Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն										
1.4	Երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն										
1.5	Օդանավերի ապահովագրություն										
1.6	Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն										
1.7	Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն										
1.8	Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն										
1.9	Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն										
